



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

**«ԵՐԻՏԱՍԱՐԿ ԹՈՒՐԳԻԱ»**  
**ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ**

1990 փետրուարին, Լիբանան կ'ապրէր իր տասնհինգամեայ փոփոխ ամենաթէժ օրերը: Բուռն ուժակոծութիւնները աւեր և քանդում կը սփռէին ու կը խլէին թանկագին կեանքեր:

Լարուած աշխատանքի լծուած էին հայկական կուսակցութիւնները: Գրուած էին լիբանանահայութեան որդեգրած «դրական շէջքութեան» սկզբունքը այդ հանգրուանին ևս փորձութեանէ դուրս բերելու, հայկական թաղամասերու ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու, տուժածներուն առաջնային օգնութիւն փութացնելու, ապաստանարաններու մէջ ծուարած ժողովուրդին ուտեստեղէնով, ջրով, դեղորայքով և այլ անհրաժեշտ բարիքներով ապահովելու ու այլ կենսական հարցեր:

Սոցիալ-Գեմոկրատ Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը կը դեկավարեր Լիբանանի Շրջանի Վարիչ մարմնի ատենապետ տղթէօր Գրիգոր Գալայճեան... Սակայն, զոյժ մը ցնցիչ և անակնկալ, սուգի կը մատնէր ոչ միայն Հնչակեան ընտանիքը, այլև ամբողջ լիբանանահայութիւնը: Դամասկոսի մէջ, ուր կը գտնուէր ան կուսակցական կարճ այցելութեամբ մը, սրտի տագնապի զոհ գացած էր ընկեր Գրիգոր Գալայճեան...

\* \* \*

Գ. Գալայճեան ծնած է Պէյրութ, 1950-ին: Փոքր տարիքէն կը կորսնցնէ ծնողքը: Նախնական կրթութիւնը կը ստանայ Պէյրութի «Սահակեան» և «Մխիթարեան» վարժարաններուն մէջ: Պատանի տարիքէն սէր կը ցուցաբերէ հասարակական աշխատանքներուն հանդէպ ու այդ կը դրսևորէ Հ.Մ.Մ-ի շարքերուն մէջ:

Բարձրագոյն ուսման համար կը մեկնի հայրենիք և 1983-ին կ'աւարտէ Երևանի Բժշկական ինստիտուտը, որպէս բժիշկ-ատամնաբույժ:

Հայաստան ուսանելու միջոցին և Պէյրութ վերադարձէն անմիջապէս ետք, Գ. Գալայճեան կը հանդիսանայ Հնչակյան Ուսանողական շարժման պատասխանատուներէն մին, ապա և վարչութեան ատենապետ:

Պէյրութի մէջ կը հաստատէ իր ատամնաբուժական դարմանատունը: Կամուրանայ իր գաղափարակցութիւն՝ Նազիկի հետ և կ'ունենան աղջիկ զաւակ մը, Գառնի:

Տոքթ. Գ. Գալաշեան կ'ընտրուի Կուսակցութեան Կիրանանի Շրջանի ղեկավար մարմնի անդամ, իսկ 1987-ին՝ Վարիչ մարմնի ատենապետ:

1990-ին անժամանակ կը մահանայ Դամասկոսի մէջ ու ազգային թաղումով իր յանձնարարական հանգիստը կը գտնէ տեղի հայկական գերեզմանատան Հնչակեան դամբարանին մէջ:

\* \* \*

Իր գործունէութեան ամենէն ծաղկուն շրջանին է, որ կեանքէն հեռացաւ ընկեր Գ. Գալաշեան: Ղեկավար պաշտօնի վրայ գտնուելու այն շատ կարճ տարիները բաւ էին, որ ան, իր ընկերներուն, շրջապատին ու լիբանանահայութեան համար ընդհանրապէս՝ ձգէր բարի և անմոռանալի անուն ու յիշատակ:

Իր կատարած գործին շնորհ հաւատարմութիւն էր ընկեր Գ. Գալաշեան: Փառաքական հաշուարկներու մէջ պաղարիւն և խորթաբանաց, խստապահանջ, բայց և ներողամիտ, կազմակերպչական բարձր կարողութիւններով օժտուած, ընկերասէր ու ամբողջապէս ժողովրդասէր, Հայաստանի հանդէպ սիրոյ ու երախտագիտութեան յատուկ զգացումներով տոգորուած երիտասարդ նուիրեալն էր ան, որ հեռացաւ այս կեանքէն՝ իր ետին ձգելով դեռ այնքա՛ն ընկերներ:

Վաղամեռիկ ընկերոջ յիշատակը վառ պահելու նպատակով, անոր մահուան տարեկիցին, Ս.-Գ.Հ.Կ. Կիրանանի Շրջանի Վարիչ մարմինը կը հաստատէ «Տոքթէօր Գրիգոր Գալաշեան Հրատարակչական Հիմնադրամ»ը, որուն միջոցով հրատարակ պիտի գան քաղաքական, գաղափարական, պատմական բովանդակութեամբ հրատարակութիւններ:

\* \* \*

Ստեփան Սապահ-Գիւլեանի «Երիտասարդ Թուրքիա» գրքոյկը «Տոքթէօր Գրիգոր Գալաշեան Հրատարակչական Հիմնադրամ»ին առաջին հրատարակութիւնն է:

Աշխատութիւնը լոյս տեսած է «Հնչակ» պաշտօնաթերթի 1900 թիւ 7-ի և 1901 թիւ 1, 2 և 3-ի էջերուն մէջ: Գրքոյկի ձևով հրատարակուած է 6 փետրուար 1908-ին, Փարիզի մէջ, հեղինակի իսկ կողմէ («Հրատարակութիւն Հնչակեան կուսակցութեան», թիւ 16), ինչպէս ըսուած է «Յառաջարան»ին մէջ՝ «համարեալ թէ անփոփոխ, բացի մի քանի կտոր յանելումներից, որ եղած են լոկ պարզաբանութեան տեսակէտից»: «Յառաջարան»ին մէջ Ս. Սապահ-Գիւլեան շեշտեր է.

«Մեր ընդհանուր նպատակն է եղել այս գրուածքով պատկերացնել «ԵՐԻՏԱՍԱՐԳ ԹՈՒՐԹԻԱ»ն այնպէս, որ նա երևան է եկել պատմութեան ընթացքում, ցոյց տալ Թուրքիայում ու Թուրքիայի շուրջը յուզուող խնդիրների ընդհանուր բնատրութիւնը և «Երիտասարդ Թուրքիա»յի դէպի այդ խնդիրները բռնած դիրքը: Խնդրի վրայ մենք նայել ենք բազմապէս, ազգային տեսակէտից, որովհետև «Երիտասարդ Թուրքիա» միայն այդ ուղղութեամբ են:

որոշեալ հայեցակէտեր երևան դրել և գործունէութիւն ցոյց տուել: Անշուշտ մենք չենք կարող Սօցիալ-Դէմոկրատական սկզբունքներով քննադատել մի Կուսակցութիւն, որ արդէն այդպիսին չի եղել: Խնդիրների լուսաբանութեան համար մենք պիտի ընտրէինք այն մէթոդը, որ արդէն ընտրած ենք»:

Գրքին հազուադէպ ըլլալը միակ պատճառը չէ, որ մեզ կը դնէ այս նախընտրութեան առջև: Իրենց տպագրութեան թուականով աւելի հին, իսկ այժմ նոյնքան մըն ալ անգլոստեղծ հրատարակութիւններ շատ կան, որոնց վերատպագրումը, այլապէս ալ սեպելով օգտակար գործ, կը ձգենք ապագային:

«Երիտասարդ Թուրքիա»ն մեր ուշադրութեան արժանացաւ իր ներկայացուցած շարք մը արժէքներուն պատճառով.

ա—Այն կը վերլուծէ երիտթուրքական շարժման գաղափարական ակունքներն ու քաղաքական ձգտումները, երբ տակաւին վերջիններս կը գտնուէին իրենց կազմակերպչական կազմաւորման սաղմնային վիճակին մէջ (գիրքին ձեռագիրը ամբողջացած է 1899-ին):

բ—Հեղինակը՝ Ստեփան Սապահ-Գիւլեան, եղած է ժամանակաշրջանի քաղաքական իրադարձութիւններուն գլխաւոր մասնակիցներէն: Ան երիտթուրքական շարժման գաղափարախօսութեան ծանօթացած է ոչ միայն միջնորդուած ձևով, այլև ուղղակիօրէն յարաբերելով այդ շարժման տեսարաններուն և գործիչներուն հետ, յատկապէս երբ 1896-ին գլխաւորած է Հնչակեան պատուիրակութիւնը Հնչակեան-Իթքի հատ հանդիպումներուն:

գ—Աշխատութեան մէջ երիտթուրքական շարժման գաղափարա-քաղաքական էութիւնը զուգահեռաբար կը պատկերուի Օսմանեան կայսրութեան և միջազգային քաղաքական կեանքի խմորումներուն հեռապատկերին վրայ:

դ—Օսմանեան կայսրութեան ապագային հանդեպ Ս. Սապահ-Գիւլեանի ճշգրտակազմները ընդհանրական են և կը վերաբերուին որևէ բազմազգ կայսրութեան:

\* \* \*

«Երիտասարդ Թուրքիա» աշխատութեան վերահրատարակութեամբ կը խորհինք ճոխացուցած ըլլալ հայ քաղաքական գրագրանք և հայ ընթերցասէր հասարակութեան ուշադրութիւնը անգամ մը՝ ևս բնեռել այս կարևոր ուսումնասիրութեան վրայ:

Մեր ապագայ հրատարակութիւններուն համար սիրով կ'ընդունինք առաջաբերութիւններ:

«ՏՈՔԹԷՕՐ ԳՐԻԳՈՐ ԳԱԼԱՏՃԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»Ի ՊԱՏԱՍԵԱՆԱՏՈՒ ՄԱՐՄԻՆ



ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ

# ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐՔԻԱ

Հրատարակություն

«ՏՈՒՐԿՈՒ ԳՐԻԳՈՐ ԳԱԼԱՑԾԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ»

ԵՐԵՎԱՆ — 1991



Իմ թանկագին ընկեր ԱՐԱՄ ԱԶԳՊԱՇԵԱՆԻ

Քե՛զ, թանկագին ընկե՛ր, քե՛զ եմ նուիրում գրքոյկս, քեզ՝ որ ՔՍԱՆ տարիներից ի վեր՝ քո օրինակելի գործունեութեամբ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽՈՒ-ՔԵԱՆ ռաճվիրաներից մէկն ես եղել և անձիդ վրայ տիրացուացրել՝ ազ-նի, անվեհեր և անյողողող Յեղափոխականի բոլոր շատկութիւնները:

8 Փետր. 1908

Պարիզ

Ընկերդ՝

Ս. ՍԱՂԱԼ-ԳԻՒԼԵԱՆ



I  
ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ո՛վ եմ և ի՞նչ ցանկանում երիտասարդ Թուրքերը:

— Այդ հարցին փաստօրէն պատասխանելու համար հարկաւոր է մի փոքր յետ երթալ, պատմութեան էջերը թերթել:

Թիրքիայի գոյութեան պատմութիւնը, սկզբից մինչև մեր օրերը, երեք որոշ շրջանների կարելի է բաժանել: Առաջին շրջանը՝ որ ընդգրկում է անկի բան երեք հարիւր տարուայ կեանք, Թիրքիայի սկզբնական ծագման և անման ժամանակամիջոցն է, որ սկսում է Էրթուղիլից և հասնում մինչև Վիեննայի յայտնի պաշարումը (1288—1683):

Սկզբնական այդ շրջանի մէջ՝ Օսմանի անունով յայտնի եղող փոքրիկ վաչկատուն ժողովուրդը հետզհետէ կազմակերպում, ծաւալ է ընդունում և Փոքր-Ասիայի մէջ ապրող համապէտ և օտարասեռ տարրերին իր լծի տակն առնելուց և նրանց երկիրները տիրապետելուց յետոյ՝ մտնում է յարձակո-ղական, աշխարհակալական դիրքի մէջ:

Հայաստանը՝ այդ ժամանակ պատահա՛ն-պատահա՛ն արհիւն էր որ հոսեց-նում էր:

Երոտպական փոքրիկ պետութիւնները անկազմ,—հարեան հարեանի հետ անհամերաշխ, բոլորովին անպատրաստ՝ զինուորական մի ահարկու թշնամու ընդդիմադրելու, ամէնքն էլ սարսափահար դողում էին այն աշխարհակալ բանակներից, որ անամբարտակելի հեղեղի նման հետզհետէ դէպի արեւմուտք էին ընթանում և ամէն ինչ իրենց հոսանքի մէջ առած՝ աներում, քանդում, առաջ էին քշում:

Այդ շրջանի մէջ Օսմանցին աշխարհակալ ազգի զինուորական բոլոր յատկութիւնները ցոյց տուեց: Սակայն նա միայն աշխարհակալեց, տիրապետեց, չունեցաւ, երեսն չբերեց բարձր ազգերին յատուկ քաղաքացիական այն յատկութիւնները, ընդհանուր այն կուլտուրան, որ կարող էր նրան միջոց տալ կազմակերպելու՝ օրգանական մի ամբողջութեան, մի ազգութեան վերածելու նուաճուող երկիրներն ու ժողովուրդները: Նա բացարձակապէս անկարող եղաւ տիրուող այլասեռ տարրերի մէջ փոխադարձ համերաշխութեան կապեր հաստատել՝ նրանց բոլորին իր հետ կապել և ցրած, անկերպարան մասերի ամբողջացուցիչ, շարկապող կեդրոնը դառնալ: Նա տիրել էր սրով, սուրը ձեռքին էլ շարունակեց ապրել՝ ինչպէս մի բանակած գօրախումբ, մոռանալով սակայն որ սուրը ամէն ինչ չէ,—և նա:

այդ զգաց իր պատմութեան երկրորդ շրջանի մէջ, որ այլևս շատ ուշ էր:

Երբ օսմանեան աշխարհակործան հոսանքը ամէն ինչ իր տակն առնելով՝ հասաւ Վիեննայի պարիսպներին (1683), այդտեղ բաղխեցաւ մի հաստահիմն ամբարտակի և այլևս անկարող լինելով ճեղքելու, առաջ ընթանալու, հոսանքը կանգ առաւ և յետախաղաց դիրք ընդունեց:

Անխոցելի կարծուած օսմանցու պարտութեան առաջին նշաններից խրախուսուած՝ Աւստրիան, Լեհաստանը, Վենետիկի հասարակապետութիւնը, զանազան մանր ազգութիւններ և ասպետների խմբեր այնուհետև, պարբերաբար, Օսմանցուն յետ մղելը իրենց առաջնորդող գաղափարը դարձրին:

Չանցաւ շատ ժամանակ՝ Թիւրքիայի թշնամիների բանակի մէջ երեսան եկաւ և՛ մի նոր՝ երիտասարդ, աշխարհակալական ամէն բնազդներով օժտուած ազգ՝ Ռուսիան:

Թիւրքիան այժմ իր առաջ տեսնում էր ո՛չ միայն սահմանակից պետութիւնների վերակազմուած զինուորական ոյժը, այլև նրանց մէջ կայացած համերաշխական գաղափարի մի ուրուագիծ՝ իրեն վերջնականապէս տապալելու: Պատերազմի դաշտ ի հարկին դուրս եկող բազմաթիւ զօրեղ ազգակներին այլևս անկարող լինելով դիմագրաւելու, նա իրեն համար անհրաժեշտութիւն համարեց յարձակողական դիրքից պաշտպանողականի մէջ մտնելու. նպատակ ընտրելով բաւականանալ միայն իր արդէն տիրապետած երկիրները պահպանելով:

Սակայն՝ իր պատմութեան այդ երկրորդ շրջանի նոյն իսկ սկզբի օրերից՝ ո՛չ միայն Թիւրքիան անկման բացարձակ նշաններ սկսեց ցոյց տալ, ո՛չ միայն ծաւալուող հարեան պետութիւնները կարող եղան միացած կամ առանձին առանձին իրենից ընդարձակ տարածութեամբ հողեր գրաւել, այլև նրա համար ծածուկ չմնաց և՛ այն հանգամանքը, որ իր բոլոր հին ու նոր թշնամիները իրեն գոյութիւնը փոխարինող նոր բաղկացութիւնների մասին էին խորհում: Այդ դեռ հերիք չէր: Իր բաղկացուցիչ, մեռած կարծուած ազգութիւնները հանդէս էին բերել ո՛չ միայն կենսունակութեան հաստատուն պայմաններ, ո՛չ միայն հրապարակային դժգոհութիւններ էին արտայայտում դէպի ինքը, այլև իրենց սեպհական անկախութեանը ձգտում և փրկութեան համար աչքները դէպի իր թշնամիները դարձնում:

Պարզ էր, որ այդ պայմանների տակ, թողած իր սեպհական ոյժերին, Թիւրքիան անկարող պիտի լինէր ընդդիմադրելու թէ՛ իր ներքին և թէ՛ մանաւանդ, արտաքին քայքայիչ յարանուն ազգակներին: Նրա անկումը անխուսափելի էր նկատում ամէնքի կողմից: Բայց խնդիրն այն էր՝ թէ ո՞վ, որո՞նք պիտի լինէին նրա ընդարձակ երկիրները ծառանգողները, նրա թողած բաց տեղը բռնողները: Եւ անկարող լինելով հաւաքականօրէն այդ հարցը արմատապէս լուծելու, պետութիւնները ստիպուեցան զանազան տղեգծեր, կիսամիջոցներ ընդունելու:

Ա.—Նախապէս ընդհանուր համերաշխութեան գալ իրարու հետ, միանալ և ապա բաժանել:

Բ.—Պահպանել՝ երբ ընդհանուր համաձայնութեան չէր կարելի յանգի:

Գ.—Օգնել, միջոց տալ նոր զարթոնող, Թիւրքիայի բաղկացուցիչ մասերը կազմող ազգութիւններին, որ իրենց բուն հայրենի երկիրը յետ առանան:

Ահա քաղաքական այն ընթացքը, որ զձեցին պետութիւնները Օսմանցու նկատմամբ, նրա գոյութեան երրորդ շրջանի մէջ, որ սկսում է 1815-ից մինչև մեր օրերը:

Եթէ ընդհանուր առմամբ բոլոր պետութիւնները Թիւրքիայի գոյութիւնը Եւրոպական հարասարակշռութեան համար առժամանակեայ անհրաժեշտ չարիք էին համարում, մինչև նրա բաժանման համար ընդհանուր համաձայնութեան կայանալը, սակայն կային էլ պետութիւններ, որոնք իրենց մնայուն շահի տեսակէտից ցանկանում էին տեսնել մի Թիւրքիա՝ բարեկարգուած, զորեղ և իր ուրոյն ներքին ոյժերով ապրելու կարող: Այս վերջին մտածմունքը, մասնաւորապէս, ցոյց տուին Ֆրանսիան և Անգլիան: Ահա թէ ի՛նչու այդ երկու պետութեանց ներկայացուցիչները, զանազան ժամանակներում, սրտանց աշխատեցին ամէն կարգի ճնշում ի գործ դնել թրքական պատասխանատու պաշտօնեաների և կառավարիչների վրայ՝ երկրի մէջ քաղաքական և ընկերային անհրաժեշտ բարեփոխումներ ներմուծելու՝ Թիւրքիան եւրոպականացնելու:

## II

### «ԵՐԻՏԱՍԱՐԿ ԹԻԻՐՔԻՍՏՅԻ ՄԱԿՈՒՄԸ»

Թիւրքիայի գոյութեան ներքին և արտաքին պայմանները, պետութեանց բռնած քաղաքական ընթացքը չէին կարող, հարկաւ, չազդել և՛ բուն թուրքերի վրան: Եւ արդարև, որքան որ իսլամութիւնը մարմնացնող ազգակները դարերի ընթացքում ջանացին ամէն կարգի արգելքներ հանել և թոյլ չտալ որ եւրոպական մտքի արտայայտութիւնները մուտք և ծաւալ գտնեն Խալիֆայութեան երկրների մէջ, որքան որ օսմանցի ժողովրդի բիրտ սնտիապաշտութիւնը, մոլեռանդական բնազդը աշխատեց իրեն հեռու պահել եւրոպականութիւնից—այնուամենայնիւ թէ՛ կրօնական և թէ՛ քաղաքական ներկայացուցիչ, իրենց բոլոր նեցուկներով՝ անզօր եղան պատնէշել լուսաւորութեան յառաջընթաց հոսանքը, անանցանելի պատուար քաշել քաղաքակրթութեան ծաւալման առաջ: Թուրքը՝ որ մինչև այդ ժամանակ եղած էր միայն նիւթական կոպիտ ոյժ, զուրկ ստեղծական կարողութիւնից, որ իր մտածմունքը, ներշնչումների ձեւերը, գոյնը, յաճախ առարկան իսկ, Պարսկից և Արաբից էր փոխ առած—այլևս անկարող լինելով հին ուղղութեան մէջ շրջանակուելու, անհրաժեշտութիւն նկատեց գլուխ ծռել պատմութեան հանդէս բերած նոր պայմանների առաջ և երեսան եկած նորանոր պէտքերին բաւականութիւն տալու համար՝ աչքերը ուղղեց դէպի արեւմուտք՝ Եւրոպա: Իսկ իրերի ծնեցրած այդ դիտումի ընդհանուր հետեւանքներից մէկն էլ այն եղաւ, որ յառաջ եկան գրողների, մտածողների նոր շարքեր, նոր խմբեր, որոնք մի կողմ ձգելով անպէտք դարձած հինը, աշխատեցին

ճանաչել իրենց երկիրը և ուսումնասիրել Երոպայան ու Արա հասարակական-քաղաքական հաստատությունները: Օսմանեան այդ նորածին, թարմ ոյժը՝ իր ձգտումներին յագուրդ տալու համար՝ դիմեց երոպական մտքին, գրի-խառնապէս ֆրանսիական գրականութեան, և նորեկին յատուկ եռանդով ամէն ինչ սկսեց չափել, ձեռնել այս վերջինիս վրան: Պարսկականի և արա-բականի տեղ այժմ բռնեց ֆրանսիական լեզուն, ֆրանսիական գրականու-թիւնը:

Բայց ֆրանսիական ճոխ լեզուն, հոյակապ պատմութիւնը, հարուստ գրականութիւնը իրենցմով հետաքրքրողներին միայն զգացմունքի ձեռք արտայայտելու միջոց չափտի ընծայէին, այլ և՛ մտածմունքի, խորհելու առատ նիւթեր: Այն ազգը՝ որ մի քանի յեղափոխութեանց երկար, դժուարին բովիցն էր անցել և համայն աշխարհի սքանչացումը գրաւել, — արտադրել էր քաղաքագիտական գրողների, մտածողների այնպիսի հսկայ շարքեր, որոնք անկարող էին իրենց դրոշմը չդնել, այս և այն չափով, իրենց ըն-թերցողների վրան: Եթէ եղան թուրք երիտասարդներ, որոնք նպատակ դրեցին իրենց հայրենիքը փոխադրել ֆրանսիական գրականութեան գե-ղարուեստական կողմը, սակայն եղան շատերն էլ, որոնք աշխատեցին օրի-նակել, հետեւել ֆրանսիական քաղաքագիտական մատենագիրների ասած-ներին և ցանկացան նրանց մտածմունքի արդիւնքները, ինչպէս որ իրենք էին հասկացել, իրենց երկրի մէջ ծաւալել:

Քաղաքագիտական ուղղութեամբ գրելու տեսակէտից թուրքերը առաջ են հայերից: Տասնիններորդ դարու 30-ական թուականը թուրք գրականու-թեան մէջ առաջ էր բերել քաղաքագիտական գրողների մի որոշ խումբ, որոնց ընդհանուր միտումների ամփոփողը և արտայայտիչը եղաւ Ռէշիդը: Իսկ հայերը դեռ երկար տարիներ պիտի սպասէին, մինչև որ ասպարէզ մտներ Միքայէլ Նալբանդեանը, — հայ քաղաքագիտական առաջին գրողը:

Ի՞նչ պատկեր էր ներկայացնում Թիւրքիան երիտասարդ գրչի տէր քաղաքական այն բարեկրօնիչներին, որոնք՝ ինչպէս իրենք էին ասում՝ սնուած Արեւմտեան Երոպայի յառաջադէմ գաղափարներովը, վրանին առան «Երիտասարդ Թուրքեր» անունը և իրենց հրապարակային, հասա-րակական գործունէութեան նպատակ ընտրեցին վերածնութեան մէջ դնել իրենց երկիրը և հին, մզլուտած, խարխլած Թիւրքիայից վերաշինել, առաջ բերել մի Նոր՝ «Երիտասարդ Թիւրքիա»:

Ահա այդ պատկերը.

— Մի երկիր՝ բաղկացած բազմատարր ցեղերից ու ազգութիւններից, որոնցից ամէն մէկը ուներ իր ազգային անհատական առանձին կեանքը, իր գոյութիւնը պահպանելու հաստատուն հիմունքները: Չկար այդ տարրե-րի մէջ փոխադարձ համերաշխութեան և ո՛չ մի կապ, ո՛չ մի անցեալ, հա-սարակական և ո՛չ մի հաստատութիւն կար՝ որ այդ օտարասեռները իրա-րու հետ շարկապելուց լետոյ, ամուր կերպով նրանց կապէր տիրող տարրի, Օսմանցիի հետ, և այդպիսով բոլորից կազմէր մի ամբողջութիւն, օրգանա-կան մի մարմին, մի ազգութիւն:

Պետական կազմակերպութեան տեսակէտից նրանք տեսնում էին՝ որ Թիւրքիան ներկայացնում էր մի անկազմ, անկերպարան երկիր, կեղեքում-ների որս, յաիշտակութեան վայր՝ բոլոր պաշտօնական ու անպաշտօն կա-ռավարիչ-հարստահարիչների համար, «երկիր՝ ուր աղանձին իսկ գողանում էր»: Մի կառավարութիւն՝ որի «գլուխը», «ուղեղը» Պօլիս նստած, անձա-տուր էր եղած ցոփակեաց կեանքի ամէն նրբութիւններին, անհոգ, անընդու-նակ՝ պետական նաը ժամանակի հոսանքի հետ առաջ վարելու, որ երկրի գոյութեան, պահպանութեան միակ գրաւականը նա այլևս չէր սպասում իր սրից, ինչպէս առաջ, այլ իր ժառանգորդները լինելուն աչք դնող պետու-թեանց փոխադարձ նախանձից, մրցումից և հակառակութիւններից: Իսկ այդ բոլոր թուլութիւններից օգտուելով՝ նուաճուող ազգերից մնանք արդէն յաջո-ղել էին իրենց ազատութիւնը ձեռք բերել, ոմանք էլ ասպատմութեան դրօ-շը պարզելու շարուն մէջ մտել և իրենց մօտալուստ անկախութիւնը երազում, ու պատմութեան ընթացքը որոշակի ցոյց էր տալիս որ մի օր նոյն ուղին պիտի ընդունէին և՛ միւս ազգութիւնները, եթէ իրերի արդէն եղած դրու-թիւնը նոյնութեամբ շարունակուէր, այնպէս որ մի օր Օսմանցին պիտի զարթնէր և իրեն տեսնէր հալուած, բոլորովին կազմալուծուած, քաղաքա-կան կեանքից վայր իջած: — Ահա այն պատկերը՝ որ տալիս էր նրանց իրա-կանութիւնը, հեռանկարը՝ որ պարզում էր պատմութեան ընթացքը:

Ի՞նչ էր և ի՞նչ եղած այդ բոլորի հանդէպ կառավարիչ այն խմբի ցան-կութիւնները, որոնց այնուհետև իրենք սկսեցին անուանել «Երուսիմի Թուրքեր»: Ի՞նչ ընդհանուր ծրագիր, ի՞նչ մեթօդ, քաղաքական ի՞նչ ուղե-գիծ մեթօդ էին նրանք ընդունել դէպի այլակրօն, այլացեղ տարրերը և ի՞նչ հիմունքների վրայ դրել պետութեան կազմը:

— Ոչ-մահմէտականներին ռապէս դարձնելով՝ նրանց բոլորովին կող-գիացրել էին և պետութեան մէջ առաջ բերել կողք կողքի ապրող իրարու խորթ, օտար, թշնամի մարմիններ: Ռայեաները քաղաքական կեանքից բո-լորովին արտաքսուած լինելով՝ սկզբունքով ո՛չ բանակի մէջը կարող էին ընդունուել և ո՛չ էլ հասարակական, պետական պաշտօններ ստանալ, բացի քմահաճոյքի թելադրութիւնից: Պետութիւնը ամէն իրարունք ուներ դէպի այդ տարրեր անցեալ, տարրեր կրօնք ու սովորութիւններ ունեցող ցեղերը, առանց սակայն ունէ պարտականութիւն ստանձնելու: Քաղաքական անհա-րասարութեան ստեղծելով էր, որ «Երուսիմիներ»ը մտածել էին ընկերային ան-հասարակութիւնը մշտնջենաւորել, և այդ մեթօդով՝ տիրուող ոչ-մահմէտա-կաններին շարունակ արտադրութեան խօսուն գործիք դարձնելով՝ նրանց յարատև հպատակութեան, հնազանդութեան մէջ պահել:

Իսկ օսմանեան զահակալները այդ մի և նոյն հպատակ ժողովուրդնե-րի հետ իրենց յարաբերութիւնները դիրացնելու համար՝ յարմար միջոց էին համարած իրաքանչիւր դասանութեան պատկանող քրիստոնէաներից կրօնական առանձին համայնքներ կազմելու, և նրանց կրօնական պետին իր հօտի հաստարմական զգացմունքներին պատասխանատու ճանաչելու:

Արդ, որքան որ «Ծերունի Թորքեր»ի կամ մինչև այդ ժամանակ երկրի մարզ ու կանոնը տուող պահպանողական խմբի ձեռք առած միջոցները կարող լինէին անգործեան, հնազանդութեան ու կրատրական դիրքի մէջ դնելու զանազան հակաշահ և հակամարտ ձգտումներ ունեցող տարրերին—այնուամենայնիւ նրանք անկարող էին արմատախիլ անել, մոռացնել տալ այդ ժողովրդներին իրենց ահատականութիւնը կազմող տարրերը և նրանց բոլորը ի մի ձուլելուց յետոյ՝ մի ժողովուրդ, մի մարմին ձևացնելու: Ինչքան որ հպատակ ազգերը սահմանափակ շրջանի մէջ էին դրուած, դարձեալ «Ծերունի Թորքեր»ի շնորհած միջոցներով՝ հպատակ իրաքանչիւր համայնք կարողանում էր վառ պահել իր անցեալի յիշատակները, մշակել, ընդարձակել իր գոյութեան հիմունքները և իր առանձին իդէալը ունենալ,— իդէալ որ բնաւ համապատասխան չէր օսմանեան պետական շահերին: Մի խոսքով՝ օսմանեան կայսրութեան ունեցած քաղաքական կազմակերպութիւնը իր անկումը անխուսափելի պիտի դարձնէր, եթէ չաշխատուէր այդ երկիրը նոր հիմունքների, նոր խարխսների վրայ դնելու:

Եւ վերակենդանացնելու այդ պատմական ծանր պաշտօնը իրենց վրայ առնել ուզեցին Ռէշիդը ու իր գաղափարակից ընկերները, որոնք իրենց վերակազմելիք Նոր Թիւրքիան՝ Հինից տարբերելու համար՝ անուանեցին «Երիտասարդ»:

### III

#### «ԵՐԻՏԱՍԱՐԳ ԹԻՒՐԻՍՆԵՐ»Ի ԸՄԲՈՒՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԾՐԱԳԻՐԸ

Ի՞նչ էին «Երիտասարդ Թորքեր»ի ղեկավարիչ սկզբունքները:

— Թիւրքիան վերակազմել, վերահաստատել այնպիսի հիմունքներով, որ նրա մէջ ապրող զանազան այլացեղ, այլակրոն տարրերը, ժամանակի ընթացքում, յառաջացնէին, կազմէին մի զանգուած, մի մարմին, մի ժողովուրդ, մի ազգութիւն: Ո՛չ թէ կղզիացած, իրարու խորթ ու թշնամի ցեղեր, այլ մին միւսի շարունակութիւն կազմող մասեր, որոնց բոլորին մէջ պիտի տիրէր ընդհանուր ներդաշնակութիւն, ընդհանուր կապ: Տարբեր ժողովրդների մէջ գոյութիւն ունեցող վիհերը, խտրութիւնները վերացնել, արմատախիլ անել, ջնջել նրանց ինքնուրոյնութիւն տուող պայմանները, արտօնութիւնները և այդ բոլորից՝ առաց խտրութեան՝ կազմել մի ամբողջութիւն, որ ունենար նոյն ձգտումները, նոյն հաստատութիւնները, նոյն իդէալը: Ուրիշ խօսքով՝ մինչև այն ժամանակ գոյութիւն ունեցող զանազան համայնքների տեղ պիտի տիրէր մի համայնք, մի ազգութիւն՝ Օսմանեան: Եւ այդ բոլորի համար հարկաւոր էին միայն փոխադարձ բարի տրամադրութիւններ, համաձայնութեան մի քանի արտաքին նշաններ, սկզբնական մի քանի թեթև փոփոխութիւններ, որպէսզի գոյութիւն ունեցող ամէն ինչ table rasé— հարթ հաւասար—լինէր, պատմական ամէն անհատականութիւն իր անցեալը, ինքնուրոյնութիւնը մոռանար և Օսմանցի լինելու շաղիւն մէջը մտնէր:

Արևմտեան լուսատրեալ մտքերով տոգորուած «Երիտասարդներ»ը իրենց այդ ասածների հաստատութեանը կենդանի օրինակ էին բերում, գլխաւորապէս, Ֆրանսիան և Պրուսիան:

Մի Ֆրանսիա, ֆրանսիական մի ազգութիւն կազմող ժողովուրդը դեռ շատ ժամանակ չէ, որ բաժանուած էր տարբեր միութիւնների, տարբեր ցեղերի, որոնցից իրաքանչիւրը ուներ իր սեպհական լեզուն, ուրոյն անցեալը, տարբերող սովորութիւնները, նիստ ու կացը, ուր հիստիսում ապրողը նոյնքան խորթ ու հակամարտ ձգտումներ ուներ դէպի հարաւայինը, որքան և արեւելքինը դէպի արևմուտքը: Սակայն այդ բոլորը ի մի ձուլուեցան կեդրոնական Իլ դը Ֆրանսից (Ile de France) ձեռք առնուած կառավարական միջոցների, հանրական օրէնքների ու հաստատութիւնների շնորհիւ, և այդպիսով այլազան ցեղերից կազմուեցաւ մի ժողովուրդ, մի ազգ՝ տոգորուած համանման զգացումներով, համանման շահերով:

Պրուսական պետութիւն կար, բայց ո՛չ ազգութիւն: Բայց այսօրուան պրուսական ժողովուրդը՝ տարբեր տարրերից՝ զանգեց, թրեց, յառաջ բերեց պետութիւնը ինքը՝ իր տուած կազմակերպութեան շնորհիւ:

Արդ, ինչո՞ւ միեւնոյն ընթացքը չընդունել և՛ Թիւրքիայի նկատմամբ: Քանի որ մի ծանոթ սկզբունք բարերար արդիւնք էր ունեցել մի երկրում, նոյն բարերար հետևանքը կարող էր ունենալ և՛ մի ուրիշ երկրում, հարկաւոր էր միայն փոխ առնել, հետևել՝ մտածում էին հետևողականութեամբ առաջնորդող «Երիտասարդներ»ը:

Ահա այն գաղափարները, որ իրենց բարեկորոզչական գործունէութեան առաջնորդ ընդունեցին թուրք «Երիտասարդներ»ը և աշխատեցին ո՛չ միայն այդ մտքերը իրենց քաղաքագիտական գրուածների մէջ արտայայտել, այլև ջանացին համախոհների մի շրջան ստեղծել, որ իր ձեռքը առնէր պետական գործերը և տեսական այդ գաղափարներին ոգի ու մարմին տար: Լիայոյս լինելով, այսպէս, որ կարճ ժամանակամիջոցի մէջ իրենց առաջարկած միջոցները ո՛չ միայն յետս պիտի կատեցնէին օսմանեան պետութեան անկումը, այլև նրա հին երակների մէջ նոր արիւն հոսեցնելով կարող պիտի լինէին հիմնապէս ամրապնդել և մի հոծ, ընդարձակածաւալ, ներդաշնակ մասունքներով շաղկապուած Օսմանեան ազգ յառաջ բերել, որի մէջ այլևս գոյութիւն չպիտի ունենային ներքին, ցեղական թշնամութիւններ, հակամարտ ձգտումներ, այլ ամէնքը գոհ, միաձոյլ զանգուածի, անգծելի ապառաժի նման օտար թշնամիների առաջը պիտի արձանանային:

Եւ իրենց վերածնութեան այս թռիչքի մէջ, «Երիտասարդներ»ը այնքան առաջ էին գնում, որ բոլորովին արդարացուցիչ և շահեկան էին համարում, ի հարկին, օտար համայնքների ամբողջական բռնի կրօնափոխութիւնը, կամ ամբողջական կոտորածները:—Այդ բոլորը նրանք մեղմացուցիչ անհրաժեշտութիւններ էին համարում ապագայի, սկզբունքի տեսակէտից:

Ֆրանսիական պետական անձնատրութիւնները Ռէշիդին համարում էին օսմանեան Ռիշլէօ. իսկ անգլիացիները առանձնապէս ուրախ էին որ շուտով «Երիտասարդներ»ը ոտից գլուխ կվերակենդանացնեն օսմանեան

պետութիւնը և այդպիսով միանգամից վերջ կը դնէին Արեւելեան խնդրի ձանձրացուցիչ, բայց և վտանգաւոր մղձաւանջին:

Օժտուած բանաստեղծական ձիրքով, ինչպէս և քաղաքագիտական առանձին յատկութիւններով, մի քանի անգամ փոխն ի փոխ դեսպանական պաշտօններ վարած Պարիզում, Լոնդոնում, Քեթթօնիայի և Ադրիանապօլսի յայտնի բանակցութեանց մասնակցած, բանիցս արտաքին գործերի նախարարի պաշտօն ստանձնած ու երոպական նշանաւոր պետական անձերի բացաւայտ շնորհը վայելած,—Ռէշիդը (փաշա) իր գաղափարների տարերքին մարմին տուեց **Քիլիմանդի հաստի Շերիֆով**: Արդիւ Մէշիդի օրօք հաստատուած քաղաքական այդ գործողութիւնը ո՛չ միայն առաջ եկաւ Ռէշիդի և իր համախոհների աշխատութեամբ և թելադրութեամբ, այլ այդ «թրքական Magna Charta»-ի խմբագրողը ինքը՝ Ռէշիդը եղաւ: Դրանով Թիրքիան մի համատարր ամբողջութիւն նկատուելով՝ ամէն տեղ ստեղծում էին համատիպ «համայնական ու նահանգական խորհուրդներ», «արդարադատութեան կազմակերպութիւն» ամէնքի համար՝ առանց խըտրութեան, «ընդհանուր ապահովութիւն» օսմանեան ամէն հպատակների համար, և «կանոնաւոր հարկատութեան ընդհանուր սխաւէմ» կայսրութեան բոլոր մասերի մէջ:

— Ահա բարեկորոզական այն գլխաւոր գծերը, որ չափեցին, ձևեցին «Երիտասարդները»՝ վերակենդանացնելու, երոպականացնելու համար **ամբողջ Թիրքիան**:

Այդ քայլը թէ՛ յանդուգն և թէ՛ աննպատակալարմար նկատուեց «Երիտասարդներ»-ի կողմից:

Բայց որքան որ երոպական գաղափարներով ասպարէզ իջած բարեկորոզիչների փայփայած մտածումները առաջին անգամին իսկ իրականութեան ծայրին բարխելով՝ անպտուղ մնացին, այնուամենայնիւ հետևողների շարքերը անպակաս չեղան:

Տուադ, Ալի, Զեմալ շարունակեցին իրենց ուսուցչի և ընկերակցի գծած ուղղութեամբը ընթանալ և իրենց «լուսաւոր» գաղափարները ամփոփեցին, մի քիչ աւելի ընդարձակ ձևով, Հատտի Հիմայիւնի մէջ (18 փետր. 1856) ու որեցին Պարիզի դաշնագիրն կնքող պետութեանց ներկայացուցիչների առաջ:

Այս անգամ «Երիտասարդ Թիրքիան» յայտարարում էր ո՛չ միայն ընդհանուր ապահովութեան, այլև ընդհանուր ազատութեան և օրինական հաւասարութեան սկզբունք՝ օսմանեան բոլոր հպատակների համար, առանց ցեղի ու կրօնի խտրութեան: Միւսլիմանների և քրիստոնեանների մէջ եղած տարբերութիւնները ջնջում էին ու քրիստոնեանները ընդունում զինորական բոլոր աստիճանների, քաղաքացիական բոլոր պաշտոնների մէջ:

Այսպիսով՝ «Երիտասարդներ»-ը մի նոր գրութեամբ անհետացնում էին օսմանեան երկրի մէջ եղած ցեղերի դարաւոր թշնամութիւնների պատճառը, ջնջում էին ներքին երկպառակութիւնները, վերացնում կրօնական խտրութիւնից առաջացած անհաւասարութիւնները և մէջտեղը դնում **Օսմանեան**

**Տերղաշնակ ամբողջութիւնը**: Այլևս պետութիւնը արմատապէս բուծուած, վերակազմուած էր, կարծում էին, հարկաւոր էր միայն մի քիչ սպասել՝ արդիւնըրը վայելելու համար:

Ծնունդ իրենց ժամանակի տիրող գաղափարների, «Երիտասարդ Թուրքեր»-ի յղացած մտածումները՝ օտար պետութիւնների թշնամանքների, հպատակ ազգերի անտարբերութեան և «Ծերունի Թուրքեր»-ի հակառակութիւնների միջից անցնելով՝ առանց մի փոքր չափով պակասեցնելու գոյութիւն ունեցող ներքին և արտաքին բարդութիւնները—եկան հասան Միդհատին:

Շայրագոյն աստիճանի փառասեր՝ բայց հանճարեղ, ազատամտութեան ջրղեղով՝ գիտակից մոլեղանդ, քրիստոնեայ ազգերին և նրանց քաղաքակրթութիւնը ի սրտէ արհամարհող, բայց նրանց զինորական մեծութեան առաջ կքոտող,—Միդհատը իր նախորդների յղացումները առաջնորդ ընդունելով՝ նախ աշխատեց տեսնել, ճանաչել օսմանեան գահի շուրջը բոլորուող ազգութիւններին. ուստի այդ նպատակով երկար ժամանակ մնաց Բուլղարիա, Ռումանիա և ապա անցաւ Երոպա, պաշտօնապէս ուսումնասիրելու, հետազոտելու համար երոպական ազգերի քաղաքական հաստատութիւնները, իր ուսումնասիրութեան արդիւնքից Թիրքիային բաժին հանելու դիտումով:

Գերմանական Ռայխաուագի նիստերից մէկում, 1875, պատգամաւորներից մին հարց ուղղեց Բիսմարկին, նրա կարծիքն իմանալու համար Երոպայի քաղաքական դրութեան մասին:

«Երոպական երկնքի վրայ ո՛չ մի անպ չեմ նշմարում, բացի Հերցեգօփինայի փոքրիկ սև կէտից»,—պատասխանեց երկաթի ու կրակի ամենակարող գորութեանը պաշտօն մատուցանող Երկաթի կանցլերը:

Այլևս անկարող լինելով տանելու թրքական մահացուցիչ վարչակազմութիւնը, Հերցեգօփինայի մի բուն ժողովուրդը դիմել էր զէնքի փրկարար գորութեանը և պարզել ապստամբական դրօշը: Իր հորիզոնի վրայ բարձրացած «փոքրիկ սև կէտը» փոթորկաբեր մի մեծ անպ, ընդհարումների, արիւնհեղութիւնների աղբիւր դառնալու վրայ էր:

Բուլղարիան պատրաստում էր իր կեանքը կամ մահը ապստամբական սրից խնդրելու:

Սերբիան, Մօնթենէգրօն իրենց ցեղակիցների տանջանքների առաջ պատերազմական ընդհանուր թրթռումի մէջ էին մտել: Իսկ Ռուսիայում համապատութեան ազդեցիկ կարապետները ամբողջ երկիրը «սրբազան ոգևորութեան» մէջ դրած՝ առաջին ձայնին էին սպասում «տանջուող եղբայրներ»-ին օգնութեան թոչելու:

Յապաղելու ժամանակ այլևս չկար: Ինքն իրան Օսմանեան Բիսմարկի համարող Միդհատը անապարեց իր հոշակաւոր «յիշատակագիր»-ը ուղղելու Բիսմարկին, նրան կրկնելով, փաստելով այն բոլոր բարիքները, որ կարող պիտի լինէին տալու՝ առանց ցեղի ու կրօնի խտրութեան ծրագրած բարեկորոզումները, երբ նրանց ընդհանուր նպատակը լինէր առաջացնել ամբողջական, միաձուլ, միևնույն հաստատութիւններով օժտուած մի Թիրքիա:

## ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԹԻՐՔԻՍ

Հերցեգովինան, Սերբիան, Բուլղարիան, 1876-ի աշնանը, արեան մէջ էին լողում: Մեծ Պետութեանց ներկայացրած առանձնակի և հաւաքական ծանուցագրերն ու ազդարարութիւնները անհետևանք էին մնացել Բ. Դրան կողմից: Դեկտեմբերի 23-ին Կ. Պոլսում կայացաւ դեսպանաժողով (conference), իրեն առարկայ ունենալով արեան թատր դարձած երկրներին բարարութիւն տալու, մշակելու բարեկարգումների մի ծրագիր և այդ ծրագիրը գործադրելու երաշխատրութիւններ ապահովելու՝ Բ. Դրան կողմից: Դեռ հազիւ առաջին միտը սկսած, յանկարծ թնդանօթների որոտալից բովիւնը պետութեանց լիազօրներին յայտարարեց, որ այլևս իրենց աշխատանքին հարկ չկար, զի Թիրքիան արդէն ուներ. Սահմանադրութիւն, Պարլամենտ, որ կարող էր Օսմանեան Ազգի և կայսրութեան երկրների մէջ ծագած բոլոր դժուարութիւններին պարլամենտօրէն վերջ տալ: Երոպական պետութեանց բաղաքական բարձրագոյն ու ամենակարևոր հաստատութիւններից մին արդէն վայելում էին Օսմանցիները՝ ասում էին «Երիտասարդ» ղեկավարիչները:

Իշխան Գօրչակովը ծիծաղեց «Պարլամենտական Թիրքիայի» անունը լսելիս: Լիազօրները շարունակեցին իրենց ծրագիրը մշակել: Միդհատը շտապեց Պարլամենտի անդամները միասին գումարել և նստաշրջանը բաց անել: Երբ Դեսպանաժողովը իր խորհրդակցութեանց արդիւնքը, ծրագրած որոշումները Բ. Դրան ներկայացրեց, Միդհատը պատասխանեց որ Թիրքիան չէ կարող ընդունել օտար պետութեանց միջամտութիւնը իր ներքին գործերի մէջ, որ Ազգային Ժողովը՝ Պարլամենտը իրենց միաձայն քուէով մերժել էին դրսից եկած որ և է առաջարկ ընդունելու:

Արդ, ի՞նչ էր այդ նոր Սահմանադրութիւնը, Պարլամենտը, որի թէ՛ միւսլիման և թէ՛ քրիստոնեայ հաւատարիմ հպատակ բոլոր անդամները միաձայն քուէով անելի նախապատիւ համարեցին «իրեն արեան մէջ խեղդել ապստամբ Բուլղարիան և նրան օգնութեան եկող համացեղ պետութիւնները, քան տեղի տալ»:

Նորից նախկին մտքերը, Ռէշիդի և իր յաջորդների տածած գաղափարները, թէև այս անգամ անելի լայն, անելի որոշ կերպարանք առած:

«Եթէ Թիրքիան մի բունաւորի փոխարէն ունենար մի իմաստուն միապետ, որ լեւուէր բոլոր ցեղերի ու կրօնների ներկայացուցիչներից բաղկացած Պատգամատրական Ժողովի վրայ, ապա նա կփրկուէր»: Թուրք հայրենասէրների արտայայտած այդ ցանկութիւններն էին (1876, մարտ), որ արձագանք գտան և, իրենց բոլոր նախակարապետների լղացումների հետ միասին, մարմին առան Սահմանադրութեան մէջ (1876, դեկտեմբեր), որի էական մասն է՝ Պատասխանատու նախարարական Խորհուրդ, Ընդհանուր Ժողով՝ բաղկացած երկու Խորհրդարանից (Chambres),—Մերակոյտ (Sénat) և Պատգամատրական Ժողով (Chambre des Députés): Ազատութիւն

մամուլի և հաւաքումների օրինական սահմանների, մէջ, անփոփոխելի դատարներ, նախնական կրթութիւնը պարտաւորեցուցիչ, Իսլամը պաշտօնական կրօն, և այլն:

Կազմուած Իլէմաների և պաշտօնեաների մի մասնաժողովից, Սահմանադրութեան հեղինակները, «Երիտասարդ Թիրքիան», այդ միջոցով օսմանեան պետութիւնը «բացարձակ բունապետութիւնից Սահմանադրական միապետութեան էին վերածում, երկրի կառավարութիւնը Սուլթանի կամայականութիւնից ազատելով՝ Օսմանեան Ազգի ձեռքն էին յանձնում և, որ գլխաւորն է, ջնջում էր Օսմանեան Ազգի միջից ներքին երկպառակութեան, ցեղային, կրօնական թշնամութեան ամէն աղբիւր և օտար արտաքին պետութեանց միջամտութիւնը, Ազգային ներքին գործերի մէջ, բոլորովին աւելորդ և անկարելի դարձնում»:

Երոպական պետութեանց հողորդագրելիս, Միդհատը ամենայն խնամքով յանձնարարեց, որ պետական այդ Նոր Հաստատութիւնը աստուածապետական և ո՛չ մի բնաւորութիւն ուներ, զի «նա հիմնում էր կայսրութեան մէջ ազատութեան, արդարութեան, հաւասարութեան թազարութիւնը և բաղաքակրթութեան յաղթանակը», և մանաւանդ, որ «Սահմանադրութիւնը մի խոստում չէր, այլ մի իրական և բացայայտ գործողութիւն, որ բոլոր Օսմանցիների սեպհականութիւնն էր դարձել արդէն»:

Թէ «Սահմանադրութիւնը խոստում չէր» և «արդէն բոլոր Օսմանցիների սեպհականութիւնն էր դարձել»—դրա բացարձակ ժխտումը ցոյց տուին յետագայում կատարուած դէպքերը և այդ բոլորը միաժամանակ յայտարար նշան եղան նաև այն իրողութեան, թէ հրէական ծագում ունեցող Միդհատը և իր նախորդները ո՛ր աստիճան կորովամտութիւն էին ունեցել նախապէս, հետագօտելու իրենց երկիրը և լրջօրէն ուսումնասիրելու երոպական ազգերի պետական հաստատութիւնները ու նրանց պատմութիւնը:

## V

## «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՐՔԻԱ»Ն ԱՐՏԱՍՍԷՄԱՆՈՒՄ

«Պարլամենտ» լուծուելուց, Միդհատի և իր խմբակի անկումից յետոյ (փետրուար 1877)՝ իրենց երկրի մէջ գործելու պայմաններ այլևս չգտնելով՝ «Երիտասարդ Թիրքիայ» թաժած սկզբունքներին հաւատարիմ մնացողներից անելի գործունէրը ապաստանեցին Երոպա. և այստեղ անելի ու նուազ հետևողական ընթացք բռնելով՝ շանացիներին իրենց նախորդների գործը շարունակել, պայքարելով նո՛յն գծերով, նո՛յն ուղղութեամբ, դաւանելով, անելի կամ նուազ գիտակցօրէն, նո՛յն գաղափարները և նո՛յն մտքերը:

Մինչև Երոպա ապաստանելը՝ «Երիտասարդ Թիրքիան» գործում էր երկրի մէջ, օրինական հողի վրայ կանգնած, իրեն նպատակ դարձնելով ձեռք առնելու երկրի օրէնդրական և վարչական իշխանութիւնները, ինչպէս և կրօնական ու այլ «բարձրաստիճան» պետական անձնատրութիւն-

ները և այդպիսով իրականացնել իր փայտայած սկզբունքները: Երոպա ապաստանելով՝ «Երիտասարդ»ները այլևս կորցրին օրինական հողը և միակ միջոցը՝ որ իրենց մնում էր, դա **ապօրինական հողը**—**յեղափոխականությունն** էր, զի իրերի բնական ընթացքը իրենց այդ դրություն մեջն էր դրել: Սակայն Երոպայի ասպնջականությունը վայելող «Երիտասարդներ»ը, շեղելով ստեղծումս ճոր պայմանների՝ իրենց համար բացարձակ անհրաժեշտություն դարձրած միակ ուղեգծից, այն է **յեղափոխական միջոցից և գործունեությունից**՝ նրանք ընկան անորոշ, տարտամ մի վիճակի մեջ և անկարող եղան որ և է դրական արդիւնք ձեռք բերել՝ իրենց մղած թղթային, **լրագրական պայքարովը և ցույցերովը:**

Ի՞նչ եղաւ նրանց դիրքը և գործունեությունը, իր ամբողջության մէջ՝ արտասահմանում:

Ի հարկէ մենք այստեղ աչքի առաջ չունինք «Երիտասարդ» ասում այն դասակարգներին, որոնք արտասահման դուրս գալով շահութախառն դերի մէջ էին մտնում՝ պաշտօններ և դրամական գումարներ ձեռք բերելու դիտարկութեամբ: Մեր խօսքը միայն նրանց մասին է, որոնք մինչև վերջ հաւատարիմ և հետևողական մնացին իրենց նախորդների՝ Ռէշիի, Ֆուրի, Ջեմալի, Ալիի և Միդհատի պաշտպանած գաղափարներին:

Արտասահման ապաստանող «Երիտասարդ Թիրքիայի» գործունեությունը, իր գլխարկ գծերի մէջ, հետևեալը եղաւ.

Չանալ վերահաստատել Միդհատեան Սահմանադրությունը՝ «Պարլամենտը», ինչպէս որ իրենք սովորություն ունին ասելու: Եւ դրա համար նրանք դիմումներ էին անում Կ. Պօլսոյ և արտասահմանի մէջ եղած թուրք բարձրաստիան անձնատրոսություններին ու կրօնականներին:

Այդ սնդրով նրանք յիշատակագրեր էին ուղղում ճոր իսկ Սուլթան Համիտին: Միւս կողմից՝ իրենց հրատարակած թերթերով նրանք աշխատում էին համոզել երկրի մէջ եղող թուրք ինտելիգենտներին և ուսանող երիտասարդութեանը, որ նրանք էլ ոյժ տան իրենց ձգտումներին: Թիրքիային իր ներկայ կացությունից դուրս բերելու և Սուլթանների օրօք ունեցած «փառատր» դիրքի մէջ դնելու համար—մի դիրք՝ երբ ամբողջ Երոպան դողում էր օսմանեան բանակներից—նրանք միակ միջոցը համարում էին այդ Սահմանադրությունը:

Երբ այդպիսով որ և է յաջողություն չգտան, այնուհետև սկսեցին քննադատութեան առնել Սուլթան Համիտի «անձնական» կառավարութեան եղանակը և պատահած ներքին խռովությունների, զեղծումների ու Թիրքիայի ներկայ անճօրմալ կացութեան պատասխանատուն միայն նրան բռնել:

Տեսնելով Սուլթանի յամտությունը և իրենց դէմ յարուցած հալածանքները, «Երիտասարդ»ները այնուհետև սկսեցին պաշտպանել Սուլթան Համիտի գահընկէցութեան գաղափարը: Մի ժամանակ նրանք շատ մեծ յոյս դրեցին Եգիպտոսի Խոսիվի վրան, յուսալով որ նա իրենց կօգնէր, բայց այդ կողմից յուսախաբ եղան:

Նրանք մատուցանում էին յիշատակագրեր և՛ երոպական պետություններին, խնդրելով որ դիւանագիտական ճանապարհով հաւաքական ճնշում գործ դնեն Սուլթանի վրան՝ «Պարլամենտ»ը վերահաստատելու: Այստեղ էլ նրանք Թիրքիայի ներկայ դրութեան միակ պատասխանատուն Սուլթան Համիտի անձնական կառավարութեան եղակն էին համարում:

«Երիտասարդ»ների մեծ մասը բարեշրջականներ (évolutionniste) լինելով և հետևողներ Օգիստ Կօնտի փիլիսոփայութեան, իրենց դասանած ընդհանուր փիլիսոփայությունն այն էր, որ Էվոլյուցիայից պէտք էր սպասել Օսմանեան կայսրութեան մէջ արմատական փոփոխութեան առաջ գալը, և այդ փոփոխությունը պիտի կատարուէր յօգուտ տիրող՝ օսման տարրի: Եւ հէնց այդ տեսակէտով էլ դէմ էին յեղափոխական շարժումների, այդ միջոցը անօգուտ և վնասակար համարելով այն հիմունքով, որ կարող էր արտաքին միջամտություն լինել և խնդիրը վճռուել յօգուտ տիրող՝ անելի յանձնադէմ ժողովրդների, մինչդեռ թուրք տարրը դեռ բաւականին յետամնաց էր:

«Մերումի Թուրքեր»ից ո՛չ նուազ թափով նրանք պաշքար մղեցին հայկական, մակեդոնական, կրէտական, արաբական, ալբանական շարժումների ու այդ շարժումներին արտապայտություն և ուղղություն տուող կուսակցությունների դէմ, ասելով որ այդ բոլորը վտանգում էին կայսրութեան ամբողջութեանը, միութեանը, անկախութեանը և կարող էին արտաքին միջամտություն հրաւիրել ու պետությունը անդամատել:

Բոլորը ի մի ամփոփելով՝ «Երիտասարդ»ների գործունեությունը հետևեալ հիմունքներն էր կրում.

- 1.—Գահընկէցություն Սուլթան Համիտի:
- 2.—Պահպանություն Օսմանի դիմաստի, Սուլթանականութեան և Խալիֆայութեան:
- 3.—Հակառակի օտար պետությունների միջամտութեանը Թիրքիայի ներքին գործերի մէջ, մասնատրապէս դէմ լինել նրանց միջամտութեանը՝ հայկական, մակեդոնական, կրէտական, արաբական և ալբանական շարժումների պատճառով:
- 4.—Չճանաչել ո՛չ հայկական և ո՛չ էլ մակեդոնական խնդիրներ: Դէմ լինել, պայքարել բաղկացուցիչ ազգությունների շարժումներին՝ յանուն օսմանեան կայսրութեան միութեան և ամբողջականութեան:
- 5.—Պաշտպանել Թիրքիայի ներկայ ընկերական, կրօնական և տնտեսական հաստատությունները՝ իրենց ամբողջութեան մէջ:
- 6.—Ներքին քաղաքականութեան տեսակէտից՝ պաշտպանել և իրականացնել օսմանականութեան գաղափարը՝ թուրք նացիօնալիզմը՝ իր բոլոր հետևանքներով. ընդունել քաղաքական բացարձակ կեղրոնացումն. ժխտել ամէն տեսակ ապակեղրոնացումն:
- 7.—Վերահաստատել Միդհատի Սահմանադրությունը, և իրենց հետադուր ու մօտադուր իղձերի իրականացումը նրա մէջը տեսնել և նրանով առաջ երթալ:

8.—Արտաքին քաղաքականութեան տեսակետից՝ պաշտպանել Ալժիր-ցիներին, Թունիսցիներին, Մարոկկոցիներին, Բուլղարիայի, Կրետէի, Կովկասի, Անդրկասպեան երկրների և Հնդկաստանի մէջ եղող մահմէդականներին՝ իրենց տիրապետող կառավարութիւնների դէմ: Ամբողջ մահմէդական աշխարհը մի ընտանիքի զաւակ համարել և նրանց յոյսերի առանցքը դարձնել օսմանեան պետութիւնը, և այդ հիմունքով ջանալ սերտ յարաբերութիւններ մշակել մահմէդական անկախ և կիսանկախ տերութիւնների միջև:

9.—Ծանօթացնել երոպացիներին իսլամութեան բարձր կողմերը և մահմէդական քաղաքակրթութիւնը:

Սա է եղած, իր գլխաւոր գծերի մէջ, այն գործունէութիւնը, որի շուրջը դարձել է «Երիտասարդ Թիրքիա»՝ արտասահմանի մէջ:

## VI

### «ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹԻՐԻՔԻԱ»Ի ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՄԻՂՀԱՏԻ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բայց ինչո՞ւ «Երիտասարդ Թուրքեր»ի յուսումները ամենափոքր չափով իսկ արդիւնք չունեցան, բնաւ իրականութիւն չստացան, չնայելով որ անելի քան կէս դար է, որ իրենք պայքարի են բռնուած տիրող բռնապետութեան դէմ: Կորով, աշխոյժ, երբեմն, ցոյց են տուել, այդ անուրանալի է, ոմանք բազմիցս պետական ամենաբարձր և պատասխանատու պաշտօններ էլ են վարել և քիչ չեն եղել դէպքեր, երբ օսմանեան զահակալները լսել և հետևելու ակնյայտնի տրամադրութիւն են ցոյց տուել ու բացայայտօրէն թող տուել, որ այդ կուսակցութեան զաղափարների տածիչները փոքրիկ միջոկ էլ կազմեն իրենց զահի շուրջը: Եւ բաւականին նպաստաւոր պայմանների ներքոյ, անելի քան կէս դար մարտնչելուց յետոյ, «Երիտասարդ Թիրքիա»ն այսօր, օրինական հողը կորցրած, ունեցած ազդեցութիւնից բոլորովին զրկուած, ուժասպառ, ջլատուած մի շատ աննշմարելի, աղօտ տեղ է բռնում համաշխարհային պայքարողների ընդարձակ շարքերի մէջ: Դրա համար աչքի առաջ պէտք է ունենալ իրենց ընդհանուր միտումը:

Ապահովուած, յարաւե, գերծ ներքին խոռվութիւններից համարելը միայն այն պետութիւնը, որի ընդարձակութեան վրայ բնակողները բոլորն էլ կլինեն միաձոյլ, շահակից, ենթակայ միևնոյն հաստատութիւնների, ստորադասուած միևնոյն օրէնքների, վարչական կարգ ու կանոնի, իր ֆիզիքական ոյժի գերակշռութիւնից օգտուելով՝ ինքնուրոյնութեան առանձին պայմաններ ունեցող ցեղերի և ազգերի գոյութեան նեցուկները յափշտակել, աստիճանաբար տկարացնել, մինչև որ սրանք ժամանակի ընթացքում իսպառ մոռանան իրենց անցեալը և անհատական ամբողջութեան գիտակցութիւնը ու տարիներ անցնելուց յետոյ, շնորհիւ տիրողի ձեռք առած միջոցների, լինեն անգիտակից բեկորներ, տիրող զահի շուրջը դառնան ու, իբրև

տնտեսական արտադրող գործիքներ, այս վերջինիս գոյութեան յարաւեութիւնը ու զօրեղացումը իրենց հանրական նպատակը դարձնեն,—դա շատ հին գաղափար է և բոլորովին հակառակ ներկայ քաղաքակրթութեան: Աղէքսանդր Մեծը այդ հակայական գաղափարի իրականացման մէջն էր որոնում իր աշխարհատարած կայսրութեան ապահովութեան կոտանները: Այդ միևնոյն գաղափարովն է առաջնորդուել Ֆրանսիան, դեռ տասնամեկերորդ դարից: Պրուսական արքայական տան դեկալարիչ գիծը նոյն այդ գաղափարն է եղել, սկսած տասնմեկերորդ դարից: Ամէն ինչ հաւասարապէս տարրալուծող, ստեղծող, առաջ բերող Պետական այդ գաղափարն են քարոզել Հեգելը, Բյուռնշլին՝ իբրև արտայայտիչ պրուսական ամենակարող պետական գաղափարի. նոյն այդ մտքերով են տոգորուած այժմս էլ համապարտութեան և համագերմանականութեան զառանցող ռահիփրաները և վերջապէս այդ միտումներով է շարունակ առաջնորդուել բռնապետական Ռուսիան իր օրէնսդրական և վարչական բոլոր արտայայտութիւնների մէջ:

— Այդպիսի մի հակայական ծրագիր գործադրելու համար Թիրքիան շատ խարխուլ է, այդ տեսակ տիտանական մի շէնք կարողանալու համար՝ օսմանեան պետութիւնը ամենաանհրաժեշտ տարրերը ի՛նչ չունի և այդպիսի ընդարձակ, լայնատարր միտք իրագործելու համար՝ «Երիտասարդ Թուրքեր»ը շատ ուշ են ասպարեզ իջել: Այդ տեսակ մի միտք՝ թէև շատ սահմանափակ շրջանի մէջ, արդարև գործադրեց Օսմանը, ցեղակից, այլատեղ տարրերից մի ամբողջութիւն կազմելով, բայց դա հինգ դար առաջ էր և այսօրուայ պայմանները ա՛յնքան փոխուած են որ «Երիտասարդ Թուրքեր»ը հիմա այդպիսի մտածմունքներ առաջ բերելով՝ համաշխարհային ծաղր ու ծանակի առարկայ են դառնում միայն, և իրաւամբ:

Եթէ «Երիտասարդ Թուրքեր»ը իրենց յուսած գաղափարները չկարողացան գործադրել և ամենափոքր չափով օգտակար դառնալ իրենց երկրին—այդ միայն նրա համար, որ իրենց մտածմունքի հիմունքը սխալ էր: Իբրև հետևող, փոխ առնողներ, թիրք կարծեցեալ ազատամիտները գործեցին նոյն սխալները, ինչ որ իրենց ուսուցիչները:

Երոպական ազատամիտների հին դպրոցի ներկայացուցիչները երբ տեսնում էին քաղաքական, տնտեսական մի հաստատութիւն, օրէնսդրական մի կարգադրութիւն որ յաջող և բարեբար կերպով էր գործել մի երկրի մէջ, իբրև պարզ իդէալիստներ, առանց ամենամուազ չափով ուշադրութեան առնելու միջավայրերի տարրերութիւնը, ժամանակի տևողութիւնը և այն բոլոր ազդակները, որոնք յառաջացրել էին խնդրի առարկայ եղող հաստատութիւնը—մտածում և յանձնարարում էին նոյնը միանգամից փոխադրել իրենց ցանկացած երկիրը նախապէս համոզուած լինելով,, որ փոխառնովի հաստատութիւնը, ինչպէս մի մեքենայ, նոյնքան յաջողութեամբ պիտի գործէր երկրորդ միջավայրում, ինչքան որ առաջին: Եւ որովհետև պատմութիւնը, գիտութիւնը, յաճախակի կրկնուած փորձերը ցոյց տուին այդ տեսութեան հիմնովին սխալ լինելը, ուստի ուսուցիչների սխալելովը, սխալուեցան և՛ նրանց բոլոր հետևողները—այս պարագայիս, մասնատրապէս, «Երիտասարդ Թուրքեր»ը:

Եթէ տարբեր անցեալ, տարբեր լեզու ու սովորութիւն ունեցող մի քանի ցեղեր շաղախուելով յառաջացրին մի ամբողջական Ֆրանսիա, Ֆրանսիական մի ընդհանուր ազգութիւն—այդ նրա համար՝ որ այնտեղ կար մի Ile de France: Քաղաքական իշխանութիւնը, օրէնքի ցանցերը դեռ հերիք չէին, որ տարասեռ մասունքներից ընդհանրական գիտակցութիւն, միաձոյ համայնութիւն յառաջանար, դրա համար անհրաժեշտ էին մտաւոր, նիթական և բարոյական ամուր կապեր, և Ile de France-ից բոլիսած լուսաւորութեան ու քաղաքակրթութեան ճառագայթները, նրա ծոցից յառաջացած մտաւոր խմորը, տարիների ընթացքում, արդարև, այնպէս թրեց, զանգեց զանազան ծագում ու անցեալ ունեցող տարրերը, որ Բասքը, Բրետոնը և այլն, կորցրեց իր ցեղային անհատականութեան գիտակցութիւնը ու ինքն իրան սկսեց նկատել մի մասը Ֆրանսիական ազգի ամբողջութեան:

Ունէ՞ր Թիրքիան իր Ile de France-ը—ֆիզիքական ոյժ, այդ՛, և միայն բացառապէս սրա վրայ յենուելովն է, որ օսմանցի տիրողը կարող եղաւ տարբեր ցեղերի մէջ իր տիրապետողի գոյութիւնը պահպանել: Բայց ֆիզիքապէս այդ տիրողը, մտաւորապէս, բարոյապէս ու տնտեսապէս չէ՞ր տիրապետում տիրուողներից:

Սանճարձակ բռնապետութեան, յափշտակութեան, կողոպտուի դժոխային կեդրոն դարձած Պոլիսը և սրա մէջ հաստատուած Գահը բարոյական ի՞նչ զօրեղ կապերով էր իր հետ կապել Հային, Յոյնին, Բուլղարին... որ սրանք մոռանալին իրենց անցեալը, վանէին մէջներից ազգային անհատական գիտակցութեան գաղափարը և դառնալին գիտակից Օսմանցիներ: Գաղափարների համայնութեան, զգացումների ամբողջական համանմանութեան ի՞նչ ազդակներ էր տուել օսմանեան կեանքը: Թուրք լեզուն, գրականութիւնը այդ ազգերին մատակարարել էր մի որ և է մտաւոր սնունդ, բարոյական կապ, որ անելի բարձր ու զօրեղ, անելի վսեմ ու վճիտ լինէր, քան իրենց սեպհականը: Մտաւոր արտայայտութեան ո՞ր ճիւղի մէջ Հայը, Յոյնը... բացարձակապէս բարձր և տիրող չեն եղել թիրքերից:—Թառամած վարդ, սիրատարփ տխակ, թարշամելու համար վերջալոյսի վերջին ճառագայթին սպասող ծաղիկ, կոյս, տարփական կեանք... ահա իր քերթողների և բանաստեղծների երգածների գլխաւոր և տիրապետող առարկան: Իսկ այդ բոլորը կարո՞ղ էին մի որ և է չափով համեմատութեան մէջ մտնել այդ ազգերի մտաւոր արտադրութեան անցեալ ու ներկայ հրաշակերտների հետ, որ դարերի ընթացքում իրենց ուրոյն ազդեցութիւնն են դրոշմել սերունդների վրայ: Այդ ազգերի բեղմնավոր անցեալի փոխարէն թուրքը չու՞նէ՞ր մի անջրդի անապատ: Բայց այդ բոլորը տիրող տարրերը տեսնում և շօշափում էին իրենց հանապազօրեայ կեանքով:

Պրուսիայի կամ Ռուսիայի պատմութիւնը առաջնորդող գիծ ընդունելը անելի քան զառանցանք կարող էր լինել նոյն իսկ «Երիտասարդ»ների համար: Ռրա հայմար նրանք պատրաստուած տարրեր չու՞նէին և ահագին կերպով յետ էին մնացել ժամանակի ընթացքից:

Իսկ զայով Միդհատի սահմանադրութեանը, եթէ չընդունենք որ դա դիւանագիտական հրապարակային մի խաղ էր, նշանակուած 1876-ի դէպքերի առաջը առնելու, այլ պետական մի հաստատութիւն, որի հեղինակները նպատակ են ունեցել այդ միջոցով հաստատուն մի կոուանի վրայ դնել Թիրքիայի գոյութիւնը, ապահովել սրա բարգաւաճումը և ազատել երկիրը ներքին ու արտաքին աղէտներից—ապա, առանց մանրամասնութեանց մէջ մտնելու, ամենայն իրաւամբ կարելի է ասել, որ այդ հաստատութիւնը շա՛տ հեռու և անզօր է այդպիսի մի նպատակի համար: Միդհատի սահմանադրութիւնը իր էութեամբ իրական և ո՛չ մի ծառայութիւն կարող է մատուցանել օսմանեան պետութեան, եթէ մի օր վերահաստատուի էլ և անարգել կերպով գործադրութեան մէջ մտնի: «Երիտասարդներ»ը որ Համիտի և դիւանագէտների փէշերից կայս ընկնելով՝ իրենց գործունէութեան միակ նպատակն են անում այդ «Յարամէն»ի վերաբացումը—դրանով ոչինչ չեն գործած յիշում իրենց երկրի ապագայի տեսակէտից, և չարաչար սխալում են, անելի քան իրենց նախորդները, երբ կարծում են թէ դա միակ զօրաւոր սպեղանին է Թիրքիան բուժելու, թէ՛ ներքին և թէ՛ արտաքին հիւանդութիւններից:

Հասկանում ենք, թէ «Երիտասարդ Թուրքեր»ը իրենց միամտութեան մէջ ինչո՞ւ համար առանձին կարևորութիւն ու նշանակութիւն են տալիս: «Թուրքիայի գոյութիւնը վերջնական կորստից ապահովող այդ գործողութեան»ը:

Բայց այդ այդպէ՞ս է:

Միդհատի Սահմանադրութիւնը առանձնապէս սիրելի է «Երիտասարդներ»ին, որովհետև նա, իբրև թէ, կարող պիտի լինի վերջ տալ երոպական ազգերի միջամտութեանը Թիրքիայի ներքին գործերում և ջնջել այն բոլոր capitulation-ները և մասնաւոր իրաւունքները, որոնք Թիրքիան երոպացու ստացուածքն են դարձրել:

Բայց այդպիսի մի հսկայական ծրագիր գործադրելու համար ընդհանուր ցանկութիւնները, բառերը դեռ հերիք չեն: Հարկաւոր են յարատև պատճառներ, զօրեղ ազդակներ, որ երոպական պետութիւնների դարերի ընթացքում ձեռք բերած արդիւնքները այդպէս դիրութեամբ մէջտեղից վերցուէին: Արդիւնքը ջնջելու համար, հարկաւոր է նախ ջնջել նրա յառաջացող պատճառը, պայմանները: Արդ, վերացե՞լ են, կամ այդ Սահմանադրութիւնը ի՞նչպէս միանգամից պիտի վերացնէր այն բոլոր պատճառները, որոնք առիթ են տուել և առաջ բերել capitulation-ները: Եթէ այդ capitulation-ները դարերի ընթացքում իրաքանջիր պետութեան դէպի Թիրքիան ունեցած իրաւունքի սահմանն են կազմում—ապա մի պետութիւն իր դարևոր իրաւունքները այնքան էլ հեշտութեամբ ձեռքից բաց չի թողնի, որքան որ բարեմտաբար եզօղորում են «Երիտասարդները»: Ծահագրգռող պետութիւնների միացեալ ոյժին համապատասխան ոյժ ունենալու էր Թիրքիան այդպիսի մի իղձ իրականացնելու համար: Իսկ այդ զօրութիւնը ունենալուց առաջ՝ դեռ հարկաւոր պիտի լինէր որ օսմանեան պետութիւնը ո՛չ

միայն արդեամբ մտած լինէր երոպական քաղաքակրթութեան շաղիւն մէջ, այլ որ ինքը արդէն այդ քաղաքակրթութեան տարրերից մէկը դարձած լինէր: Բայց այդ բոլորը այս բուսակիս երազ չէ՝ «Երիտասարդներ»ի համար, եթէ մի քիչ ճանաչում են իրականութիւնը: Իսկ մի փոքր հետուն երթալով՝ յարակարծիք չէ, եթէ ասեմք, որ capitulation-ները և Թիրքիայի մէջ Երոպացիների ունեցած ձեռնարկները ու նրանց դրած դրամագլուխներն են եղել ամենագորտոր պատճառը, որ մինչև ցարդ Թիրքիան գոյութիւն ունի, եթէ ո՛չ նա արդէն շատ վաղուց գորտորին կուլ երթացած կլինէր. միւս կողմից, նոյն այդ capitulation-ները և երոպական պետութեանց տընտեսական ու քաղաքական հակամարտ ձեռնարկները ու շահերն են, որ պետութեանց մրցման ու նախանձի յարատև սնունդ դառնալով՝ կազմում են գլխատը առանցքը թրքական դիւանագիտութեան՝ Օսմանեան պետության հոգեվարքային գոյութիւնը շարունակել կարողանալու համար:

Այդ Սահմանադրութիւնը մասնատրապէս ցանկալի է «Երիտասարդներ»ին, զի նրանք պարզմտօրէն հաւատացած են, որ այդ միջոցով կարող պիտի լինեն բոլոր Թիրքիան մի ամբողջական ծածկոցի տակ առնելու և՛ աստիճանաբար՝ մի ազգայնութեան վերածելու: Դրանով նրանք պիտի անհետացնէին Թիրքիան կազմող ազգերի միջից ամէն խտրութիւն, ջնջէին փոխադարձ թշնամութիւն, հակառակութիւն, ապստամբութիւն և անջատումն առաջ բերող ամէն պատճառներ: Եթէ մի ցեղ, մի ժողովուրդ ունենար անբաւականութեան որ և է դրդապատճառ, նա այլևս չպիտի դիմէր գէնքի կամ երոպական այս ու այն պետութեանը կամ նրանց ամբողջութեան միջամտութեանը, — ո՛չ, դա ազգային, պետական դաւաճանութիւն կլինէր, այլ Օսմանեան վեհագոյն ատեանին՝ Պարլամենտին, որ բազմած էին իր ներկայացուցիչները: Ուրեմն թոյթի մի հարուածով «Երիտասարդներ»ը ցանկանում էին իրագործուած տեսնել այն, ինչ որ անկարող եղան անել իրենց աշխարհակալների սուրը և զանազան ժամանակներում կատարուած անուշի կոտորածները:

«Ծերունիներ»ը մտածում էին խոովարար ժողովուրդներին ուղղութեան բերել սրով, իսկ «Երիտասարդներ»ը՝ պարլամենտական մեծամասնութեամբ, և Միդհատի Սահմանադրութիւնը այդ միջոցը իրենց տալիս էր:

— Խորհրդարաններից առաջինը՝ Պատգամատրական Ժողովը պիտի ընտրուէր Օսմանեան ազգից, իսկ ընտրելու և ընտրուելու իրաւունքները ընտրողական այնպիսի սակի (cens) վրայ էին դրուել, քաղաքացիական այնպիսի պայմաններով էր շրջանակուել, որ ո՛չ միայն մահմեդականները, մասնատրապէս թուրքերը, բացարձակապէս ջախջախիչ մեծամասնութիւն պիտի կազմէին, այլ որ այդ մեծամասնութիւնը բաղկացած պիտի լինէր պետական զանազան պաշտօնեաներից՝ երկիրը կոփող, ժողովուրդը հարըստահարող բէկերից, աղաներից, փաշաներից և անանօրհնակ մակարոյծներից: Ուրիշ ազգութիւններ, առանձնապէս քրիստոնեաները, հագի նրա մէջ է՛ն շատը 5—10 պատգամատր ունենային: Արդ, բողոքող, դժգոհ ժողովուրդների ներկայացուցիչները ո՛րքան կարող պիտի լինէին իրենց բո-

ղոքարկու ազգակիցներին պաշտպանելու 5—10 ձայնով ընդդէմ 240ի՝ ազգային-անհատական խնդիրների տեսակետից: Բնականաբար մեծամասնութեան իրաւունքը, նրա արտայայտուած կամքը տիրապետող, ավիճելի պիտի լինէր, զի այդ էր ներկայ քաղաքակրթութեան տուած պայմանները՝ համանման պարագաներում: Իսկ այնուհետև դժգոհները և իրենց ներկայացուցիչները ո՛չ ապստամբելու և ո՛չ էլ օտար պետութիւններին դիմելու իրաւունք այլևս պիտի ունենային, — նրանց պիտի մնար միայն կամայ ակամայ հնազանդել մեծամասնութեան՝ իրենց հակառակորդների վճռին ու նրա որոշմանը հետևիլ:

Այդ դեռ բաւական հատու և ամէն ինչ երաշխատող գէնք չէր երևում սահմանադրականներին: Ուրիշ ազգութիւնների պատգամատրներից մին, օժտուած լինելով կիկերոնեան ճարտասանութեամբ, կատօնի իմաստութեամբ ու Ռիսուսի խորամանկութեամբ՝ գուցէ կարող լինէր մեծամասնութիւնը մի կերպ իր յետևից բարձ տալ և փոքրամասնութեան կամքը յաղթանակել տալ, հակառակ օսմանեան ազգի մնացուն շահերին, ուստի հարկատր էր մի քիչ էլ զգոյշ լինել:

Եւ անսահմանադրականները գահակալող սուլթանների բացարձակ կամքին էին թողնում կազմել մի Ծերակոյտ (Sénat), բաղկացած 300 անդամից: Անշուշտ, դժուար չէ գուշակել այն ծառայութիւնները և գործերը, որ նրանք պաշտօն պիտի ունենային կատարելու: Երբ անդամների յատկութիւնները ու նրանց արժանատրութիւնները տեսնողը, գնահատողը և ընտրողը Սուլթանները պիտի լինեն — ապա դիրքին է կանխապէս հասկանալ այդպիսի մարմնի բաղկացուցիչները, ստանձնելիք պետական գործերը ու կատարելիք դերը: Մի անգամ երբ այդ մարմինը ամբողջապէս պիտի կազմուի սուլթանների բացարձակ կամքի որոշմամբ, արդ, ո՛ր տրամաբանութեամբ, ո՛ր ազգերի համանման օրէնքով չի կարելի եզրակացնել, որ ընտրուած ծերակուտականները չեն լինիլ սուլթանների բացարձակ հլու, հնազանդ, հաճոյակատար ստրուկները, հետևաբար գահակալի իղձերի թարգմանը ու արտայայտիչը և ո՛չ թէ ժողովրդի, որի անունով իրենք պիտի խօսեն, որոշում կայացնեն: Իրենց գոյութիւնը բոնապետին պարտական լինելով՝ նրանք բոնապետի էլ գործիքը պիտի լինէին դէպի այն ժողովուրդը, որից իրենք ո՛չ մի կախումն, որի հետ իրենք ո՛չ մի առնչութիւն ունէին:

Օսմանեան այդ եզակի Ծերակոյտի մէջ հայկական ծագում ունեցող օսմանցիները — չէ՛ որ ամէնքի ազգայնութիւնը օսմանեան պիտի լինի — ամենայն հաւանականութեամբ կուներան Տատեաններ, Նուրեաններ, Նորատուրկեաններ — նստած Զէվդէտ, Սայիդ, Մահմուտ Զալալէդդին փաշաների կողքին: Աշրգեաններ, Օրմանեաններ, Մամբրէներ — բազմած Իլլէմաների, Միֆտիների և Ելիս-իլ-Իսլամների կշտին Օսմանեան պետութիւնը ո՛չ թէ 300, այլ 3000 այդպիսի արժանատր մեծամեծներ գտնելու շտեմարանը ունի: Այդ կողմից ո՛չ մի պետութիւն նրա հարստութեանը չի հասնիլ:

Բայց դրանով ի՞նչ. «Երիտասարդ» սահմանադրականները դրանով իրենց ո՛ր նպատակին՝ մազաչափ անգամ հասած կլինեն:

Բայց չէ, դեռ կայ վտանգ, որովհետև մի օր այնպիսի մի հայ պատգամաւոր կարող է երևիլ, որ Կիկերոն, Կատոն, Ռոխուս իր մէջը ամփոփելով հանդերձ, ունենար էլ Աշոգեանների, Նորեանների էլ հոգին, նրանց նենգամտութիւնը և լանկարծ հոգեփոխութեան մաքուր օղակներից անցնելով՝ դառնար իր ազգի շահերի ջերմ պաշտպանը և 299 իր պաշտօնակիցների հաւանութիւնը ստանար Ստորին Խորհրդարանի իր հայ ազգակցի առաջ բերած որոշումը շարունակելու, որպէսզի օրէնքի ոյժ ստանար:

«Երիտասարդներ»ը այդ պատահականութիւնն էլ են աչքի առաջ ունեցել և նրա մասին վաղօրօք հոգացել,—դեռ կար Սուլթանների ամենակարող կամքը:

Չարմանալի տրամաբանութեամբ են օժտուած եղել «Երիտասարդ Թիրքիայ»ի պարագլուխները: Երկրի մէջ եղած ամէն չարիքների նախապատճառը Սուլթանը ու սրա կառավարութեան բացարձակ միապետութիւնը համարելով հանդերձ, իրենց յուսած նորօրինակ Սահմանադրութեան մէջ բնաւ չեն խորհած մի որ և է հակակշիռ տրամադրութիւն մէջ բերելու, որ կարող լինէր՝ շատ ու քիչ, իրականօրէն, օսմանեան գահակալների կամքի բացարձակութիւնը արգիլելու իրաւունքը ունենար:

Միապետական սահմանադրական կառավարութեան եղանակ ունեցող ամէն երկիր իր Խորհրդարաններով միակ նպատակ է ունեցել. հակակշիռ, չէզոքացնել և, ի հարկին, բոլորովին անգործութեան վերածել երկրի Պետի կամքը և նրա տեղ դնել՝ Խորհրդարանների միջոցով ներկայացած՝ ժողովրդի կամ հակակշիռ, կամ գերակշիռ և կամ ամենակարող ձայնը: Եւ այդպիսի իրաւունք, կարողութիւն ձեռք բերելու համար, այդ երկիրները գետերի նման են հոսեցրել իրենց լուսադոյն գաւակների արիւնը:

Իսկ թէ ինչո՞ւ «Երիտասարդ» սահմանադրականները այդպիսի մի տրամադրութիւն իրենց յօդուածների շարքերի մէջ մտցնելուց հետո են մնացել—այդ պիտի բացատրել կամ տգիտութեամբ, կամ նենգամտութեամբ, որ անելի հաւանական է, և կամ բարեմտօրէն ենթադրելով, թէ օսմանեան գահակալները միշտ եղել են և շարունակ էլ պիտի լինեն գործվագութիւն հայրեր, իսկ հպատակները՝ հարազատ գաւակներ,—և այդ բացատրութիւններից որը որ ընդունուի, դարձեալ «Երիտասարդներ»ը իրենց առաջը եղած չարաղէտ հակասութիւններից չեն կարող ազատուիլ:

Գանգատուել Սուլթաններից, երկրի կորստեան պատճառ նրանց համարել և դրա համար էլ ժողովրդի ներկայացուցչութիւնը խնդրել, իսկ սրան միայն անգոր խորհրդատուի (consultatif) պաշտօն տալ և ուրիշ ոչինչ—դա մտքի անելի քան անկանոնութիւն է: Պատգամաւորական ժողով, Ծերակոյտ ինչ օրէնք, ինչ որոշում որ ուզեն՝ կարող են ընդունել, բայց նրանց քուէարկած օրէնքները, տուած որոշումները՝ գործադրութեան մէջ մտնելու համար՝ բացարձակապէս կախում ունեն գահակալի կամքից. սա կարող է ընդունել, կարող է և՛ մերժել, նայելով իր ինքնիշխան կամքին, որ միակ, ամենակարող և ծայրագոյն ատեանն է, և որի որոշումը վերջնականն է: Եթէ հայ ամենակարող պատգամաւորի առաջարկը անցաւ Խորհրդարան-

ներից, դեռ սա իր առաջ ունի ամէնքի վեհապետը, բացարձակ Տէրը: Իսկ եթէ սա չհամաձայնի՝—Այն ժամանակ, երևի, իր խօսքը յառաջ տանելու և օրէնքի ոյժ տալու համար, նա կարիք պիտի ունենայ զինուորական մի այնպիսի ոյժի, որ գերակշիռ լինէր սուլթանների բանակներից: Այլապէս իր առաջարկը, օրինագիծը, դատաւարտուած է յաւիտենական առաջարկ, յաւիտենական օրինագիծ մնալու:

Գուցէ մեզ պատասխանեն «Երիտասարդներ»ը, որ վերևից շնորհուածը, տիրապետող Տան տուածը այդքան էլ հազիւ լինի:—Համաձայն:—Բայց դրանով ի՞նչ շահ, ի՞նչ օգուտ, թէ՛ բուն Թիրքիային և թէ՛ նրա բաղկացուցիչ ազգութիւններին: Մի հաստատութիւն միայն այն ժամանակ կարող է օգտակար լինել, երբ իր գոյութեան առանձին իրաւունքը, կատարելիք մասնաւոր պաշտօնը ունի:

Եւ այս բոլորից յետոյ կատակերգութիւն չէ՛ անելացնել «նախարարական պատասխանատութիւն»: Պատասխանատութիւն որի՞ն:—Այն Խորհրդարաններին, որոնց ձայնը բացարձակապէս և ո՛չ մի նշանակութիւն ունի տիրող բռնապետի առաջ:

Այժմ հասկանալի է այն դառն հեգնութիւնը, այն կասկածոտ ժպիտը, որ արձակել և դեռ շարունակում են արձակել երոպական պետութեանց այն բոլոր ներկայացուցիչները, որոնք առանձին պատասխանատութիւն և իրաւունք ունեն դէպի այն ամէնը, ինչ որ կատարում է Թիրքիայում՝ երբ խնդիրը գալիս է Միդհատի Սահմանադրութեանը:

Կա՞յ մի պատճառ, որ դարերի ընթացքում ճնշուած, հարստահարուած և, իրերի բնական ընթացքով, շարժման մէջ մտնող ազգերի պայքարողների ժպիտը ևս արգիլէր, երբ լսում է Միդհատեան Պարլամենտի անունը:—«Երիտասարդներ»ը վերջապէս պիտի համոզուեն, որ երբ իրենց հայրերի եաթաղանը կատարելապէս անկարող եղաւ անհետացնել, ձուլել, լռել տալ հպատակ ազգերին, ապա նոյն անկարողութեան, նոյն անընդունակութեան պիտի դատաւարտուի և՛ իրենց գծագրած պարլամենտական մեծամասնութիւնը: «Երիտասարդ Թիրքիա»ն պիտի մտածէր, աշխատէր վերացնել, ներկայ քաղաքակրթութեան մատակարարած միջոցներով, այն բոլոր պատճառները, որոնք առիթ և միանգամայն իրաւունք էին տալիս հպատակ ազգերին դժգոհելու, ապստամբելու և ապա իրենց գոյութիւնը բոլորովին անջատել ձգտելու օսմանեան պետութիւնից: Ահա՛ թէ ինչ պիտի լինէր իրենց յուսումների հիմունքը, եթէ իրոք ցանկանում էին իրենց երկրին օգտակար լինել, նրա յարատեւութիւնը ամրապնդել, և ո՛չ թէ գանազան հնարիմացութիւններով իրենց հայրերի բռնութիւնը պարլամենտական մեծամասնութեան քօլի տակ երևան բերելու: Եւ մի՞թէ հասկանալի չէ, որ օսմանեան բանակների շարքերից ճեղքող, անցնող և իրենց ձայնը լսեցնել տուող Ազգերը, նոյնքան ընդունակ և կարող կլինեն իրենց բողոքի, իրենց իրաւունքի ձայնը լսեցնել տալ, անցնելով և՛ պարլամենտական մեծամասնութեան պատճէշից, որով նորից իրերի դրութիւնը կլինի նոյնը, ինչ որ առաջ, և «Երիտասարդներ»ը բոլորովին իզուր աշխատած կլինեն

ու առաջին անգամ իրենք հիասթափուած, երբ իրերի պահանջին միանգամայն անհամապատասխան այդ կարկառնած Սահմանադրութիւնը մի օր գործադրութեան մէջ մտնէր:

Եթէ «Երիտասարդ Թուրքեր»ը ցանկանում են որոշեալ բարերար դեր խաղալ իրենց պատմութեան մէջ, եթէ իրօք մտածում են օգտակար լինել իրենց երկրին և Ասիական Դաշնակցութեան հիմունքները ամրապնդողներին, ապա նախ պիտի աշխատեն անելի՛ ողջմտօրէն հետազօտելու, անելի՛ լրջօրէն գնահատելու, ի մօտոյ ճանաչելու իրականութիւնը՝ օսմանեան երկիրը, նրա բաղկացուցիչ ազգութիւնները: Այդ անհրաժեշտ պայմանները կատարելուց յետոյ է միայն՝ իրականութեան մատակարարած միակ հողը իրենց ռազմագիծ ընդունելով՝ որ պիտի ջանան կազմակերպուել իբրև պայքարող քաղաքական մարմին ու իրենց նպատակ անեն տապալել, յեղափոխել տիրող հիւնցած, փտած պայմանները ու նրանց տեղը դնեն իրերի իսկական պահանջներին ամենայնիո համապատասխան այնպիսի նոր հաստատութիւններ, նոր կարգեր, որից հաւասարապէս կարող լինեն օգտուել թէ՛ քաղկացուցիչ պայքարող ազգութիւնները և թէ՛ ամբողջ Թիւրքիան՝ առանց ցեղի, կրօնի և դասակարգի խտրութեան:

## VII

### «ԵՐԻՏԱՍԱՐԳ ԹԻՒՐԻՔԻԱՅԻ»Ի ՊԱՏՄԱԿԱՆ ՄԵՈՒԼՆԵՐԸ

Պատմական անուրանալի փաստ է, որ «Երիտասարդ Թիւրքիան» անելիքան կէս դար իր ունեցած գրական և քաղաքական շարժումներով՝ ցանկացել է հին, խարխաւած, կործանուելու վերահաս վտանգի մէջ գտնուող Թիւրքիայի տեղ տեսնել մի «Երիտասարդ» վերածնունդ, ներքին անդորրութիւն վայելող և անխուսափելի անկումից զերծ՝ զօրեղ և ամրապնդուած Թիւրքիա:

Բայց որ իր իղձերը, մղած բանակիւնները, պայքարները դրական և ո՛չ մի լուրջ հետեւանք են ունեցել մինչև այսօր—այդ էլ մի անհերքելի իրողութիւն է: Իսկ թէ իր փայփայած նպատակին հասնելու համար դարձեալ նա յարած մնայ իր արդէն դաւանած և հրապարակ դրած սկզբունքներին և միշտ շարունակէ հաւատարիմ մնալ մինչև ցարդ իր հետապնդած ուղեգծին, չշեղել նրանից—դա էլ անկասկած է, որ երբ և իցէ անկարող պիտի լինի որոշ, հաստատուն և օգտակար մի արդիւնք առաջ բերել: Անցեալի մէջ մի քանի անգամ կրկնուած փորձերը, կատարուած իրողութիւնները, իրերի ընդունած ընթացքը և իրենց իսկ պայքարի պատմութիւնը՝ միացած Մեծ Պետութիւնների իրենց նկատմամբ ունեցած աննպաստ գաղափարին՝ այլևս անտարակուսելի են դարձնում մեր այս ասածի ճշմարտութիւնը:

Թէ որո՞նք եղան «Երիտասարդ Թիւրքիայ»ի պատմական սխալները,— այդ մասին ի նկատի առնենք միայն գլխատրները:

Մտաւորական, գաղափարական հոսանքների տեսակէտից՝ թուրք ժողովրդի եթէ ո՛չ ամբողջութիւնը, գէթ նրա ջախջախիչ մեծամասնութիւնը,

մինչև այսօր, գտնում է զարգացման այն շրջանի մէջ, ինչ որ էին երոպական ազգութիւնները Միջին Դարերում: Մեր խօսքը, անշուշտ, թուրք այն շատ սահմանափակ միջուկի մասին չէ, որ ձգտում է ունեցել, արևմտեան ազդեցութեան ներքոյ՝ ազատուիլ շրջապատող մտաւոր կաշկանդումներից: մեր խօսքը այն մեծամասնութեան մասին է, որ հասարակ ժողովուրդ անունն է կրում և Փատիշահութեան ու Խալիֆութեան սիւնն է համարում: Արդ, այն ո՛ր դասակարգն է եղել, որ ամէնից անելի ջանացել է Թիւրքիան և մասնաւորապէս թուրք ժողովուրդը խաւարամտութեան ծածկոցի տակ պահել շարունակ և նրան կաշկանդել հին կեանքի մէջ,—կրօնական, կղերական, սոգևորական դասակարգը: Մրա ազդեցութիւնը բացարձակ և տիրապետող է եղել թուրք կեանքի բոլոր արտայայտութիւնների մէջ: Եւ անհ հէնց խընդիրն էլ այն է, որ այդ դասակարգի անհակակշիռ ազդեցութիւնը տրամագծօրէն անհաշտելի է նորագոյն պետութեան գաղափարի հետ: Թուրք կրօնականը, որպէս դասակարգ, դեռ իր թագաւորութեան մէջն է. նա իր ազդեցութիւնից ո՛չինչ ունի կորցրած: Մոլլան, Ղադին, Օչլիս-իւ-Իսլամը դեռ ոյծեր և շա՛տ զօրաւոր ոյծեր են. դեռ մի կողմ թողնենք Խալիֆութեան գաղափարը:

Արդ, ամէն երկրի երիտասարդներ, ասպարէզ մտած օրից, իրենց առաջին գործերից մէկն են արել այդ դասակարգի իրացրած իրաւունքների, արտօնութիւնների և գաղափարաբանութեան դէմ կռուել, խորտակել նրա ազդեցութիւնը, մասնաւորապէս՝ քաղաքական, տնտեսական և ընկերային խնդիրների նկատմամբ: Ժողովուրդը դուրս բերել կրօնի և կրօնականի կապակցներից,—սա է եղել նորագոյն պետութիւն ստեղծել ձգտողների կողմի մի երեսը: Սակայն այդպէս չարեցին թուրք «Երիտասարդ»ները, նրանք մինչև վերջ ո՛չ միայն կրօնական դասակարգի դասակարգային իրաւունքներից, արտօնութիւններից, նրա գաղափարաբանութեանը չդիպան և որ և է քննադատութեան նիւթ չարեցին ու չաշխատեցին նրա ազդեցութիւնը նսեմացնել և վնասակարութիւնը երեսան դնել, որպէս արտօնեալ մի դասակարգ, այլ՝ ընդհակառակը՝ նրա գոյութեան և դասակարգային իրաւունքների պաշտպանութիւնը մինչև անգամ իրենց սկզբունքներից մէկը դարձրին—ինչ որ սխալ և մե՛ծ սխալ էր: Նորագոյն պետութիւն և կրօնական դասակարգի անհակակշռելի դիրք դրանք իրարու խորտակող զօրութիւններ են: Թիւրքիան երիտասարդացնել ձգտողները քաղաքակրթութեան այդ դասը չպէտք է մոռանային, երբ խօսում էին քաղաքակրթութեան անունով:

«Երիտասարդ Թիւրքիա»ն, սկզբից ի վեր, մի ուրիշ կարեւոր սխալ էլ արեց: Ո՛վ, ո՛ր դասակարգն է, որ կրօնականի հետ միացած շարունակ քամել է թուրք պետութեան և Թիւրքիայի մէջ ամփոփուող ժողովրդների կենսական ոյժը,—կայրուածատէր, ֆէոդալ, ազնուական, աղայական դասակարգը: Եւ սակայն, «Երիտասարդ»ները որ և է ժամանակ, իրենց պատմութեան ամբողջ շրջանում, մի կծու խօսք անգամ չունեցան դրանց դէմ: Նոր պետութեան գաղափարը պաշտպանողը այդ դասակարգերի և նրանց ունե-

ցած իրաւունքների դէմ էր; որ կոտի պիտի բռնուէր և իր սկզբունքներից մէկը պէտք է անէր նրանց արտօնութիւնների ոչնչացումը: Սակայն «Երիտասարդ Թուրքեր»ը ո՛չ միայն այդ չարեցին, ո՛չ միայն Թիրքիայի ոյժերը սպառող և արտադրող դասակարգերի արիւնը ծծող այդ վամպիր դասակարգի դէմ նրանք հակառակ խօսք չունեցան ասելու, այլ նրանց իրաւունքներին և ձեռք բերած դիրքին մագաչափ անգամ դիպչել չուզեցին:

Թուրք պետութեան ողնաշարը եղած է գիղացին, երկրագործ դասակարգը: Բայց «Երիտասարդ Թիրքիա»ն ո՛չ միայն այդ դասակարգի իրաւունքները չպաշտպանեց, նրա կրած տառապանքներին արձագանք չտուեց, այլ նրա փնակը բարելաւող մի բառ անգամ չդրեց իր ծրագրի մէջ. նոյնը և ընդհանուր աշխատատեղ, արհեստատեղ, գործատեղ դասակարգի վերաբերմամբ: Սակայն իրողութիւնն է, որ այսօր, առանց աշխատատեղ և գիղացի դասակարգերի՝ մի պետութիւն արմատապէս փոխել և նորագոյն հիմունքների վրայ դնելը անհնարին է. իսկ «Երիտասարդ»ները այդ գերազանցապէս նորոգիչ ազդակները ո՛չ միայն անտես առան, այլ նրանց ճանաչել ի՛սկ չուզեցին: Սա էլ մի ուրիշ սխալ:

Իրական կեանքի արտայայտիչը լինել ձգտող և նոյն այդ կեանքի մէջ նոր գաղափարներ ներմուծել աշխատող մի մարմին դրական գործ կարող է յառաջացնել միայն այն ժամանակ, երբ կը կազմակերպուի որպէս քաղաքական կուսակցութիւն և յարատեւ շփում կունենայ ժողովրդի հետ:

«Երիտասարդ Թուրքեր»ը ո՛չ միայն չկազմակերպուեցան որպէս քաղաքական կուսակցութիւն, այս եզրի լայն առումովը, ո՛չ միայն երկրի ամէն կողմերում իրենց ճիղաւորումները չունեցան, այլ նրանք մի տեսակ ազնուապետական դիրք բռնելով՝ խուսափեցան բուն ժողովրդի մէջը մտնելուց և նրան կազմակերպելուց: Իրենց գործունէութեան ամենամեծ շրջանակը եղաւ Պոլիսը և պաշտօնատարների միջավայրը. այդ շրջաններից նրանք դուրս չեկան ու դրա համար էլ խորթ դիրք ունեցան նոյն իսկ թուրք ժողովրդի մէջ. դէռ մի կողմ թողնենք միւս բոլոր այլաւեռ տարրերը, որոնք «Երիտասարդ»ներից օգտակար սպասելիք և յուսալիք ո՛չինչ չտեսան: Եւ այստեղ էլ սխալը, մե՛ծ սխալը դարձեալ «Երիտասարդ»ների կողմն է: Որովհետև քաղկացուցիչ ազգութիւնների ձգտումները և շարժումները ո՛չ միայն իրենք չաշխատեցին իրապէս ճանաչել և ուսումնասիրել, ու նրանց արդար պահանջներին պաշտպան հանդիսանալ, այլ իրենք, սկզբից ի վեր, մի տեսակ նախապաշարեալ ընթացքի մէջ մտան և «Երուհի»ներից ո՛չ պակաս թափով ջանացին դժգոհ ժողովրդների բողոքը և շարժումները խեղդել, նոյն իսկ ամենադատապարտելի միջոցներով:

Բայց մի՞թէ, իրաւ, քաղկացուցիչ ժողովրդների ձգտումները և պահանջները անիրաւացի էին և չունէին իրենց խորունկ պատճառները. մի՞թէ «Երիտասարդ»ները իրենց իրաւունք պիտի տային այնպիսի յետադիմական գաղափարների մէջ մտնելու, եթէ իրօք նրանք ճանչցած լինէին իրականութիւնը և փոխանակ ամբողջ Օսմանեան պետութեան մէջ միայն միագործեան՝ Օսմանականութեան գաղափարին հետապնդելու, ջանային անելի

լայն հիմունքների վրայ դնել իրենց գործունէութիւնը՝ քաղկացուցիչ ազգութիւնների պատմա-անհատական իրաւունքը ճանաչել, ծրագրել նրանց համար էլ զարգացման և յառաջադիմութեան միջոցներ և այդ հիմունքներով ձգտել վերաշինել թրքական պետութիւնը:

Մի փոքր մանրամասնենք այդ խնդիրը, որ «Երիտասարդ»ների բոլոր սխալներից ամենամեծը եղաւ՝ սկզբից ի վեր:

Նայելով Թիրքիայի վրայ՝ աշխարհագրական, քաղաքական տեսակետից, աչքի առաջ բերելով նրա ամբողջութիւնը՝ իբրև պետութիւն անհատ, ուշադրութեան առնելով նրա ներքին քաղկացուցիչ մասունքները, ունեցած քաղաքական, տնտեսական, ընկերային փնակը, մի խօսքով առնելով Թիրքիան այնպէս, ինչպէս որ էր, հարց է՝ թէ արդեօք «Երիտասարդ Թիրքիայի» ծագման օրերում կարելի չէ՞ր, հնարատրութիւն չկա՞ր առաջ բերելու՝ համեմատաբար՝ ապահով, հաստատուն կոուսակցութիւնների վրայ դրուած, քաղաքական ներքին անդորրութիւն վայելող՝ վերակազմուած մի Թիրքիա, որ պահպանէր իր ուրոյն գոյութիւնը՝ իբրև պետութիւն, ազատուէր վերջնական կործանումի մղձաւանջից, որքան որ դա անխուսափելի էր նկատուում ներքին խնդիրների տեսակետից, և կարող լինէր իր ամբողջութիւնը կազմող ուժերի վրայ լեճուելով՝ արտաքին հարուածների, օտար կլանողների առաջը դիմագրաւելու:

Մեր պատասխանը դրական է, եթէ «Երիտասարդ Թուրքերը և Թիրքիան վերաշինելու ձգտող ուժերը բոլորովին ա՛յլ ծրագրով և ուղղութեամբ երևան եկած և գործած լինէին, քան ինչ որ նրանք արեցին: Եւ դրա համար էլ ասում ենք, այո՛, դէռ կար հնարատրութիւն, կար միջոց, և բաւականին ապահով միջոցներ, Թիրքիան կորստից ազատելու, նրան դնելու այնպիսի մի շարժի մէջ, որ կարողանար աստիճանաբար յառաջադիմել, հետզհետէ բարգաւաճել, յարատեւել իր գոյութիւնը՝ իբրև պետութիւն անհատ, որքան որ մի պետութիւն կարող էր յարատեւ նկատուիլ իր մէջ բովանդակուող ներքին բարդութիւնների տեսակետից, և սպահովութիւն ունենար դիմադրելու դուրսից եկած քայքայող, տապալել սպառնացող ոյժերին:

Թիրքիան, անկասկած, կարող էր վերակենդանանալ, ապրիլ, զի դրա համար նա ուներ բաւականաչափ տարրեր, անհրաժեշտ գործօճներ, որոնցից, սակայն, հարկատու էր միայն իմաստօրէն օգտուիլ և ընդհանուր գործունէութեան ու արդիւնաբերող շարժականութեան մէջ դնել, որպէսզի այդ նպատակին հասնիլը պարզ երազատեսութիւնից դուրս իրականութիւն դառնար:

Գաղափարների այս ընթացքի մէջ՝ առաջին հարցը որ ծագում է, այդ այն է՝ թէ արդեօք Թիրքիայի քաղկացուցիչ ազգութիւնների ազգային գոյութեան և ինքնավարական ձգտումները տրամագծօրէն հակառակ էին Թիրքիայի գոյութեան խարխիւների ամրապնդուելուն: Դժգոհ տարրերի, շարժականութեան մէջ մտնող օտարացեղ ժողովրդների և թուրք պետութեան մնայուն շահերի մէջ կա՞ր մի այնպիսի էական ներհակութիւն, որ անկարելի լինէր նրանց մի կերպ իրարու հետ հաշտեցնել՝ առանց մին մի-

սին ջնջելու: Քաղաքական և ընկերային բարոյութեան պահանջող, կեանքի և գոյքի ապահովութիւն ուզող, մարդկային տարրական իրաւունքների տեր լինել ցանկացող՝ նուաճող, բայց զարթոնող ազգութիւնները կարող էին բնաջինջ լինելու չափ վնասակար տարր նկատուիլ վերակազմուելիք, երիտասարդանալիք Թիրքիայի համար:

— Ո՛չ:

Եւ «Երիտասարդ»ների հէ՛նց ամենախոշոր սխալը դրա մէջը եղաւ: Եթէ այդ հարցի նկատմամբ մեր օրերի «Երիտասարդներ»ը չդատապարտեցին իրենց նախորդների սխալները և նորից—մինչև այսօր էլ—տարակարծիքութեան մէջ են ընկնում, դա միայն մի ուրիշ նոր ապացոյց է պարզ իրականութիւնը իրենց չճանաչելուն, եղածը գնահատել չկարողանալուն և շահագախիչ մի փաստ՝ մերձատր ապագայի մասին թափանցող ոգուց իրենց բոլորովին գուրկ լինելուն:

Ուրիշ խնդիր:—Արդեօք դժգոհ, քաղաքական և ընկերային բարեկարգութիւններ ու իրենց ազգային անհատական գոյութիւնը երաշխաւորող ինքնավարական հաստատութիւններ պահանջող քրիստոնեայ ժողովուրդները, այսպէս ասած՝ փրչուած, ունեցրած, արհեստական երկոյթներ, կամ քաղաքական գործի՞ք էին որ և է մի պետութեան, որի պատմական ձգտումները, մնայուն շահերը հիմնովին հակառակ լինէին Թիրքիայի գոյութեանը և վերածնութեանը, որպէսզի՝ այդ հանգամանքը աչքի առաջ ունենալով՝ «Երիտասարդներ»ը կասկածոտ և բացարձակ թշնամական ընթացք բռնէին դէպի նրանց շարժումները և նրանց իղձերը արտացոլացնող կուսակցութիւնները, ինչպէս որ արեցին:

— Երբէ՞ք:

Եթէ այդ մասին որևէ կասկած ծագի, դա կլինի պատմական հողից դուրս մի անհիմն գրգարտութիւն, որի հեղինակները իրենց մերկապարանոց տգիտութիւնը միայն ցոյց կտան գոյութիւն ունեցող երկոյթները և նրանց յառաջացնող պատճառները բացատրելու, մեկնաբանելու մէջ:

Թրքական լծի տակ հեծող ժողովրդների շարժումները անշեղ արդիւնաբար էին նրանց զարգացման և պատմական կեանքին, նրանց քաղաքական, տնտեսական, ընկերային վիճակը շրջանակող անտանելի պայմաններին: Այդ շարժումների երևիլը՝ իբրև քաղաքական մի երկոյթ՝ բոլորովին բնական, անխուսափելի էր, նոյնքան բնական որքան երկու հակառակորդ ամպերի ընդհարումը և դրա հետևանքը եղող կայծակի ու որոտումի յառաջանալը: Եւ քանի որ դժգոհ ազգերի ընդվզումը գոյութիւն ունեցող իրերի տրամագծական հետևանքն էր, ապա չկար, չէր էլ կարող լինել երկրի երեսին և ո՛չ մի բռնապետութիւն, որքան էլ որ նա ճնշիչ, զօրեղ և մեծաքանակ տարրեր ունենար, որ կարող լինէր բողոքողների ձայնը խեղդել: Այդպիսի մի բան չէր կարող լինել, իսկ եթէ լինէր, դա էր որ հակաբնական պիտի լինէր:

Ընդվզելու ձգտումներ արտայայտող ազգերի և նրանց ցանկութիւնների թարգմանը եղող յեղափոխականների դիրքը պարզ կերպով որոշող ա՛յնքան շատ նախանշաններ կային, որ երկմտութեան թեթև քօղ անգամ չէր կարող լինել՝ նրանց պահանջի հիմունքների արդարութեան և իրաւացիութեան մասին, շարժումներին մէջ մտնող ժողովուրդները և նրանց արտադրած պայքարող մարմինները, սկզբից ի վեր, ամենայն բացութեամբ հրապարակ էին դրել իրենց բողոքի ցանկը գոյութիւն ունեցող պետական-բռնապետական չարիքների դէմ, և մատնանիշել նրանց փոխարինող իրական դարմանները, ծրագրերը՝ որոնք իրենց ամբողջութեամբ, իրենց էութեամբ անելի շինիչ, դրական կողմեր էին ներկայացնում, նոյն իսկ թրքական շահերի տեսակէտից, քան քանդիչ, բացասական, եթէ Օսմանեան դեկավարիչ ոյժերը, ինչպէս և «Երիտասարդ»ները՝ մի փոքր անելի լայն խորհած լինէին և փոխանակ ոյժի իրաւունքի, արդարութեան իրաւունքը ճանաչած լինէին,—ինչպէս որ արել էին նոյն կացութեան մէջ գտնուող ուրիշ պետութիւնների մէջ գործող ոյժերը:

Անշուշտ կարելի էր, գուցէ, զարթոնող ժողովրդների փափաքները ամփոփող ծրագրերի զանազան կէտերի, հետաւոր շրջանների համար մտածմունքներ պարունակող խնդիրների մասին վիճել, հակառակել,—այդ կարելի էր և դա ո՛չ մի լուրջ վնաս կարող էր բերել դէպի ընդհանուր խնդիրները, ընդհանուր գործը, ինչ որ վերաբերում էր բոլոր տարրերի համերաշխութեան և համագործակցութեանը, պայմանով սակայն որ մին միսին պատուանդան դառնալու սխառտե՛ր չընդունէր: Եւ այս էլ ասենք, անմիջապէս՝ որ տարօրինակ ոչինչ չկայ. ամէն ընկճուած ազգ, ամէն հաւաքական մարմին, ամէն պայքարող կազմակերպութիւն, միշտ՝ իր կենսականութեան և գոյութեան իրաւունքի գրաւականներից առաջինն է համարել ունենալ և՛ իր շա՛տ հետաւոր նպատակները, իր երազները ի՛սկ, որոնք եղել են իրենց մղիչ խրախոյսը, դրդող ազդակը, ոգևորող, թոհչք տուող իղէալը: Դա եղած է ամէն տեղ, ամէն ժամանակ, անհրաժեշտ էր որ նոյնը լինէր և՛ Թիրքիայի բաղկացուցիչ մասերը կազմող ազգութիւնների մէջ:

Բայց խնդիրն այն է՝ թէ տրտնջող, բողոքող, ապստամբող ազգերի, նրանց մարտնչող մարմինների արտայայտած նախնական արդար իղձերը, առաջադրած անմիջական նպատակները երբէք չէին հակառակում Թիրքիայի բուն մնայուն շահերին՝ իբրև պետութեան: Նրանց սկզբնական պահանջները և ո՛չ մի միտում ունէին թուլացնել, ջլատել, քայքայել և վերջապէս կործանել Թիրքիան՝ գլորելով և՛ թուրք ժողովուրդը: Ո՛չ, այդպիսի բան չկար. յեղափոխական շարժումների դիմող, այսօր իրենց անկախութիւնը և կիսանկախութիւնը ձեռք բերող ժողովրդների պատմութիւնը այնտեղ է հաստատելու համար, որ Թիրքիան բոլորովին ուրիշ վիճակ և բախտ կունենար, եթէ նա ունեցած լինէր ա՛յնպիսի բանհրոն պետական անձնատրութիւններ, որոնք ընթացած լինէին ո՛չ թէ ասիական, այլ երոպական քաղաքակրթութեան տուած ճանապարհներովը և հիմունքներովը՝ ինչ որ վերաբերում է բաղկացուցիչ այլատարր ազգութիւններից կազմուած մի պետութեան վերաշինութեանը:

Բողոքող ժողովուրդների բարեկորոզական համեստ փափաքները, նրանց պահանջած քաղաքական, տնտեսական, ընկերային՝ իրենց զարգացման համապատասխան՝ հաստատությունները իրենց ամբողջությամբ ո՛չ թե Թիրքիան կործանելու, քայքայելու, այլ վերաշինելու առատ աղմուկ ունեին, եթե միայն «Երիտասարդ»ները այդ հանգամանքից, իրերի առաջ բերած այդ նոր դրությունից և հոսանքից խելօք կերպով օգտուել գիտենային:

Եթե «Երիտասարդ Թուրքեր»ը ցանկանում էին իրենց ընդհանուր հայրենիքի իրական վերածնությունը.—բաղկացուցիչ ազգությունների մասնատր ցանկությունները դրան ներհակ չէին: Եթե իրենք փափաքում էին ներքնապես խաղաղեցնել, ամրապնդել Թիրքիան, տալ նրան գոյութեան ամուր նեցուկներ,—բողոքող ժողովուրդները դրան ընդդեմ չէին: Եւ եթե իրենք ընդհանուր միտում ունեին ապահովել իրենց երկիրը օտար պետությունների կլանող ախորժակից և նրա յարատևութեան պայմանները արտաքին հակամարտ ազդեցությունների ու մրցումների երերում պիքներից հանելով՝ ներքին բաղկացուցիչ տարրերի զօրութեան վրայ դնել, որպեսզի այդպիսով ապրելու և յառաջադիմելու երաշխաւորություններ ունենար,—տառապող, մարդկային և ազգային գոյութեան անհրաժեշտ իրաւունքներ պահանջող ռայեայ ժողովուրդները դրան ո՛չ միայն հակառակ չէին, այլ իրենց շարժումներով, իրենց անմիջական ձգտումներով՝ նրանք առաջինն էին բերում ընդհանուր վերաշինութեան անկիւնաքարը իրենց Հայրենիքներում, որի անունով միայն նրանք իրաւունք և պարտականութիւն ունեին խօսելու, պահանջներ յայտնելու և, ի հարկին, գէնք վերցնելու:

Իրապէս բարեփոխուելիք Թիրքիային իրենց վիճակին բարեփոխութիւն պահանջող՝ նուաճող երկիրները մահացու հակառակորդ չէին, մի փոքր հեռատես աչքի համար: Հարկաւոր էր միայն ամէն մէկ երկրի տեղական պահանջներին համեմատ բարեփոխությունների սխաւէմ ընդունել և իրականացնել աշխատել,—ինչ որ չմտածեց անել «Երիտասարդ Թիրքիան»:

Վեր առնելով կողմերի ընդհանուր իղձերի ամբողջութիւնը, ուղղութիւնը, նրանց տաճած գաղափարների, ծրագրերի նուազագոյնը՝ անմիջական, բաղկացուցիչ ազգությունների Երիտասարդների և «Երիտասարդ Թուրքեր»ի ընդհանուր ձգտումների միջև—ընդունելով որ սրանք անկեղծ են—էական, գլխաւոր մի տարբերութիւն եթէ կայ, այդ այն է՝ թէ ի՞նչ միջոցներով, ի՞նչ ուղեգծերով, ի՞նչպէս և ի՞նչ հաստատություններով կարելի էր հասնել այն մօտաւոր նպատակներին, որոնց իրագործումից կարող լինէին օգտուել թէ՛ Հայ, թէ՛ Արաբ, թէ՛ Մակեդոնական ազգությունները և թէ ընդհանուր Թիրքիան: Ի՞նչպէս անել՝ որ ամէն ինչ քանդող, կործանող Բոնակայութեան դէմ մղած պայքարի արդիւնքից բուսականութիւն ստանային թէ՛ «Երիտասարդ Հայեր»ը, թէ՛ «Երիտասարդ Արաբներ»ը, թէ՛ «Երիտասարդ Մակեդոնացի»ները, և այլն, և թէ՛ «Երիտասարդ Թուրքեր»ը, եթէ սրանք ձեռք ձեռքի տային մի օր:

Ահա պարզ, որոշ, պատմական նշանակութիւն ունեցող հարցը, որի վճռելուն համար հարկաւոր էին, և հարկաւոր են, ո՛չ միայն անկեղծ, այլև կարող, ստեղծող ոյժեր:

Իրուած հարցին անմիջապէս պատասխանելուց առաջ նորից մատնափշ ենք անում այն փաստը, առաջին՝ որ «Երիտասարդ Թուրքեր»ի պաշտպանած գաղափարները և այդ գաղափարներին հասնելու համար գործ դրուած միջոցները մինչև ցարդ դրական և ո՛չ մի արդիւք են առաջ բերել՝ Թիրքիայի թէ՛ ներքին և թէ՛ արտաքին խնդիրների տեսակետից: Երկրորդ՝ Թիրքիան այսօր էլ նոյն ընդարմացած, անդամալուծուած, նոյն անկայունութիւն ներկայացնող պետութիւնն է, ինչ որ դեռ շա՛տ դարեր առաջ: Այժմս էլ Օսմանեան պետութեան մէջ լիաժապ գոյութիւն ունեն նոյն քայքայիչ տարրերը, յուզում են նոյն խնդիրները և նոյն պայքերն են ուղղուած դէպի նրա սիրտը ու իր վերջնական տապալումը անխուսափելի դարձնում—եթէ եղածը շարունակուի—ինչ որ կային դեռ «Երիտասարդ»ները ասպարէզ չմտած: Այնպէս որ՝ եթէ «Ծերունիներ»ը քանդեցին, կործանեցին, մահուան դուռը հասցրին, «Երիտասարդ»ներն էլ «Հիւանդ Մարծանեցին, մահուան դուռը հասցրին, «Երիտասարդ»ներն էլ «Հիւանդ Մարդ»ը բուժել, ելեկտրացնել, իրեն սեպհական ոտքերի վրայ դնել չկարողացան: Պատմութեան անողոք դասը այնտեղ է, նա կենդանի վկայ է:—Ի հարկէ, այդ բոլորը միա՛յն և միա՛յն նրա համար, որ Ռէշիդը և իր բոլոր յաջորդները օսմանեան պետութիւնը կազմող տարրերը ճանաչելու, գնահատելու իրական կորովամտութիւնը չունեցան, չկարողացան կանոնաւոր, կազմակերպուած պայքարող մարմին կազմել և իրենց ընդհանուր երկրի ու նրա տարածութեան վրայ բնական ժողովուրդների իսկական պահանջներին համապատասխան նպատակաւարմար քաղաքական հաստատություններ ձեռք բերելուն ձգտել: Եթէ «Երիտասարդ»ները եղածների, գոյութիւն ունեցող ամէն դժուարութիւնների միակ պատասխանատուն համարում էին «Ծերունի»ներին, ապա ո՛չ նուազ մեղադրանքի արժանի են և՛ իրենք, զի ամէն մարտնչող մարմին, ամէն պայքարող կազմակերպութիւն իր առանձին պատասխանատուութիւնն ունի՝ ամէն տեղ և ամէն ժամանակ:

Եղաւ այն, ինչ որ պիտի լինէր, զի դա անխուսափելի էր:

Եւ ի՞նչ էր եղած անխուսափելին,—այն՝ որ Օսմանեան պատմութիւնը ստեղծել էր անամբողջացման (désintégration) պատճառներ և իրողութիւններ: Բաղկացուցիչ ազգությունները բնական ուրիշ ճանապարհ չգրտնելով՝ միշտ ձգտել էին բաժանուել, անջատուիլ, ազատուել Օսմանեան բռնապետութիւնից: Եթէ «Ծերունի»ները դրա համար մեղադրում էին, «Երիտասարդ»ներն էլ գործեցին պատմական այն խոշոր սխալը, որ իրենք էլ չուզեցին ճանաչել նուաճող, բայց զարթնող ազգությունների ազգային անհատական գոյութեան իրաւունքը և չձգտեցին նրանց պահանջներին բարարութիւն տալու նպատակ ունեցող քաղաքական հաստատություններով օժտել ընդհանուր Թիրքիան. ուստի թէ՛ «Երիտասարդ»ները իրենք անյաջողութեան բաղխեցան և թէ պայքարող ազգությունները նրանցից ո՛չինչ ակնկալելիք չունենալով՝ շարունակեցին իրենց նախկին ուղեգծերովը ընթանալ: Պատմական այդ կարևոր սխալը անելի կարկառուն կերպով դուրս ցայտեցնելու համար՝ անցնենք բուն խնդրին և հարցն այսպէս դնենք:

— Թէ որո՞նք են այն հաստատութիւնները, այն միջոցները, որոնք կարող են բարեկարգել թէ՛ ընդհանուր Թիրքիան և թէ՛ անմիջական կերպով մասնակի գոհացումն տալ պայքարող Հայաստանին, Մակեդոնիային, Արաբիային, Ալբանիային, և այլն:—Նախ քան այդ հարցերին անցնելը՝ հարկաւոր է քննութեան առնել ընդհանուր գործողութեան թատր եղող միջավայրը և հարցնել՝ թէ ի՞նչ է Թիրքիան:

## VIII

### ԹԻՐԻՔԻԱՅԻ ԻՐԱԿԱՆ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱԶՄԸ

Ի՞նչ է եղած անցեալի մէջ և ի՞նչ է այժմս Թիրքիայի ընդհանուր կացութիւնը և նրա կազմը՝ բաղկացութիւնը:

— Իր բաղկացութեամբ, կազմի տեսակէտից՝ Թիրքիան տարասեռ (hétérogène) ժողովրդներից բաղկացած մի պետութիւն է, որի այլազան տարրերի մէջ հաստատուն, տեսական և ո՛չ մի կապ կայ՝ բացի իշխող բռնապետութեան վարչական և օրէնդրական դրութիւնից յառաջացած փոխադարձ յարաբերութիւնները, որոնք ատէլի վանիչ, անջատող բնատրութիւն ունին, քան միացնող, մօտեցնող, համերաշխական զգացումներ ստեղծող: Հակառակ իրենց կամքի՝ մի բնատրի միահեծանութեան տակն են մտած տարբեր ցեղեր, — մարդկանց այնպիսի տեսակներ, որոնք ունեն հաստատուն և փոխանցելի բնորոշ գծեր, և հետևաբար այլատեղ համախմբումների անջատումը բնական է, ծնունդ անցեալի և ո՛չ թէ արհեստական: Ուրեմն, իր ամբողջութեամբ՝ օսմանեան կայսրութիւնը իրարու մօտ դրուած մի հաւաքածու, մի շեղջակոյտ է զանազան ազգութիւնների, որոնցից իւրաքանչիւրը ունի իր սեպհական կեանքը, տարբեր անցեալը, լեզուն, կաշկանդող սովորութիւնները և այն բոլոր ազդակները, որոնք մի համախմբութեան օղակող գծերն են կազմում՝ միւսներից տարբերելու համար: Այդ բոլորի վրայ բարդում է և՛ այն հանգամանքը, որ գոյութիւն ունեցող ազգութիւնները կոլտորայի, քաղաքակրթութեան տարբեր աստիճանների վրայ են գտնուում, — այն՝ ինչ որ մէկի համար կենսական, իրական պահանջ է, միւսի համար գոյութիւն չունի:

Ու վերջապէս, պարզ իրողութիւն է և՛ այն, որ այդ չձուլուելիք, հակամարտ ձգտումներ ունեցող տարրերը իրարից բաժանում են և՛ աշխարհագրական, ժողովրդագրական տեսակէտով ու անջատ՝ բաւականին հոծ միութիւններ են կազմում: — Ահա թէ ինչո՞ւ օսմանեան պետութեան մէջ դարեքից ի վեր յուզում, յառաջ են գալիս այն բոլոր խնդիրները, որոնք տարասեռ ժողովրդներից բաղկացած մի պետութեան անբաժան մասն են կազմում: Քաղաքական համանման դրութիւն ունեցող ամէն պետութիւն, թէ՛ անցեալի և թէ՛ ներկայի մէջ՝ շարունակ ենթակայ է եղել այն բոլոր ներքին խռովութիւններին և յուզումներին, որոնք երէկ և այսօր գոյութիւն ունեն Թիրքիայում: Այն՝ ինչ որ կատարում է այժմս, — անխուսափելի էր:

Մշմարիտ է, Օսմանցին իր զենքին կրթեամբ, ամենագորարորի իրաւունքը՝ իրեն սկզբունք արած՝ շատ անգամ յաջողել է այդ օտարասեռ ժողովրդներին հնազանդութեան, հպատակութեան շարի մէջ պահել, բայց միայն այն հանգամանքը՝ որ նա իր պատմական կեանքի մէջ անկարող է եղել այդ բոլորին տարրալուծել, նրանցից մի ամբողջութիւն կազմել, — այդ ցոյց է տալիս որ իր զենքը ամէն ինչ չի եղել և նրանով ամէն իր ուզածը չէր կարող կարգադրել. արդ՝ բացարձակ անհրաժեշտութիւն է, որ գոյութիւն ունեցող ազգերի իղծերը, ձգտումները հաշտի առնուին, եթէ ցանկութիւն կայ որ Թիրքիան իր գոյութիւնը շարունակի, և ինքն իր ձեռքով իր տապալումը չարագացնի:

Ազգերի պատմութիւնը անհերքելի շատ փաստեր ունի իր մէջ բովանդակած այն մասին՝ թէ ինչպէս տարասեռ տարրերից կազմուած մի պետութիւն անկարելի է ներքին խաղաղութեան մէջ պահել՝ միանման, համատեղ հաստատութիւններ պարտադրեցուցիչ դարձնելով բաղկացուցիչ բոլոր ազգերի համար, նամանաւանդ երբ տիրող տարրը եղել է թոյլ, ժամանակի յառաջադիմական հոսանքից լեռ մնացած: Եթէ բնակալ տիրողի սուրը չի կարողացել այդ դէպքում բացարձակ լուծութիւնը, անձայն հնազանդութիւնը մշտնջենաւորել, — նրա գծած միակերպ օրէնքները, Քաղաքական միանման Հաստատութիւնն էլ անզօր են եղել այլազան ժողովրդների մէջ ներքին խաղաղութիւնը յարատև և բացարձակ պայման դարձնել:

Եթէ իրերի բնատրութիւնն է որ տալիս է օրէնքներ, ապա նոյն այդ իրերի մնայուն պայմաններն էլ տալիս են միջոցներ մի երկիր, մի պետութիւն կառավարելու, ամրապնդելու:

Տարասեռ ժողովուրդներ բովանդակող պետութիւնների տիպարը կարող է համարուել Աւստրիան: Այդ երկիրն էլ ունեցել է իր ծանր ճգնաժամերը, երբ իր վերջնական անկումը անխուսափելի է նկատուել, և այդ կասկածը կայ մինչև այժմ: Արդ, այդ բազմալեզու պետութեան թագակիրների, պետական անձերի հոգացողութեան գլխաւոր առարկան է եղել՝ թէ ի՞նչպիսի օրէնքներով, ի՞նչ հաստատութիւններով կառավարել այդ բազմալեզու ազգերը, որպէսզի ներքին խաղաղութեան հետ մէկտեղ պետական միութիւնը չվտանգուէր: Դրուած հարցին պատասխանել է, միշտ, երկու որոշ քաղաքականութիւն, որ Աւստրիայի ներքին կեանքի տիրապետող ուղեգիծն է եղել:

Եղել են կառավարիչներ, քաղաքագետ անձեր, որոնք այդ պետութեան յարատևութեան և ապահովութեան պայմաններն են համարել՝ տալ ամբողջ երկրին միակերպ օրէնդրական հաստատութիւններ, համանման վարչական կարգ ու կանոններ, առանց ամենափոքր չափով ուշադրութեան առնելու բաղկացուցիչ ազգութիւնների պատմական իրաւունքները և տեղական պահանջները: Ամէն ինչ հարթող, հաւասարեցնող այդ քաղաքականութեան մարմնացումն են եղել Յովսէփ Բ.-ը և Մետտերնիխը: Երկուսն էլ խելօք, հանձարեղ մարդիկ. բայց որովհետև իրենց հետևած քաղաքականութիւնը գոյութիւն ունեցող իրերի պահանջին տրամազօրէն հակառակ էր, ուստի:

երկուսն էլ, զանազան ժամանակներում, գերեզմանի դուռը հասցրին Աստրիան: Այսպէս, մի անգամ էլ ցոյց տալով՝ որ բնագանգական մտածմունքները, a priori յղացումները, ինչքան էլ որ լաւ կերպով արտայայտուին և կորովամիտ թարգմաններ ունենան,—դեռ հերիք չեն, իրենց զատ անհատականութիւնը ունեցող ժողովրդներին մի կաղապարի մէջ ձուլելու, նրանց՝ պետական մի ընդհանուր յայտարարի վերածելու:

Սակայն գտնուել են պետական գործերը վարող և՛ այնպիսի անհատներ, որոնք առաջին քաղաքականութեան ճիշտ հակառակն են գնացել:—Տալ այլազան ժողովրդներին ո՛չ թէ միօրինակ, այլ տարասեռ, տեղական պահանջներին համեմատ՝ տեղական հաստատութիւններ: Այսինքն՝ տարբեր երկիրների պատմա-քաղաքական անհատականութիւնները աչքի առաջ ունենալով՝ այն տեսակ հաստատութիւններով օժտել երկիրը, որ մի կողմից իրաքանչիւր ազգութիւն իրատուք և միջոց ունենար իր ազգային անհատականութիւնը պահպանելու և միւս կողմից՝ տարբեր միութիւններ կազմող այդ երկիրները՝ տեղական հաստատութիւնների միջոցով՝ պետական միացուցիչ հաստատութիւններով իրարու հետ կապուէին: Առաջին նպատակին հասնելու հնարարութիւնը նրանք համարեցին Տեղական Օրէնսդրական Ժողովները (Ländtag, (Diète), իսկ երկրորդին՝ Ընդհանուր Պատգամատրական Ժողովը (Reichstath): Ժողովրդի ընտրած ներկայացուցիչներից կազմուած Ländtag-ը կարողանում էր, յայտնի աստիճան, ինքնավար կերպով տնօրինել տեղական թէ՛ օրէնսդրական և թէ՛ վարչական գործերը, իսկ Reichstath-ը, առաջ Ländtag-ներից որոշեալ թուով ուղարկուած ներկայացուցիչների և այժմս ընդհանուր, ուղղակի գաղտնի և հաւասար քուէարկութեամբ ընտրուած Պատգամատրների միջոցով, իբրև տարբեր միութիւնների Կեդրոնական Մարմին, ներկայացնում են Պետական ամբողջութիւնը, միութիւնը:

Աստրիային անկումից ազատող և նրան համեմատական կենսունակութիւն տուողը եղել է այս երկրորդ քաղաքականութիւնը, որի գլխատըր արտայայտիչներն են եղել Շմերլինգը և Բէտտը՝ վերջինս մասնատրապէս Հունգարիայի նկատմամբ—որ թէև մի փոքր տարբեր ձևով կապեր ունի Աստրիայի հետ, բայց սկզբունքը նորից նոյնն է:

Եթէ այս երկրորդ քաղաքականութիւնը և նրանից յառաջացած հաստատութիւնները չլինէին—Աստրիան վաղուց ջնջուած կլինէր երոպական քարտէզից: Եւ եթէ մի օր այդ պետութիւնը ընկնի,—լրիս և մինչև վերջ այդ սխառտմին հաւատարիմ չմնալը պիտի լինի:

Ահա՛ առիթ, մտաւորապէս, ներքին այն քաղաքականութիւնը՝ որ դեռ շատ երկար ժամանակներ առաջ իրենց ղեկավարիչ սկզբունքը արած պիտի լինէին և՛ թրքական պետական անձերը ընդհանրապէս, իսկ «Երփտաարդ»ները՝ մասնատրապէս, եթէ մի քիչ խորաթափանց միտք ունենային իրականութիւնը ճանաչելու և ողջմտօրէն գնահատելու:

Մենք դիտմամբ խոյս տուցինք օրինակ բերելու տարասեռ ազգութիւններից կազմուած այն պետութեանց հաստատութիւնները, որոնց ժողովուրդ-

ները յառաջդիմութեան, քաղաքակրթութեան անելի բարձր աստիճանների վրայ են կանգնած, քան աստրիականները:—Զուիցերիան, Միացեալ-Նահանգները, Անգլիական գաղթավայրերը և նրանց ընդգրկած քաղաքական կազմը կարող է ամենահամոզիչ փաստը և օրինակը լինել՝ զանազան քաղկացուցիչ տարրերից և այլացել ժողովրդներից կազմուած պետութիւնների վերանորոգուելուն և երիտասարդանալուն:

Ռուսական բաժնի՝ ինքնավար Լեհաստանի խորտակելը Ռուսիային շատ մեծ ամրապնդում չբերեց: Ֆինլանդական ինքնավարութիւնը ոչնչացնել ձգտող ցարիզմը ինքը պարտուեց և ստիպուեցաւ խոստովանիլ, որ մի պետութեան մէջ ամփոփուող տարասեռ ժողովրդներին մի ազգութեան, մի համասեռ ամբողջութեան ենթարկելու քաղաքականութիւնը իր անյաջողութեան վերջին խօսքն ասել էր քաղաքակրթութեան ներկայ զարգացման աստիճանին մէջ:

Պրուսական quasi սահմանադրական միապետութիւնը՝ հակառակ իր օտարակուլ քաղաքականութեանը և ձեռք առած օրէնսդրական ամէն տեսակ բացառիկ միջոցներին, անկարող եղաւ Պօզնանի մի բուն լեհ ժողովրդին արմատախիլ անելու՝ նրան ապագայնացնելու, նոյնացնելու (assimiler), գերմանացնելու:

Սակայն իրողութիւն է, որ մինչև երեսնական թուականները՝ թրքական պետութիւնը անկման այնչափ ախտանշաններ էր ցոյց տուել, որ փոքր իշատէ կորովամիտ մի բարենորոգչի համար դժուար չպիտի լինէր խուզարկել, գտնել այն կուսակները, որոնց վրայ միայն յենուելով Օսմանեան բազմալեզու կայսրութիւնը կարող պիտի լինէր թէ՛ ներքին խաղաղութիւն վայելել և թէ՛ իր գոյութիւնը ապահովել արտաքին հարուածներից: Եթէ այդ ժամանակուան թուրք երիտասարդութիւնը ա՛յնքան կարճատես գտնուեց՝ որ այլապէս տարբեր ընդհանուր կոտորածը, ամբողջական կրօնափոխութիւնը ամենաւէական պայմաններից մէկը դատեց Թիրքիայի ապագայ ապահովութեան տեսակէտից, դժբախտաբար յիսնական, վաթսնական թուականների «հետևակ» բարենորոգիչներն էլ տարտամ ձգտումներ յայտնելուց միւս կողմը չանցան. իսկ եօթանասնական՝ Միդհատեան շրջանի «մեծամուկներ»ը բռնեցին մի կեղծատըր, անգամիտ դրութիւն, ճիշտ զուգահեռականը այն «Մերունիներ»ի, որոնք գոյութիւն ունեցող դժուարութիւնների ժամանակատըր հեռացումը, յապաղումը՝ լուծում էին համարում: Հետևաբար, Միդհատեան շրջանից մնացած բեկորները այժմ բռնուած են մի անողորք երկատածի մէջ,—կա՛մ հետևել իրենց նախորդներին և հանդիսատես լինել Թիրքիայի դրդալից կործանմանը, կա՛մ թողնել իրենց պատմականօրէն արդէն դատապարտուած սկզբունքները և գծել նո՛ր ուղի, նո՛ր միջոցներ ու այդպիսով իրենց երկրի ընդհանուր վերաշինութեան գործը հաստատուն հիմունքների վրայ դնել,—հիարկէ, եթէ իրօք ցանկանում են մի բան, մի գործ առաջ բերել, և ո՛չ թէ թղթային ցոյցերով խաղի բռնուել: Մանաւանդ որ ուղղամտօրէն պայքարել ուզող՝ Թիրքիայի իրական վերածնութեանը՝ նախանձախնդիր թուրք անհատների գործը այժմ և՛ ս անելի դիրացած է.

բաղկացուցիչ ազգութիւնների մարտնչող մարմինների երևան գալովը, որոնք՝ իբրև կոուռ ոյժ, իրենց պաքները ուղղած են դէպի նոյն բռնապետութիւնը, նոյն աներող, քանդող Ընդհանուր Թշնամին, որի quasi-հակառակորդն են համարում և՛ իրենք:

Եւ մենք իրերի անխուսափելի ընթացքը «Երիտասարդ»ներին մի անգամ էլ յիշեցնելու համար էր՝ որ բառականացանք միայն մատնանիշել բարեկորգումների այն ընդհանուր ուղղութիւնը, ոգին, որ կարող պիտի լինէին տեղ գտնել, անհրաժեշտաբար, այն «Երիտասարդ Թուրքեր»ի ծրագրերում, որոնք դեռ կամէութիւն են ցոյց տալիս զանազան բարեկորգումներով յետս կասեցնել Թուրքիան իր անխուսափելի անկումից՝ եթէ իրերի առաջումս դրութիւնը շարունակուի, յայտնի բան է:

Մի կողմ թողնելով միւս երկիրները՝ դառնանք այժմ Հայաստանին:

Այստեղ խնդիրը անելի պարզ, որոշ և շօշափելի ձև ունի առած:

## IX

### ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԹՒՐԿԻԱ

Հայաստանը իր աշխարհագրական դիրքով Թուրք պետական, կայսերական բերդի դուռն է կազմում: Հայաստանը ունենալով՝ Օսմանցին բերդի քանալին իր ձեռքն ունի, իսկ առանց նրան՝ նա ո՛չ միայն ամրոցի տէրը չէ, այլ այդ ամրոցը գոյութիւն իսկ ունենալ չի կարող, ինչքան էլ որ նա փոքր ծաւալի վերածուէր:—Կ. Պօլսի փականքը Հայկական բարձունքների վրայ պիտի որոնել:

Հայ ժողովուրդը Օսմանեան պետութեան կենսաբեր շիրը, նեարդն է կազմում: Առանց այդ աշխատաւեր, արտադրող, ստեղծող ժողովրդի, Թուրք պետութիւնը իր ունեցած միւս տարրերով կարող է մի խառնիճաղանձ, վաշկատուն ամբոխ կազմել, ցրուած անելի կամ նուազ ընդարձակ մի տարածութեան վրայ,—բայց ո՛չ թէ մի կանոնաւոր, կազմակերպուած պետութիւն՝ նոր մտքով:—Հայը Թուրք պետութեան պահպանող պատուանդանը, արիւնատար երակն է:

Եթէ անվիճելի է, որ Հայաստանը Թուրքիայի շտեմարանն է, ապա նոյնքան անտարակուսելի է, որ Հայ ժողովուրդն էլ այդ շտեմարանը լըցնողն է:

Շատերի կողմից Օսմանցին «ընտիր զինուորների մի կոճղ» է նկատուել: Կայ պատմութիւն՝ Հայը զինուորական այդ յատկութեան հետ երեւան է բերել և՛ մի ուրիշ անելին—շինող, կազմակերպող, ստեղծող: Եւ մինչդեռ Օսմանցին իր պատերազմական խանդը դուրս թափելուց յետոյ լճացել, փայտացել, կանգ է առել, տիրապետել՝ առանց կանոնաւորել կարողանալու,—Հայը, եթէ յաղթող՝ ներդաշնակել է, եթէ յաղթող՝ իր վերջն է գոցել, իր ոյժերը կազդուրել և շարունակ, մի՛շտ յառաջադիմել: Եւ այսօր Հայը տէր է մի կուլտուրայի, բովանդակող է քաղաքակրթական այնպիսի տարրերի, որոնցից այժմս բոլորովին գուրկ է Օսմանցին՝ ընդհանուր զանգուածային տեսակետից:

Եթէ եղաւ մի Բէօստ, որ փշրուած, խորտակուած Աստրիայի համեմատական կայունութիւնը Հունգարական ժողովրդի ազատասիրական արդար ձգտումներին բառականութիւն տալու մէջ տեսաւ,—դժբախտաբար՝ Թուրքը իր պատմական երկունքի մէջ մի Բէօստ արտադրելու անընդունակ եղաւ: Բայց Հայը իր հատու գէնքի, իր կորովի բազկի հետ միասին Օսմանեան պետական մեքենան վարող, յառաջ մղող նիւթն էլ պիտի տար: Եւ Օսմանցին՝ «Ծերունի» կամ «Երիտասարդ» անհեռատես Օսմանցին՝ ժամանակաւոր պտուղը վայելելու համար, աշխատեց ծառը արմատաքի տապալել. մոռանալով սակայն, որ այդպիսով իր ինքնասպանութեան գործիները իր ձեռքովն էր պատրաստում: Իր ամրապնդման, իր ինքնագոյութեան շահը միայն առաջնորդ բռնելով՝ Թուրքը, եթէ մի քիչ թափանցող խելք ունենար, դեռ շա՛տ վաղուց, ինքնաբերաբար, պիտի ջանար Հային գոհացնել, նրան յառաջադիմութեան մասնաւոր պայմաններ տալ, և այդ՝ նոյն իր շահի, իր ապահովութեան տեսակետից: Իսկ փոխանակ դրան՝ նա Հայերիս նկատմամբ սկզբում հետևեց քանդող, ստրկացնող քաղաքականութեան և վերջն էլ՝ բացարձակ ջնջման:

Այսպէս, դարերից ի վեր Հայը իր Մայր-Երկրի մէջ կրեց ամէն տեսակ հալածանք, ենթարկուեց ամէն կարգի հարստահարութեանց, կանխամտածութեամբ քաղաքական և ընկերային ամենաստորագոյն վիճակի մէջ դրուեց և որոշուեց գործն ոյժեր էլ՝ նրան յարատևօրէն այդ դրութեան մէջ պահելու,—բայց այդ բոլորի միջից անցնելով՝ Հայը ընդունակ և կարող եղաւ մի կողմից իր վրայ ծանրացող, իրեն կաշկանդող, քայքայել, ոչնչացնել ուղղ տարրերին դէմ դնելու և միւս կողմից էլ՝ Մայր-Հայրենիքի մէջ իր կենսականութիւնը պահպանելով՝ նոր կեանքի ձգտելու:—Տառապանքի, երկունքի այդ շա՛տ երկար տարիներում՝ Հայը երևեց մի կողմից իր ունեցած յամառօրէն պահպանող, իսկ չունեցածի, կորցրածի համար՝ ձգտող, մարտնչող: Եւ այսօր, չնայելով իր գլխով անցած հին ու նոր ամէն աղէտներին, նա դեռ ապրում է հոժ բազմութեամբ այն երկրի մէջ, որին համաշխարհային պատմութիւնը ճանաչել է Հայաստան անունով:

Աշխարհակալական իրաւունքով Թուրքը այդ երկիրն էլ իր կայսրութեան մի մասն է դարձրել: Բայց մի այնպիսի մասը, որ միւս մասերից տարբերում, անջատում է թէ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ տեսակետով և թէ ՅԵՂԱԳՐԱԿԱՆ, ու կազմում մի անջատ ձուլ, մի ընդարձակ տարածեռ մարմնի՝ անշարակից կտորը: Հայ ազգի ՊՍՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԽՈՒՆՔԸ այդ երկրի վրայ որ և է վիճաբանութիւնից վեր է և ամենափոքր առարկութեան ի՛նչ տեղիք չի կարող տալ, զի այդ իրաւունքը ճանչցուել և յարգուել է հազարաւոր տարիներից ի վեր:—Այն ժամանակ՝ երբ Օսմանցին գոյութիւն ի՛նչ չուներ, երբ նա իր ամբոխային կազմակերպութեան մէջ դեռ չէր մտած, ինչպէս և յետոյ՝ այդ բոլոր ժամանակներում՝ ՀԱՅԻ ՊՍՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԽՈՒՆՔԸ կար և գործում էր այդ երկրի մէջ: Չնայելով իր քաղաքական անկմանը՝ Հայը իր Հայրենիքի մէջ դարերի ընթացքում շեղջել, մթերել է և իր հարմազատ զաւակների արիւնով ոռոգել, ոռոճացրել է ա՛յնքան շատ

անանցանելի կոթողներ, որ ՀԱՅԻ ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ դեռ շա՛տ ու շա՛տ դարեր էլ աներկբայ կշարունակէ գոյութիւն ունենալ, գործել այդ երկրի մէջ,—և այդ՝ մինչև Հայի ամբողջական անհետացումը:

Բայց շատ հեռուն չերթալու համար՝ նկատել տանք, որ նորագոյն ժամանակներունս ՀԱՅԻ ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ այդ ԻՐԱԻՈՒՆՔԸ հանդիսապէս ճանչցուեց և վերարձանագրուեց Բերլինի Դաշնադրութեան 61-րդ յօդուածովը: Հետեաբար՝ Հայի այդ ԻՐԱԻՈՒՆՔԸ ճանաչել և ստորագրել է նո՛յն ինքն Օսմանցին: Եթէ Բերլինի Դաշնագրութեան 61-րդ յօդուածովը ճանչցուեց Հայի ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ այդ երկրի վրայ և նրա ընդարձակութեան մէջ բնակած՝ տիրապետող Հայ տարրի համար բարենորոգումների պէտք նկատուեց՝ «տեղական պահանջներին համեմատ»,—այսպէս Հայի այդ իրաւունքը, իր մարտիրոսացած զաւակների բազկի շնորհիւ, ո՛չ միայն նորից ճանչցուեց և արձանագրուեց 1895 Մայիս 11-ի Ծրագրովը, այլև նորոշուեց, գծագրուեց բարենորոգումների այն ընդհանուր հիմունքները, տրամադրութիւնները և պայմանները, որոնք կարող էին, մոտաւորապէս, բաւականութիւն տալ Հայերի տեղական պահանջներին: Հարաբանութեան մշակած այդ Ծրագրով Հայաստանը ճանչցուեց է մի ձոյլ (bloc) և նրա վրայ ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ անձեռնմխելի ԻՐԱՎՈՒՆՔ ունեցող Հայի ու այնտեղ բնակող ա՛յլ տարասեռների համար որոշուեց է բարենորոգչական այնպիսի հաստատութիւններ, որոնք բոլորովին տարբեր բնատրոփիւն պիտի ունենային՝ Օսմանեան պետութեան միւս անյարակից (incohérent) մասերից:

Մայիս 11-ի Ծրագիրը Հայկական պահանջների և իրաւունքների MAGNA CHARTA-ն է: Նրա գործադրութիւնը կարող է յապաղել, ձգձգուել, քայց ո՛չ թէ մէջտեղից վերցուի: Իրերի ընթացքը, վաղ կամ ուշ, ինքն ի՛սկ նրա րրականացումը անխուսափելի կդարձնի:—Բայց դեռ Հայի բազուկը փշրուած չէ, նա՛ կայ:

Արդ, Օսմանեան խարխլած պետութիւնը վերահաստատելու և նոր հիմունքների վրայ դնելու պատմական կոչումը ստանձնել ուզող «Երիտասարդներ»ի համար՝ ի՞նչ ղեկավարիչ սկզբունքներ պիտի լինէին դէպի այն երկիրը, որ թրքական աշխարհակալած միւս երկրներից տարբերուեց, անջատուեց է ո՛չ միայն ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ՅԵՂԱԳՐԱԿԱՆ տեսակետից, այլև նորի վրայ, անյիշատակ ժամանակներից մինչև այսօր, Հայը իր արդէն անվիճելի ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ ունի և իր անցելով, քաղաքակրթութեամբ, հասարակական ու մասնաւոր ձգտումներով բոլորովին գատ մարմին է կազմում Թիրքիայի իր բախտակից միւս տարրերից և մասերից:—Քանդե՛լ, ոչնչացնե՛լ, ջնջե՛լ, ձուլե՛լ:—Բայց այդ քաղաքականութեան շա՛տ երկար ժամանակներից ի վեր կպած մնացին թէ՛ «Երուսիմներ»ը և թէ՛ իրենց անդրանիկները, և դա ո՛չ մի հետևանք տուեց նոյն ի՛սկ իրենց միտումների տեսակետից: Այդպիսի մի քաղաքականութեան հետևելը այժմս, նախ՝ կլինէր անկարելի, ապարդիւն, ինչպէս անցեալը այդ ցոյց է տուել, և երկրորդ՝ անարդարանալի, նոյն իրենց այն նպատակի հա-

մար, որով առաջնորդուած պիտի գործէին այդ հրէշային, թէև Օսմանեան բռնապետութեան ո՛չ անձանօթ, ոճիրը: Եթէ «Երիտասարդներ»ը կարծում են, թէ թրքական պետութեան բաղկացուցիչ բոլոր օտարասեռ տարրերը ընդհանրապէս և Հայը՝ մասնաւորապէս մի կտոր խմոր, շաղախուելի զանգուած են, որ կարելի է իրենց կամքին և ուզածին պէս կաղապարել, այս ու այն ծաւալով մի արհեստական շրջանակի մէջ դնել,—դա էլ սխալ է, և անցեալը, կրկնուած փորձերը, ինչպէս նաև ուրիշ ազգերի օրինակները ցոյց տուեցին, որ արդարև սխալ է:

Այս բոլորից յետոյ.—որովհետև «Երուսիմներ»ի խիստ բռնապետական, չափազանց կեղոնացման ռեժիմը Օսմանեան պետութիւնը կորստի հասցրեց. որովհետև թրքական կայսրութիւնը բաղկացնող տարասեռ ժողովրդից և անջատ մասեր կազմող երկրներից, հակառակ Բացարձակ Բռնապետականների և Սահմանադրականների կողմից բազմիցս եղած փորձերին, անկարելի է միաձոյլ միութիւն, մի ազգութիւն կազմելու.—ուստի մնում է միայն մի ճանապարհ, որով կարելի է միաժամանակ թէ՛ Օսմանեան կայսրութեան պետական միութիւնը պահպանելու և թէ՛ պայքարող տարասեռ ժողովրդներին գէթ մասնակի բաւականութիւն տալու ու այդպիսով Թիրքիան ընդհանուր անկումից, բաժանումից ազատելու:—Իս այն է՝ որ վերակազմուելիք թրքական պետութեան ընդհանրական հաստատութիւնների նպատակը պիտի լինի ՄԻԱԻՐԱԿԱՆ (unitaire), իսկ միջոցը՝ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԿԱՆ: Եւ այդ նպատակին կարելի է հասնել միայն տարբեր երկրների պատմա-քաղաքական իրաւունքը, աշխարհագրական, ցեղագրական անհատականութիւնները հիմունք ընդունելով՝ տեղական ժողովրդական ընդարձակ ինքնավարական հաստատութիւններ առաջ բերելով և նրանցից ծագող պետական ընդհանուր, միացուցիչ հաստատութիւններ ստեղծելով: Եւ այդ ռեժիմի, այդ հաստատութիւնների ազդակները Թուրքիան ունի:

Ահա՛ հիմնական տարրերը, որ «Երիտասարդ Թիրքիայ»ի ծրագրի խկական մասերը պետի կազմէին. այդ գաղափարներովն է որ ասպարէզ պիտի իջնէին բոլոր «Երիտասարդ»ները՝ սկզբից մինչև այսօր: Այդ էր միակ ուղին, միակ ազդու միջոցը, որով նրանք կարող պիտի լինէին Օսմանեան Բռնապետութեան տակ հեծող թէ՛ համացեղ և թէ՛ օտարացեղ քրիստոնեայ տարրերին հաւասարապէս շահագրգռելու և նրանց գործակցութիւնը խրճողելու պետական ընդհանուր վերաշինութեան գործին մէջ: Եթէ իրենք ցանկացողներ են Օսմանեան համապետական վերանորոգութեանը, իրողութիւնն այն է, որ չգիտեն թէ ի՞նչպէս, ի՞նչ կերպով, քաղաքական ի՞նչ հաստատութիւններով վերանորոգութեան այդ գործը կարելի է իրականացնել:

Ուղիղ գաղափարները ազգեր են՝ կեանքի կանչում և պետութիւններ ստեղծում, իսկ սխալ մտքերի կիրառութիւնները գոյութիւն ունեցող ազգութիւններ են ջնջում և կազմուած պետութիւններն էլ քայքայում:

Այժմ մի կողմ թողնելով խնդրի ընդհանուր կողմը՝ դառնանք Հայաստանին:

Իրերի ստացած դրույթները, պատմութեան որոշ ընթացքը արդէն այն ուղղութիւնն են ընդունել, որ այսօրուայ «Երիտասարդ Թուրքեր»ը, կամայականայ ստիպում են Հայ ազգի և նրա Հայրենիքի ՊԱՏՄԱ-ՔԱՂԱՔԱ-ԿԱՆ իրաւունքը և ԱՆՀԱՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ իբրև ձեռք բերուած, հաստատուած իրողութիւն ընդունելու:

Այստեղ ո՛չ խուսափանք կարող է լինել և ո՛չ էլ երկդիմութիւն:

«Երիտասարդներ»ը կա՛մ այդ պիտի ընդունեն իբրև Հայի արդէն ունեցած իրաւունք, կատարուած մի իրողութիւն և ըստ այնմ որոշեն իրենց պայքարի պայմանները ու հիմունքները՝ ընդդէմ Թուրք Բռնակալութեան, կա՛մ պիտի մտնեն «Երուաններ»ի բանակը և աշխատեն միահամուռ ոյժով պատմութեան ընթացքը շուտ տալ և բոլորովին հակաբնական, իրերի բնատրութեան հակառակ բաղկացութիւններ ստեղծել, եթէ միայն կարող են: Այլապէս՝ եթէ չեն ուզում պատրուակեալ կերպով Սուլթանների թիկնապահների մէջ մտնիլ, և՛ ցանկանում են տիրող միահեծանութեան դէմ մաքառել, այն ժամանակ պարզորոշ կերպով պէտք է ճանաչեն, հաշտի առնեն և իրենց պայքարի հիմունքներից մէկն առնեն Հայի արդէն ձեռք բերուած, նոյն ի՛սկ ճանկցուած իրաւունքը՝ այն է ինքնավար Հայաստանի գաղափարը:

Եւ պատմութեան ընթացքը շատ պարզ է:

«Երուաններ»ը և իրենց նախորդները Հայութիւնը «Կրօնական» մի համայնքի վերածեցին: Հակառակ տիրող տարրին՝ այդ «Կրօնական Համայնքը» ժամանակի ընթացքում կարող եղաւ իր իրաւունքների շրջանակը ընդարձակել և դառնալ «Կրօնա-քաղաքական մի Համայնք»: Պատմական գործոն ոյժերը ասպարէզ մտնելով՝ նրանք «Երիտասարդ Հայեր»ի մէջ մարմնացան և Բերլինի Դաշնադրութեան ճիշդ յօդուածով Հայը քաղաքական կեանքի վերակոչուեց: Իսկ Մայիս 11-ի Ծրագրովը նոյն իսկ որոշուեց քաղաքական կեանքի այն պայմանները, այն հիմունքները, որով պիտի շրջանակուէր Հայկական Վեց Կահանգների՝ Վանի, Կարիսի, Բաղէշի, Տիգրանակերտի, Խարբերդի և Սեբաստիայի մէջ միաձոյլ ապրող և իր ազգային անհատականութիւնը ունեցող Հայութիւնը:

Ուրեմն, եթէ «Երիտասարդ Հայեր»ը և «Երիտասարդ Թուրքեր»ը մի օր ուզեն ձեռք ձեռքի տալ և միահամուռ ոյժերով կոխ մղել տիրող ընդհանուր Բռնակալութեան դէմ,—այդ համագործակցութիւնը պիտի դրուի այնպիսի պայմանների և ուղղութեան վրայ, որ ընդհանրական կոռի նպատակը և հետևանքը լինէր՝ մի կողմից ձեռք բերել մի ինքնավար Հայաստան, իր տեղական քաղաքական ուրոյն հաստատութիւններով, և միւս կողմից՝ ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հաւասար քուէի վրայ հիմնուած Ռամկավարական մի սահմանադրութիւն՝ ամբողջ Թիւրքիայի համար, որից բխած Կեդրոնական Հաստատութիւնը՝ Ընդհանուր Պարլամէնտը կարող լինէր ինքնավար բոլոր երկրների, հետևաբար և՛ Հայաստանի միջև պետական միութիւնը անխախտ պահել:

Ահա՛ իրերի իսկական բնատրութեանը համապատասխան այն միակ միջիւն, իսկապէս չափաւոր և հնարաւոր նախապայմանը, որով պատմական

հողի վրայ կանգնած Հայ Յեղափոխականը կարող պիտի լինի իր գործակցութիւնը տալ «Երիտասարդ Թիւրքիայ»ին և օսմանեան համապետական վերանորոգութեան գաղափարը պաշտպանողներին:

Խնդիրն, ի հարկէ, դեռ ընդհանուր սկզբունքի վրան է. իսկ գալով գործնականին, դեռ բաւական չէ, որ «Երիտասարդ Թուրքեր»ը, անելի կամ նուազ անկեղծութեամբ, բաւերով միայն ընդունեն Հայ Յեղափոխականի պաշտպանած այս հիմնական կէտերը, այլ նրանք նախապէս, որոշ կերպով, այդ ցոյց պիտի տան և՛ գործով՝ իրենց պայքարի ձևերով և ուղղութեամբ,—հակառակ պարագային որևէ յարմարումն (compromis), որևէ գործակցութիւն և համերաշխութիւն չի կարող լինել մեր և նրանց միջև:

Եւ այդ հասկանալի է թէ ինչո՛ւ:

«Երիտասարդ Թիւրքեր»ը մի անգամ ընդմիջտ պէտք է համոզուին, որ առանց Թիւրքիայի բաղկացուցիչ բոլոր տարրերի միահամուռ գործակցութեանը և համերաշխութեանը՝ անկարելի է ամբողջ Թիւրքիան վերանորոգել և նոր հիմունքների վրայ դնել: Իսկ այդ գործակցութիւնը և համերաշխութիւնը պէտք է որ ունենայ իր կանխորոշ պայմանները և նպատակները:

Մենք այստեղ, պարզ է, դեռ չենք խօսում դրսից գալիք դժուարութիւնների մասին: Այսքանը միայն ասենք, որ Սուլթանականութիւնը և իրեն նեցուկը եղող հին ոյժերը՝ առանց օրհասական մարտ մղելու, տեղի չպիտի տան, և այդ միջև այն աստիճան, որ նրանք, ի հարկին, կոչ պիտի առնեն արտաքին օգնութեան. իսկ թէ այդպիսի օգնութեան ընդունակ են զալ դրսի Բեկկիօքեր Ոյժերը,—այդ մասին կասկած անգամ չի կարող լինել. Թուրք պատմութիւնը պատմական այդպիսի դէպքեր շատ ունի արձանագրած: Բոլորովին ուրիշ կը լինի խնդիրը, սակայն, երբ հրապարակ կմտնեն պայքարող այն ժողովուրդները՝ որոնց Դատերը միջազգայնօրէն արդէն ճանկցուած և ստորագրուած են: Այդ դէպքում, և այն դէպքում միայն, ընդհանուր դիւանագիտութիւնը, Արևելեան Խնդրով շահագրգռուող պետութիւնները—որոնք Թիւրքիայի իսկական տերերն են և առանց որոնց ո՛չինչ կարելի է անել—կամայականայ ստիպում պիտի լինեն Թիւրքիան պահելու սկզբունքի վրան համաձայնութիւն կայացնել: Խնդրի այդ մասը այնքան պարզ է, որ չենք ուզում մանրամասնել և պատմական փաստեր մատնանիշել:

Առնենք պատմական մի ա՛յլ երեւոյթ:

X

ՕՍՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱԶԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Օսմանականութիւնը (Օսմանլըք) մի սկզբունք է, որ Թիւրքիայի ներքին քաղաքականութեան տիրող ուղղութիւններից մէկն է համարում: Այդ սկզբունքի իրագործմանն են հետապնդել, մասնատրապէս անցեալ դարու 30-ական թուականներից, ո՛չ միայն թուրք պետական ղեկավարիչ անձնատրութիւնները և «Երուաններ»ը, այլև «Երիտասարդ Թուրքեր»ը. այդ

Ակատմամբ ընդհանուր համաձայնություն է եղել և ամենքը անխտիր, անելի ու նուազ սաստկությամբ, ազգային այդ քաղաքականության շուրջն են դարձել: Օսմանեան Կայսրությունը իր ամրապնդումը և կայունությունը կը գտներ միայն այն ժամանակ, երբ նրա մէջը բովանդակուած ազգութիւնները բոլորը Օսմանցիներ կդառնային կամ օսմանցիներ լինելու գաղափարը կընդունէին վերջնականապէս,—սա էր ղեկավարիչ սկզբունքը:

Օսմանականութեան գաղափարը պաշտպանել և իրագործել են աշխատել ո՛չ միայն քրիստոնեայ ազգութիւնների՝ Հայերի, Յոյների, Բուլղարների, Լալան, Ակատմամբ, այլև մահմեդական ժողովրդների՝ Արաբների, Ալբանացիների, Քիւրդերի, Չերքէզների, Լազերի, Լալան: «Օսմանլըրը» Թրքական անցիօնալիզմի ազդակների մէջ ամենազօրաւոր և առաջին տեղն է բռնել:

Տիրող ընդհանուր համոզմունքն է եղել, որ Թիւրքիայի թուլութեան, նրա մասերի անջատման և դէպի անկումն տանող գլխաւոր պատճառներից մէկն էլ այն իրողութիւնն է եղել, որ այդ երկրի ընդարձակութեան վրայ մեծ ծաւալով գոյություն են ունեցել կեդրոնախոյս զօրութիւններ, որոնք արդիւնք են եղել տարբեր ազգութիւնների գոյութիւն ունենալուն և իրենց կենսականութիւնը պահպանելուն: Ուստի ընդհանուր երևոյթը, արդիւնքը ջնջելու համար՝ պէտք և անհրաժեշտութիւն է տեսնուել վերջացնել ծագում տուող պատճառները: Եւ ի՞նչպէս կարելի էր այդ նպատակին հասնել,—բացարձակ կեդրոնացմամբ՝ այս մասին էլ ընդհանուր համաձայնություն է եղել Թրքական Բացարձակապետութեան ղեկավարիչ ոյժերի, «Օերունի»ների և «Միտասարդ»ների միջև: Օրէնդրական, վարչական, դատարանական ամբողջ մէխանիզմը այդ ուղղությամբ է լարուել և այդ ուղղությամբ էլ բարոզել են Թուրք բոլոր հրապարակախօսները՝ սկսած մոլլայից մինչև հասարակ թերթերի խմբագիրները:

Եւ արդարև, պատմութեան մէջ քիչ չեն եղել օրինակներ, երբ պետական այդպիսի գաղափարներ իրագործուել են և յաջողությամբ էլ գլուխ տարուել: Պատմութիւնը ցոյց է տուել, որ մի պետութեան ընդհանուր մարմնի մէջ մտնող մի կամ մի քանի ազգութիւններ կարելի է ձուլել, կլանել, լրիւ նոյնացնել (assimiler): Եւ այդ լինում է այն ժամանակ, երբ պետական վարիչ ոյժը իր ձեռքին ունեցող, կլանող, ձուլող, նոյնացնող ազգը եղել է անելի՛ զարգացած, անելի՛ ուժեղ, անելի՛ կենսականութիւն ունեցող. իսկ կլանուողը, ձուլուողը, նոյնացնողը, դրա հակառակ, եղել է անելի՛ թուլ, անելի՛ յետամնաց. այնպէս որ այդպիսի պայմաններում դրուած նուաճող ազգութիւնները՝ իրենց մտաւոր. բարոյական և նիւթական շահի տեսակետից՝ անելի նախամեծար են համարել, նոյն իսկ գիտակցաբար, կլանուելու, ձուլուելու, քան թէ առանձին գոյութիւն պահպանելու: Անշուշտ, մի Բրետոնցի, մի Բասքի համար, ամեն տեսակէտով, նախամեծարելի էր կլանուիլ Ֆրանսիական ազգութեան մէջ և Ֆրանսիական պետութեան մի մասնիկը դառնալ, քան թէ ուրոյն դիրք բռնել և իր երկրի ապարածների վրան հաստատուել, կղզիանալ՝ գորկ մտաւորական և քաղաքակրթական ազդակներ:

րից: Ֆրանսիական ազգութեան ծիրի, ոլորտի մէջ մտնելով՝ նա մասնակցում էր համաշխարհային քաղաքակրթութեան և յառաջադիմութեան, քան թէ լճանում՝ մեկուսացած դիրք պահելով:

Գալլերը (Ուլլաները), Սկոտլիացիները Անգլիական ազգութեան մարմնի մէջ մտնելով՝ նիւթապէս և մտաւորապէս անելի շահեցան:

Վեները Գերմանացիներ դառնալով, գերմանականութեան գիրկը մտնելով, անելի օգտուեցան, քան կորցրին:

Որքան որ սա թոյլի իրաւունքը չճանաչելու մի սկզբունք է, բայց այդպէս է եղել պատմութեան ընթացքը մինչև այսօր, թէև այդպէս չի լինի ապագայում:

Սակայն խնդիրն այն է թէ Թիւրքիայի բաղկացուցիչ ազգութիւնները ա՛յդ վիճակի մէջն էին գտնուած: Թուրք ազգութիւնը, Օսմանլըրքի գաղափարների իրագործման հետապնդողները ֆրանսիացիներ՝, անգլիացիներ՝, գերմանացիներ՝ էին:

— Ո՛չ: Պատմութիւնը, իրականութիւնը այնտեղ է՝ խնդրի այս կողմը պարզ կերպով յորշելու համար:

Թիւրքիայի մէջ ամփոփուող, նրա բաղկացուցիչ տարրերը կազմող ազգութիւնները ո՛չ Բրետոններ են, ո՛չ Բասքեր և ո՛չ էլ Վեներ:

Իրականութիւնը այնտեղ է՝ այս կէտն էլ հաստատուելու:

Ի՞նչ է ազգութիւն:

— Մարդիկների մի ամբողջութիւն, որ ունի նո՛յն լեզուն, նո՛յն սովորութիւնները, պատմական նո՛յն անցեալը, նո՛յն ծագումը, Լալան, և օժտուած է բարոյական համանման յատկութիւններով:

Պատմութիւնը, ինչպէս և ընկերաբանութիւնը, ցոյց է տալիս և՛ այն, որ ազգերի կազմուելը, ձևակերպուելը և զարգացումը արուեստական մի ձևակերպութիւն չէ, որ կարելի լինի ուզած ժամանակին, մի քանի վճիռներով և հրամաններով՝ քանդել, ոչնչացնել, լուծել. այլ նրա կազմաւորութիւնը մի այնպիսի բնական երևոյթ է, որի գլխաւոր պայմաններն են ցեղը, հանրական ծագումը, միջավայրը և պատմական այն բոլոր ազդակները, որոնք ձևակերպել, արտադրել, յառաջ են բերել այդ ազգութիւնը: Ամեն ազգ զարգանում է իրեն առանձին յատուկ և պատշաճ՝ էվօլյուցիայովը, որ նրան տալիս է բարոյական և պատմական ա՛յն կազմը, ա՛յն կերտուածքը, ա՛յն շէնքը, հանճարը և առանձնայատուկ գծերը, ինչպէս որ մի կենդանական էակ յաջորդաբար ստեղծում է իր սեպհական օրգանները և իմացականութիւնը: Այդպիսով է որ ամեն ազգ՝ որպէս կազմակերպուած ոյժ՝ ունի իր սեպհական կեանքը, իր ինքնուրոյնութիւնը, իր անհատականութիւնը, որ նրան տարբերում է միւս ազգութիւններից: Այդպիսի համախմբումների մէջ անցեալ սերունդների գործունէութիւնը և մտածմունքը բաղադրում, շաղախում է ներկայ սերունդների հետ և այդպիսով էլ պատրաստում՝ ապագայ սերունդների բախտը:

«Ազգերը,—ասում է Ռընան,—ինչպէս են Ֆրանսիան, Գերմանիան, Անգլիան, գործում են անձերի նման, որոնք ունին բնատրութիւն, միտք և

որոշեալ շահեր. ազգերի մասին կարող են դատել, ինչպէս դատում են մի անձի մասին: Նրանք էլ ունին, ինչպէս մի կենդանի էակ, իրենց էութեան և իրենց պահպանութեան զգացումները, ծածուկ բնագոյր. այնպէս որ՝ քաղաքագետների մտածումներից անկախ, մի ազգութիւն կարելի է համեմատել մի իմացական և խորաթափանց կենդանիի հետ, ինչ որ վերաբերում է իր գոյութիւնը ազատելուն և իր սեռի յարեւանականութիւնը ապահովելուն» (Dialogues et fragments philosophiques, էջ 89):

Արդ, Թիրքիայի մէջ գտնուող ազգերը այս բոլոր յատկանիշները և պայմանները լրիւ ներկայացնում են. ուրեմն և նրանք այլևս անվերածելի են:

Եւ երբ այդպէս, ապա Թիրքիայի մէջ բովանդակուած ազգութիւնները այնպիսի ՔԱՂԱՔԱՅԱՆ ՏԱՐԻՆԵՐ են, որ ո՛չ միայն չի կարելի ջնջել, խորտակել, յալ նրանց անկարելի է անտեսել և հաշտի չառնել՝ երբ հարցը գալիս է ընդհանուր պետական խնդիրներին:

Օսմանականութեան գաղափարը, որպէս փոխառնովի և ուրիշներից անանուելու մի միտք, պարզ բան է որ գոյութեան առանձին իրաւունք չունի. փաստերը, իրողութիւնները այնտեղ են մեր աւածները հաստատելու համար. նա ո՛չ միայն որ և է հող չունի, այլ ժամանակ է հասկանալու, որ նա որևէ չափով իսկ չի էլ կարող իրականութիւն ստանալ, ինչքան էլ որ նրա հեղինակները դէռ յամառին:

Օսմանականութիւնը այն գլխաւոր ազդակներից մէկն է, որ Թուրք հրդեհակետութեան հետ միացած՝ յառաջ են բերում և վառ պահում **անջատականութեան** ոգին: Եթէ բաղկացուցիչ ազգութիւնները կեղորոնախոյս դիրք են ընդունում, այդտեղ պատասխանատուութեան մի մեծ բաժինը ընկնում է Օսմանականութեան գաղափարը իրագործել ձգտողների վրան: Ողոշ է, ուրեմն, որ այդ միտքը և ձգտումը միայն **անհամերաշխութիւն** կարող է ստեղծել և վանողական ոյժ հանդիսանալ ու թոյլ չտալ, որ **ընդհանուր գործակցութիւն** յառաջանայ: Ժամանակը հասել է այդ գաղափարի մեռնելուն և մէջտեղից արմատապէս վերանալուն: Օսմանեան quasi բարեկորոզները, պետական անձնատրութիւնները, անմասնաւոր «Երիտասարդ Թուրքեր» իրենց գլխից մի անգամ ընդմիջտ դուրս պիտի ձգեն անախօսնիզմ եղող այդ միտքը:

Որ այդ այդպէս է, մի կողմ թողնենք ընդհանրութիւնը, և դառնանք հայ ազգութեան:

Հայը ազգ էր, այս բառի քաղաքական իմաստովը, դէռ իր ընկճուելուց և քաղաքական անկախութիւնը կորցնելուց շա՛տ առաջ. նուաճուելուց յետոյ էլ, ինչքան էլ որ դարերու ամէն տառապանքների նա ենթարկուեց, ինչքան որ քանդիչ, կործանիչ ձեռքը նրա վրայ ծանրացաւ, այնուամենայնիւ՝ նա շարունակեց ԱԶԳ մնալ: Հայը շարունակ պահեց իր ազգային կենսունակութիւնը, չկորցրեց իրեն ինքնուրոյնութիւն տուող յատկութիւնները. նա մտաւ եւրոպական քաղաքակրթութեան շարի մէջ, զարգացաւ, աճեց, կուտորապէս բարձրացաւ և թրքական բռնապետութեան տուած քաղաքական,

տնտեսական և ընկերային պայմանները նրա համար այլևս սեղմիչ, ուրեմն և անտանելի դարձան: Ուստի և ինքնասպանութիւն չգործելու համար՝ մի հրամայական անհրաժեշտութեամբ, որպէս իր պատմութեան և կեանքի արդիւնք, նա ձգտեց **Նոր Կեանքի՝ յեղափոխականորէն**:

Ուրեմն, ո՛չ միայն ազգայնորէն նրան այլևս չի կարելի ձուլել, խորտակել, կլանել, և դա շա՛տ բարձր է Օսմանականութեան գաղափարը մարմնացնողների ոյժերից, այլ նրան պէտք է հաշտի առնել, որպէս Թիրքիայի մէջ գոյութիւն ունեցող **քաղաքական մի գորեղ տարր** ու այնպէս ձգտել ընդհանուր Թիրքիայի վերանորոգութեանը:

Օսմանեան պետութեան ամբողջականութիւնը պահպանել ուզող «Երիտասարդ»ները այդ իրողութիւնը անտեսել չեն կարող, փորձեն՝ ինչքան որ կուզեն:

Եւ երբ ազգութիւնները քաղաքական տարրեր են Թիրքիայի մէջ, հասարակ ողջմտութիւնը պահանջում է, որ նրանք գոյութեան առանձնայատուկ պայմաններ էլ ունենան,—իսկ այդ կարելի է միմիայն **քաղաքական կատարեալ ինքնավարութեան** ձևով, և ո՛չ մի ուրիշ սխառեմով. այդ է միակ ուղին, որ ցոյց է տուել պատմութիւնը և յառաջադիմ ազգերի կեանքը:

Ազգերը իրենց գոյութիւնը կարող են ապահովել, պահել ո՛չ միայն **անջատականութեամբ** և կամ առանձին անկախութեամբ, այլ նրանք այդ նպատակին կարող են հասնել և՛ ինքնավարական ձևով, այդ ձեւն էլ նրանց գոյութիւնը կապահովի, նրանց միջոց կուայ զարգանալու, յառաջադիմելու և իրենց ընդունակութիւնները երեսան բերելու համաշխարհային պատմութեան շրջանակի մէջ: Եւ դա այնքան ճշմարիտ է, որ պատմութիւնը շատ օրինակներ ունի տուած, թէ ի՞նչպէս իրենց սեպհական անկախութիւնը արդէն ունեցող ազգութիւններ՝ քաղաքական ինքնավարական սխառեմով՝ միացել, դաշնակցել են իրարու հետ և պետական մի ընդհանուր ոլորտի մէջ մտել:

Ազգերի **ինքնավարական սխառեմը** այն միակ միջոցը և ձեւն է, որով կարելի է Թիրքիային ՆՈՐ կազմ տալ, ՆՈՐ հիմունքների վրայ դնել, պահել նրա ամբողջութիւնը և վանել անջատողական ոգին. հակառակ ճանապարհը կտանի, անապշաբորէն, դէպի անջատումն, դէպի պետական ընդհանուր քայքայումն,—դա է իրականութիւնը:

Պատմութիւնը, նոյնպէս, ցոյց է տալիս, որ քաղաքական հաստատութիւնների փոփոխութիւնները օգտակար և յարատե են լինում միայն այն ժամանակ, երբ նոր ձեւերը արդէն հնի մէջ սաղմնատրուած են լինում: Արդարև, այդպէս էլ եղած է սկզբում Թիրքիայի պետական կեանքը:

Իր պատմութեան սկզբնական օրերում՝ մոլեռանդութիւնից, անհամբերողականութիւնից և իր թուլութիւնից ստիպուած, նա նուաճուած ազգերի համար սեպհական, ազգային հաստատութիւնների սկզբունք էր ընդունել. և այդպիսով էլ իր պետական իրաւունքի մի մասն էր դարձրել ազգերի ինքնուրոյն գոյութեան և սեպհական հաստատութիւնների գաղափարը. հայը ունեցել է և ունի իր շատ սեղմ «**Մահմաճաղութիւն**»ը, որ ինքնավարութեան

մի սաղմն է և այդ սաղմը ո՛չ թէ ջնջել պետք էր, այլ աշխատել անելի ընդարձակել, անելի լայն սահմաններ տալ: Նոյնը և՛ ուրիշ ազգութիւնների նկատմամբ:

Սրանից յետոյ, միջանկեալ կերպով, մի քանի խօսք անելորդ չէ այն երկու գլխաւոր առարկութիւնների նկատմամբ, որ շարունակ կրկնում են ծայրայեղ կեդրոնացման կողմնակիցները և «Երիտասարդ Թիրքիա»:

Նրանք ասում են, որ ինքնավար ազգերը ո՛չ միայն անմիջապէս խաղալիք կոտոնան Թիրքիայի անկմամբ՝ շահագրգռող պետութիւնների ձեռքին, այլև իրենց առաջին ձգտումը կանւն, օգտուելով ներկայացած պայմաններից, բոլորովին զատուել, անջատուել:

Առանց ապագային վերապահուած խնդիրների մասին a priori դատողութիւնները անելու, նկատենք միայն այս. արդեօք ո՞ր ազգերը անելի վտանգաւոր և իրենց բախտը Թիրքիայից իսպառ բաժանողներ կլինին, — ստրկացածները, ամէն տեսակ հարստահարութեանց ենթարկւածները, ապագայնացման դրութեան մէջ ապրողները, թէ՛ կեանքի և գոյքի, մարդկային և ազգային ամէն իրաւունքներ վայելողները, որոնք տէր լինելով օրէնդրական և վարչական իրենց ներքին՝ տեղական գործերին, ամէն միջոց կունենան իրենց ընդունակութիւնները երեսն դնելու իրենց Մայր-Հայրեհիքի մէջ:

Երբ ընդհանուր Թիրքիայի մէջ կատեղծուի տանելի կեդրոնական մի կառավարութիւն և պետութիւնը կանձնաւորի այդ երկրի մէջ ապրող բոլոր ժողովուրդները ու դրուած պետական ընդհանուր օրէնքները արտաբայտիչ կլինին բոլոր ազգերի կամքին, — այն ժամանակ բաժանման, անջատակաւորութեան, օտարի ձեռքին խաղալիք դառնալու երեւոյթները ըստ ինքեան կվերանան և իսկի գոյութիւն չեն էլ կարող ունենալ: Բաղկացուցիչ կազմ ունեցող Նորագոյն Պետութիւնների օրինակները այնտեղ են՝ մեր այս ասածը հաստատելու համար:

Այն միւս առարկութիւնը՝ թէ ինքնավարական սիստէմը յառաջ կրերի պետական ընդհանուր թուլութիւն և միութիւնը կխանգարի — դա, նոյնպէս, շուրջ հայեցակէտ չի ներկայանում: Ժատ հին ժամանակներից սկսած՝ պատմութիւնը ցոյց է տալիս բազմաթիւ օրինակներով, որ ո՛չ միայն ամենից անելի շատ կործանման սաղմեր են ներկայացրել չափազանց կեդրոնացում ունեցող պետութիւնները, այլև միութեան և թուլութեան կողմից նրանք ամենից անելի են տուժել: Ընդհակառակը՝ ուրիշ բազմաթիւ օրինակներ ցոյց են տալիս, որ ինքնավարական կազմ ունեցող երկիրները ամենից անելի են ջանացել, իրենց շահի տեսակէտից, անելի սերտ կերպով կապուելու ընդհանուր հայրենիքի և երկրի հետ, — Անգղիական գաղութները այդ մասին կասկած չեն թողնում, դեռ թողնենք միւս երկրների օրինակները:

Այնպէս որ՝ Թիրքիայի մէջ ինքնավարական ամէն դրութեան հակառակողները այդ երկու կողմից էլ սխալուում են:

Անցնենք մի ուրիշ՝ անելի հետաքրքիր երեւոյթի:

**ԹԻՐԻՔԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ**

Թիրքիայի բախտով մասնաւորապէս շահագրգռուած պետութիւնները՝ իրենց հակամարտ շահերը մի կերպ, գէթ ժամանակաւորապէս, հաշտեցնելու տեսակէտից՝ յաճախ հարկադրուել են յայտարարելու, թէ այդ պետութիւնը պէտք է պահել, որպէս անհրաժեշտութիւն: Բայց հին շրջանակով պահելը անկարելի էր նկատուել, իսկ ՆՈՐ Ի՞նչ ձևի պէտք էր վերածել, — այս է եղած գլխաւոր խնդիրը՝ որ երկար ժամանակ զբաղեցրել է թէ՛ երոպական դիւանագիտութիւնը և թէ՛ անկախ մտքերը: Այդ հարցին, Արևելեան Խնդրի պատմութեան ընթացքում, երկու որոշ պատասխան է տրուել, պատասխաններ՝ որոնցից ամէն մէկը Թիրքիայի ընդհանուր վերաշինութեան մի բնորոշ սիստէմն է ներկայացրել:

Ճրանսիական դիւանագիտութիւնը գլխաւորապէս, սրա հետ յաճախ միացած և՛ Անգղիականը, այն գաղափարն են պաշտպանել, թէ Թիրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը պէտք էր դնել միատեսակ հիմունքների վրայ, այնպէս որ ամբողջ երկրի մէջ պէտք էր միանման և համատեղ բարեկարգութիւններ ներմուծել՝ առանց ամենափոքր անգամ ուշադրութիւն դարձնելու տեղական պայմաններին, ցեղագրութեանը և աշխարհագրական դիրքին ու անցեալին, և այդ պիտի կատարուէր ամենախիստ կեդրոնացումով: Եւ ի՞նչ պիտի լինէր դրա ընդհանուր նպատակը, — այն՝ որ Թիրքիայի բաղկացուցիչ բոլոր ազգութիւնների մասնաւոր արտօնութիւնները և առանձնաշատկութիւնները պիտի ջնջուէին, ամէն տարատեղ տարրեր իրենց գոյութիւնը պիտի կորցնէին և այդ բոլորի արդիւնաբարը պիտի լինէր ընդհանուր ձուլումն և Օսմանեան մի ազգութեան ձևակերպումն:

Ընդհանուր բարեկարգութեան երկրորդ սիստէմը, անելի, առաջարկել և պաշտպանել է Ռուսիան: — Աչքի առաջ ունենալով այն իրողութիւնը, որ Թիրքիայի մէջ ապրում են ո՛չ թէ մէկ, այլ մի քանի տարբեր ազգութիւններ, որոնք իրարուց զանազանում են աշխարհագրական, ցեղագրական պայմաններով, իրենց անցեալով և ունեն տարբեր տեսակի պահանջներ ու ձգտումներ, ուստի ամէն երկրի մէջ բարեկարգութիւններ պիտի մտցնուէր իր տեղական պայմաններին և պահանջներին համեմատ, և այդ կարող էր լինել՝ Ինքնավարութեան սիստէմը ընդունելով, իսկ ինքնավարական երկիրները պէտք էր առնել երոպական երաշխաւորութեան և կօնտրոլի տակ: Ռուսիան բացարձակ կեդրոնացման հակառակ է եղել և դա համարել է անկարելիութիւն ու վնասակար:

Աւելի քան 70 տարի է, որ Թիրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը հրապարակ է դրուել և այդ երկու սիստէմները շարունակ դիւանագիտական ձեռնարկների ու ծանուցագրերի միջոց են կազմել:

Թիրքիան, այս խնդրի մէջ, միշտ յարել է ֆրանսիական ծրագրին, բայց ո՛չ թէ բարեկարգութիւններ իրագործելու, այլ ընդհանուր բարեկար-

գութան դատը պատճառ բռնելով՝ արգելք հանդիսանալ և թոյլ չտալ որ մասնաւոր բարեկարգութիւններ տեղի ունենան, նոյն իսկ այն բարեկարգութիւնները, որոնց իրագործումը ընդհանուր դիւանագիտութեան կողմից, ուրեմն և Ֆրանսիայի ու Անգղիայի, անհրաժեշտութիւն և անյետաձգելի է նկատուել: Ընդհանուր բարեկարգութեան խնդիրը դիւանագիտական մի ճարպիկ խաղ է եղել Թուրք կառավարութեան ձեռքին՝ Եւրոպային խաբելու, նրան զբաղեցնելու, յարուցուած խնդիրները յետաձգել տալու և իր անշարժութիւնը պահելով՝ բողոքող ազգերի ձայնը խեղդելու:

Որովհետև Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան խնդիրը իր պատմութիւնն ունի, ուստի համառօտիւ գծագրենք և՛ այդ, քանի որ այդ հարցը երբեմն երբեմն երևան է գալիս և մտքերի մէջ շփոթութիւն յառաջ բերում:

Մի կողմ թողնելով Սէլիմ III-ի և Մահմուդ II-ի բարեկարգչական ճրգտումները, առնենք նորագոյն ժամանակաշրջանը:

Սուլթան Աբդ-իլ-Մէշիդի օրօք, 1839-ին, Գիլհանէի Հատտի Երիֆով Թիւրքիայի բոլոր հպատակների համար՝ առանց ցեղի և կրօնի խտրութեան՝ հաւասարութիւն, կեանքի և գոյքի ապահովութիւն էր խոստացում: Ի՞նչ եղաւ դրա հետեւանքը:—Ոչի՛նչ, անէլի վնաս, քան օգուտ: Ո՛չ միայն 1839—1856 ընդհանուր բարեկարգութեան տեսակէտով ո՛չինչ չիրագործուեց, այլ Թիւրքիայի բաղկացուցիչ ժողովրդների դրութիւնը և՛ անէլի վատթարացաւ: Ընդհանուր բարեկարգութեան պատրուակի տակ՝ տեղական ինքնավարութիւնները խորտակեցան, խլուեցան՝ այլատեւ տարրերի մասնաւոր արտօնութիւնները և Կեդրոնական Իշխանութիւնը և՛ անէլի զօրեղացաւ ու իր քանիչ շօշափելիքները տարածեց երկրի ամէն կողմերը:

Խրիմի պատերազմով (1854—1856), Ֆրանսիան և Անգղիան Թիւրքիան ազատելուց յետոյ՝ ուզեցին նրա մէջ մտցնել վերանորոգող կեանքի սկզբունքներ: Պարիզի (30 Մարտ, 1856) Դաշնագրութիւնից առաջ՝ Աբդ-իլ-Մէշիդը տուեց ամբողջական բարեկարգումների մի նոր խոստում՝ Հատտի Հիւմայիւնով, 18 Փետրուար 1856: Այդտեղ նորից վերակրկնում էին Գիլհանէի Հատտի Երիֆով եղած խոստումները: Այդ նոյն Հատտի Հիւմայիւնը Պարիզի Կօնգրէսին հաղորդուեցաւ և Դաշնագրութեան մէջը յիշուեցաւ: Եւրոպայի և Թիւրքիայի մէջ մի պայմանագիր կնքուեցաւ—Թիւրքիան խոստանում էր քաղաքակրթուիլ, նոր պետութիւն դառնալ, իսկ Եւրոպան էլ յանձն էր առնում Օսմանեան պետութեան ամբողջականութիւնը պահպանել:

Անցաւ 3 տարի և Հատտի Հիւմայիւնի ո՛չ մի սկզբունքը իրագործուեց: Բաղկացուցիչ ժողովրդների դրութիւնը է՛լ անէլի վատթարացաւ:

Ընդհանուր բարեկարգումները գործադրելու համար, 1859-ին, դիւանագիտական մի արշաւանք սկսուեց: Երբ այդ հետապնդումը շարունակուում էր, 1860-ին, յանկարծ Լիբանանի ճիչը բարձրացաւ:—Լիբանանի մէջ անէլի ամուր կերպով հաստատուելու համար՝ Թուրք կառավարութիւնը Դրուզներին գրգռել, ոտքի էր հանել և կոտորել էր տալիս Մարօնիտներին: Թուրք կառավարութիւնը, 20 տարուց անէլի էր, որ աշխատում էր այդ երկրի մէջ ստեղծել կրօնական և ցեղային հակամարտութիւններ, ուր առաջ այդպի-

սի մի երեւոյթ գոյութիւն չունէր: Պատմական փաստերը եկած էին հաստատելու, որ այդ կոտորածի կազմակերպողը, սադրիչ ոգին և գործադրել տուողը եղած էր ինքը՝ Կեդրոնական Կառավարութիւնը:

Եւրոպայի կողմից, Ֆրանսիայի զինու միջամտութիւնից յետոյ՝ Լիբանանը ստացաւ իր տեղական ինքնավարութիւնը,— մի քրիստոնէայ կառավարիչ՝ ժողովրդից ընտրուած խորհրդականներով, երկիրը պիտի կառավարէր: Տեղական ժանդարմերիան անկախ էր Պոլսոյ Կեդրոնական Կառավարութիւնից: Ընդհանուր քրիստոնէայ կառավարչի նշանակուիլը ենթարկուում էր Մեծ Պետութեանց հաւանութեանը: Ենթոյնի այդ սխտեմի, Թրքական ընդհանուր անապատի մէջ Լիբանանը եղաւ ազատութեան, կեանքի և գոյքի ապահովութեան մի ովասիս:

Ընդհանուր բարեկարգումների արշաւանքը նորից վեկսուեց. դարձեալ անյաջողութիւն:

Աբդ-իլ-Մէշիդը, 1861 ին, մեռնում է և նրան յաջորդում է Աբդ-իլ-Ազիզը: Որովհետեւ երիտասարդ գահակալը, իր շրջապատողներով միասին, բարեկարգչական առանձին միտումներ էր ցոյց տալիս, ուստի դիւանագիտական արշաւանքը դադարեց. ամէնքն էլ մտան սպասողական դիրքի մէջ:

1861—1867 բարեկարգչական մի քանի ձեռնարկներ եղան՝ թղթի վրայ: Իրականութիւնը շարունակեց նոյնը մնալ. ո՛չ մի փոփոխութիւն: Ֆրանսիական մի յայտնի քաղաքական գործակալ՝ (այդ ժամանակուայ իրերի դրութիւնը) այսպէս է պատկերացնում. «Գողանում, սպանում, հրկիզում են թուրք բէկերը. գողանում է քրիստոնէայ առաջնորդը, գողանում է եպիսկոպոսը. գողանում է քահանան, գողանում է դադին, գողանում է միսթիւն, ամէն ոք գողանում է՝ բացի աղանուց, այսինքն բայեալից, որին ամէնքն էլ փետրահան են անում»:

Աբդ-իլ-Մէշիդի աներևոյթս բարեկարգումների աստե՛ն էր, երբ 1861-ին Բօսնիան ապստամբեց:

1866—1868 Կրէտական ապստամբութիւնը տեղի ունեցաւ: Այստեղ էլ, Լիբանանի նման, հաստատուեց տեղական մի սահմանադրութիւն, բայց ո՛չ ժողովրդին բաւականութիւն տալու չափով:

1867-ին ընդհանուր բարեկարգումների խնդիրը դարձեալ դիւանագիտական աշխարհի խորհրդածութեան առարկան է դառնում: Ֆրանսիան առաջադրում է իր պաշտպանած սկզբունքները, Ռուսիան՝ իրենը: Գօրչակովը ռուսական թէզը կեդրոնացնում է հետևեալ եռանդուն երկատածի մէջ. „autonomie ou anatomie“ (ինքնավարութիւն կամ անդամատտութիւն):

Թուրք կառավարութիւնը նորից յարեցաւ ֆրանսիական սխտեմին՝ իր յանձնառութիւններից խուսափելու համար. և այդպիսով, 1867—1870, ո՛չինչ չկատարուեց, թէև այդ ժամանակ ֆրանսիական ազդեցութիւնը տիրապետող էր Թիւրքիայում:

1870-ին Ֆրանսիան այլևս չի խստնում Արևելեան գործերին՝ մեծ չափով:

Թիւրքիայի մէջ ապրող ժողովրդների դրութիւնը երթալով՝ անէլի վատթարանում է:

1875-ին Բօսնիան և Հերցեգովինան ապստամբում են: Գերմանիան, Ռուսիան և Սաւորո-Հունգարիան մշակում են տեղական բարենորոգումների մի համեմատ ծրագիր՝ բացառապէս Բօսնիայի և Հերցեգովինայի մէջ գործադրուելու: Օսմանեան կառավարութիւնը՝ այդ ծրագիրը ի դերեա հանելու դիտումով՝ ընդհանուր բարենորոգումների ծրագիրը մէջտեղ գլորեց և 1875-ի վերջերը Արդ-իւլ-Մէշիդը նախ ստորագրեց մի ֆիրման, յետոյ մէկ իրադէ, որոնցով եռանդուն կերպով վերակրկնում էին 1839-ի և 1856-ի խոստումները.—«Այսուհետեւ ամբողջ կայսրութեան մէջ ժանդարմները պիտի ընտրուեն բացառապէս ամենաազնի մարդիկներից», հաւաստիացնում էր Խալիֆը, ուստի այդ երկու նահանգների համար առանձին ոչինչ չուզեց անել՝ ընդհանրութեանը չվնասելու նկատմով: Հիւսիսի երեք դահլիճները, սակայն, չուզեցին տեղի տալ. նրանք մշակեցին Բերլինի յայտնի memorandum-ը, որին հաւանութիւն տուեցին բոլոր պետութիւնները՝ բացի Անգղիայից: Երբ որոշեալ օրը դեսպանները memorandum-ը պիտի յանձնէին Բ. Դրանը, այնտեղ մարդ չգտան, որովհետեւ նախընթաց գիշերը Սոլթանը զահրընկեց էր եղել.—նրան սպանել էին:

Եկա Մուրատ V-ը. շուտով նրան փոխարինեց Արդ-իւլ-Համիդը, memorandum-ը դարձեալ չյանձնուեց. որոշուեցաւ ժամանակ տալ, որովհետեւ նոր սուլթանը ընդհանուր բարեկարգութիւնների միտում էր ցոյց տալիս և աշխատասէր ու եռանդուն մէկն էր երևում: Այս էր իրերի դրութիւնը գարնանը, երբ Բուլղարական մի քանի նահանգներ, աշնանը, ապստամբեցան. 20 հազար Բուլղար կոտորուել էր. յառաջացել էր ընդհանուր զայրոյթ քաղաքակիրթ աշխարհում. պետութիւնները միջամտել ուզեցին, և 1877-ի դեկտեմբեր ամսին, Պօլսի մէջ, կայացաւ Կոնֆէրանս: Կոնֆէրանսը կազմող լիազօրները բարենորոգումների մի ծրագիր մշակեցին, որ պիտի գործադրուէր միմիայն Բօսնիայում, Հերցեգովինայում և Բուլղարիայում՝ երոպական երաշխատրութեան և վերահսկողութեան տակ: Լրիւ Համաժողովին, ուր ներկայ էին և՛ սուլթանի նախարարները, լիազօրները պատրաստում էին իրենց ծրագիրը պարզելու, երբ յանկարծ թնդանօթները յայտարարեցին որ ամբողջ Թիրքիան սահմանադրական կառավարչութեան էր վերածուել: «Ինչո՞ւ համար տեղական բարենորոգումների մասին էք դուք խօսում, երբ մենք ազատ կառավարութեան բարիքը տալիս ենք բոլորին՝ անխտիր: Այդ մասնաւոր արտօնութիւնները, որոնց մասին խօսում էք, չեն համապատասխանում նոր հաստատութիւնների ամբողջական ներդաշնակութեանը. ինչո՞ւ համար արտօնութիւններ ազատութեան ծոցի մէջ»,—ասում են թուրք ներկայացուցիչները: Լիազօրները թէեւ չհամաձուցեցան, բայց յաջողութիւն էլ չգտան. Կոնֆէրանսը վիժեց: Ռուսիան հեռացաւ Երոպական Համաձայնութիւնից (Concert européen), և Ռուս-Թրքական պատերազմը բացուեց:

Թիրքիան պարտուեց:

Սան Ստեֆանոյի Դաշնադրութեան մէջ ինքնավարութիւնների սկզբունքն ընդունուեց:

Բերլինի Դաշնադրութիւնը այն առաւելութիւնը ունեցաւ Պարիզի Դաշնադրութեան վրայ, որ Թիրքիայի ընդհանուր բարեկարգութեան հարցը չուզեց խնդրի առարկայ անել, և դարձեալ ամէն երկրի տեղական պահանջներից բաւականութիւն տալու սկզբունքն ընդունուեց:

Բերլինի Դաշնադրութիւնից յետոյ՝ Թիրքիայի մէջ վերստին գործել սկսեց ազգայնական քաղաքականութիւնը՝ բուն, մոլի կերպով: Նուաճող ժողովրդների դրութիւնը անտանելի դարձաւ:

1881—1882-ին պետութիւնները հաւաքական ջանքերով աշխատում են Հայկական բարենորոգումները ընդունել տալ, բայց ի գո՛ր: Անգղիան մասնաւոր ջանքեր է թափում, դարձեալ անյաջողութիւն:

1885—1890 Հայկական նահանգները յուզումի մէջ են մտնում: Կարնոյ դէպքից, Գում-Գալուի Աշանուր Յոյցից և Փոքր Հայքի այեկոճումից յետոյ՝ տեղի են ունենում Սասունի շարժումները և արժանաշիշատակ (mémorable) ապստամբութիւնը (1892—1894) ՄՈՒՐԱՏԻ ղեկավարութեամբ: Գծագրում է Մայիս 11-ի (1895) Ծրագիրը, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ ինքնավար Հայաստանի մի միջուկ: Թուրք կառավարութիւնը նորից ընդհանուր բարենորոգութեան խնդիր է յարուցանում: Պետութիւնները չեն համոզում, բայց ճնշիչ միջոցի էլ դիմելու կամք չեն ցոյց տալիս՝ բացի Անգղիայից.—և Ռուսիայի, Գերմանիայի չկամեցողութեամբ՝ Մայիս 11-ի Ծրագիրը գործադրութեան մէջ չի մտնում:

Պաշտօնական Թիրքիան դարձեալ շարունակում է իր կարծեցեալ ընդհանուր բարենորոգութեան խնդիրը: Տեղի են ունենում Հայկական կոտորածները:

1897-ին Կրետէն նորից ապստամբում է. Երոպական միջամտութիւնից և Յունա-Թրքական պատերազմից յետոյ՝ նա ստանում է իր կատարեալ ինքնավարութիւնը:

1902—1903-ին զէնքի է դիմում Մակեդոնիան: Յառաջ է գալիս Միւրց-շըտեզի ծրագիրը, որ իր մէջ ունի ապագայ Ինքնավար Մակեդոնիայի սկզբնաւորութիւնը:

Եւ այսպէս, այս համառօտ գծագրութիւնից դուրս է գալիս հետեւեալ երկու անհերքելի իրողութիւնը.

Առաջին՝ Ընդհանուր Բարենորոգումների խնդիրը թուրք կառավարութեան ձեռքին քաղաքագիտական մի հակակշիռ ծրագիր է եղել, որով նա շարունակ՝ աշխատել է հակառակել բարենորոգչական ինքնավարական սխտեմի գործադրութեանը: Իր գլխաւոր առարկութիւններն են եղել, որ կայսրութեան մէջ ամփոփուած ժողովուրդները անկարող են մէկէն բարենորոգումների շարի մէջ մտնել, ուստի իրերը պէտք չէ աճապարեցնել, այլ միջոց տալ, որ ամէն ինչ աստիճանաբար կատարուի: Բացի դրանից՝ նա առարկել է, որ իր ֆինանսական մասը թող չի տալիս ընդհանուր բարեկարգութիւնները արագացնելու: Եւ այդ երկու առարկութեան գլխաւոր կարգութիւնները արագացնելու: Եւ այդ երկու առարկութեան գլխաւոր նպատակն է եղել միջոց վաստակել, մինչեւ որ կարողանայ իր զինուորական ոյժը վերակազդուրել և տարասեռ ժողովուրդներին իսպառ խորտակել՝

Արանց գոյութիւնը արհամարհելի աստիճանի վերածելու չափ և ընդհանուր օսմանեան ազգութեան գոյութիւնը իրողութիւն դարձնել՝ ամէն ինչ հիմնելով միատարրութեան վրայ:

Երկրորդ՝ Թիրքիայում մինչև ցարդ որ և է դրական և յարատեւող արդիւնք տուել է միայն ինքնավարական սիստեմը: Դրա հետ միասին պատմականօրէն երեսան է եկել և՛ այն, որ տարատեւ ազգութիւնները ա՛յն աստիճան գարգացել են, որ այլեւ անկարելի է Արանց խորտակել, կլանել և և՛ ձուլել, Ամմանաւանը որ տիրող ծամանեան տարրը թէ՛ յետամնաց է և թէ՛ կողտորապէս անելի անգարգացած:

Մի ուրիշ իրողութիւն էլ այն է, որ Թիրքիայի մէջ մինչև ցարդ ինչոր կատարուել է, դա չէ եղել ինքնաբերաբար, այլ դրսից եկած ճնշումի, երոպական պետութեանց միջամտութեան հետեանքով, — որը իր կողմից հետեւանք է եղել դժգոհ ժողովրդների զէնքի դիմելուն և յեղափոխական շարժումներ առաջ բերելուն:

Այսպէս է եղած Թիրքիայի ընդհանուր բարեկարգութեան պատմութիւնը և Արա բնաւորութիւնը, ու դրա համար էլ Թուրք պետութեան գոյութեան երբեմնի ամենաջերմ պաշտպանները և թրքաւերներն անգամ — սկսած Ստրատֆորդ Կաննինգհից մինչև պրոֆ. Վամպերի — ինչպէս և շատ յայտնի քաղաքագէտներ, հրապարակախօսներ և պետական անձնատրութիւններ, յուսահատուել են այդ պետութեան ապագային Արատմամբ և մեր օրերում ի՛նչ յանգել են, մօտաորապէս, հետեւեալ եզրակացութիւններին:

Առաջին՝ ինքն իրեն թողնելով, Թուրք պետութիւնը՝ ինքնաբերաբար և ինքնակամ ո՛չ մի ընդհանուր կամ մասնակի բարեկարգութեան պիտի ձեռնարկի. — Արան պէտք է ստիպել, հարկադրել վերելից եկած մի իշխանութեան որոշմամբ, այն է՝ Եւրոպայի:

Երկրորդ՝ որպէսզի հնարատր լինի երոպական ընդհանուր բոցավառումի առաջն առնել և թոյլ չտալ, որ այդ երկիրը բաժան բաժան լինի և զօրեղ հարեանների կերը դառնայ, ի վնաս ընդհանուր հաւասարակշռութեան, հարկատր է զարգանալու, յտաջադիմելու, քաղաքական մասնատր պայմաններ տալ, ինքնավարութեան ձեռով, սեպհական և պատմական կեանք ու անհատականութիւն ունեցող քաղաքական տարրերին, — այսինքն այն ազգութիւններին, որոնք արդէն վերակազմութեան և զարթնումի մէջ են մտել և իրենց կենսականութեան յայտնի ապացոյցներն են տալիս, և այդ Արա համար որ հետզհետէ սեղմուող, կրճատուող, յետ քաշուող՝ այսօրուան Թիրքիայի տեղ, ժամանակով, երեսան գան փոքրիկ Արա պետութիւններ, տերրիտօրիական Արա բաժանումներով, ու այդպիսով վերջնականապէս Արեւելքը բոլոր Արեւելքցիներին պատկանի և վերջ դրուի Արեւելեան խնդրի մղձաւանջին:

Երրորդ՝ թրքական բռնապետութիւնը ըստ կարելիւն անվնաս դարձնելու՝ Առաճուող ազգութիւններին խորտակելու և երոպական կապիտալիստների այդ երկրում ունեցած շահերը վտանգելու տեսակէտից՝ հաստատել ֆինանսական համատիրապետութիւն (condominium) և այդպիսով

Թիրքիայի վարչական ամբողջ դեկը առնել Վեց Մեծ Պետութեանց ձեռքը: Այս առաջարկը, որ պատմութեան ընթացքում եղել է մի քանի անգամ, վերառաջարկուեց 1897-ին Ֆրանսիայի կողմից, բայց Ռուսիան չհամաձայնեց, թէև որպէս Ասիայի ղեկ դիւանագիտական գործի մէջը կայ:

Նորագոյն այս եզրակացութիւնների կողքին, — որ ըստ էութեան Ասիականների վերակրկնութիւնն է — դեռ գոյութիւն ունի այն Հինը, որի Ապատակն էր, Ասիա, ընդհանուր համաձայնութիւն կայացնել և ապա Թիրքիան բաժանել Վեց Մեծ և Բալքանեան փոքր պետութիւնների միջև, և դրա համար էլ Արանցից ամէն մէկը ո՛չինչ չի խնայում իրեն ապագայ հասանելիքի գումարը և շրջանը և՛ ս անելի ընդարձակելու, — այս Արատմամբ, այժմս, որպէս Արագոյն ազդակ Արեւելեան Խնդրի, մասնատր ջանքերի մէջ է Գերմանիան, միսներիցը արդէն ահագին չափերի հասած լինելով, թէև Արանք էլ չեն դադարում Թիրքիայում իրենց ունեցած քաղաքացիութեան իրաւունքը (droit de cité) և՛ ս անելի զգալի և անվիճելի դարձնելու՝ խաղաղ թափանցումի Արանոր Առաճումներով:

Փաստերը, պատմական անցքերը, այս բոլորից յետոյ, ուրեմն, գալիս են կտու կերպով հաստատելու, որ դեռ այսօր էլ Թիրքիայի Արատմամբ գոյութիւն ունին այն բոլոր արտաքին և Արքին դժուարութիւններն ու խրճիղները, որոնք գոյութեան սկիզբն էին առել դեռ 17-րդ դարու վերջերից՝ այսինքն այն օրից, երբ Թիրքիան հարկադրուեցաւ պաշտպանողական դիրքի մէջ մտնելու և՛ երբ իրեն ժառանգութեան խնդիրը բացուեց: Կատարուած իրողութիւնները ցոյց են տալիս միանգամայն և՛ այն՝ թէ ծագած խնդիրները ի՛նչ ուղղութեամբ են վճռուած:

## XII

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Մինչև այստեղ եղած պատմական վերլուծումներից երևաց, որ 1783-ից մինչև այսօր գոյութիւն ունի ԱՐԵՒԵԼԵԱՆ ԽՆԴԻՐ, որ ո՛չ այլ ինչ է, եթէ ո՛չ Թիրքիայի գոյութեան, ո՛չ գոյութեան և Արա ժառանգութիւնը որոնց ընկնելու խնդիրը: Այդ հարցը ՄԻԶԱԶԳԱՅԻՆ է և միջազգայնօրէն էլ աստիճանաբար վճռուել է, իսկ թէ այդ վճիռը մինչև ո՞ր կհասնի, — դա ապագայի հարց է. մենք միայն ցոյց տուեցինք յարուցուած խնդիրների բնատրութիւնը, ուղղութիւնը, վճռուելու եղանակները և «Երիտասարդ Թիրքիայի» դրանց Արատմամբ բռնած դիրքը՝ սկսած երեսնական թուականներից:

Թիրքիայի գոյութեան և ո՛չ գոյութեան խնդիրը միջազգայնական լինելով, ՄԻԶԱԶԳԱՅԻՆԱԿԱՆ բնատրութիւն են ունեցել Ասիա՝ այն բոլոր Բաղաքական Խնդիրները, որոնք զանազան ժամանակներում յուզուել են այդ պետութեան սահմանների մէջ:

Միջազգայնօրէն է վճռուել Սերբիայի, Յունաստանի, Ռումանիայի, Եգիպտոսի և Բուլղարիայի անջատումը: Միջազգային ընդհանուր հաւա-

նութեամբ և որոշմամբ է հաստատուել Լիբանանի և Կրետէի ինքնավարութիւնը և Սամոս կղզու մասնաւոր Սահմանադրութիւնը:

Միջազգային համաձայնութեամբ են անցել՝ Աւստրո-Հունգարիայի, Ռուսիայի, Ֆրանսիայի, Անգլիայի և Չերնօզօրիայի ձեռքն անցնող հողի այն տարածութիւնները, որոնք երբեմն պատկանում էին Թիրքիային:

Սան-Ստեֆանոյի, Կիպրոսի և Բերլինի Դաշնադրութիւններով ու Մայիս 11-ի (1895) Ծրագրով՝ Հայկական Խնդիրը միջազգային հիմունքներ է ընդունել. նա արդէն Միջազգային խնդիր է և ո՛չ թէ Թիրքիայի ներքին մէկ խնդիրը:

Հայկական շարժումները մինչև ցարդ ունեցել են այն ուղղութիւնը, որպիսի ուղղութիւն որ բողոքող և շարժման մէջ մտնող ազգութիւնների համար արտադրել է Թուրք պետութեան անցեալը և Արեւելեան Խնդրի պատմութիւնը՝ համանման խնդիրների առթիւ:

Հայկական Խնդիրը Արեւելեան Խնդրի ազդակներից մէկն է, նա ամբողջութեան մէկ օղակն է կազմում:

Պատմական խնդիրների ուղղութիւնը և ընթացքը անհատների կամքից կախումն չունի, ինչքան էլ որ նրանք զօրեղ և հանճարեղ լինեն:

Եւ երբ «Երիտասարդ Թիրքիա»ն ուզում է Արեւելեան Խնդիրը տեսնել վճռուած Թիրքիայի մէջ եղող բոլոր ժողովրդների համագործակցութեամբ, մենք մատնանիշում ենք պատմութիւնը, իրականութիւնը և ասում, որ այդ համագործակցութիւնը կարող է յառաջանալ միայն այն պարագային, երբ Թիրքիայի բաղկացուցիչ բոլոր ժողովրդների կանտարեալ ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱԽՈՒՆՔԸ և ընդհանուր Թիրքիայի Ռամկավարական Սահմանադրութիւնը կընդունուի որպէս սկզբունք՝ Թիրքիայի մէջ եղող բոլոր ժողովրդների և կուսակցութիւնների կողմից ու յեղափոխական պայքարը, յեղափոխական գործունէութիւնը այդ ուղղութեամբ առաջ կերթայ:

Հակառակ պարագային՝ ամէն ժողովուրդ իր Դատի հիմունքների վրան պիտի կանգնի, որպէս պատմական անհրաժեշտութիւն և պիտի երթայ այն ուղիով, ինչոր պատմութիւնը արդէն զօն է:



**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

«Երիտասարդ Թուրքիա» աշխատութեան վերահրատարակութեան առթիւ . . . . .	1
Պատմական տեսութիւն . . . . .	7
«Երիտասարդ Թիրքիայ»ի ծագումը . . . . .	9
«Երիտասարդ Թուրքիայ»ի ըմբռումներն ու ծրագիրը . . . . .	12
Պարլամենտական Թիրքիա . . . . .	16
«Երիտասարդ Թիրքիա»ն արտասահմանում . . . . .	17
«Երիտասարդ Թիրքիա»ի միտումները եւ Միդհատի սահմանադրութիւնը . . . . .	20
«Երիտասարդ Թիրքիայ»ի պատմական սխալները . . . . .	23
Թիրքիայի իրական կացութիւնը եւ կազմը . . . . .	38
Հայաստան եւ Թիրքիա . . . . .	40
Փամանակահանութիւն եւ ազգութիւններ . . . . .	45
Թիրքիայի ընդհանուր բարեկարգութեան եւ վերածնութեան խնդիրը . . . . .	51
Հայկական խնդիրը . . . . .	57

**ՍՏԵՓԱՆ ՍԱՊԱՀ-ԳԻՒԼԵԱՆ**

**ԵՐԻՏԱՍԱՐԴ ԹՈՒՐԶԻԱ**

**Պատվեր 541**

**ՀՀ ԳԱ հրատարակչության տպարան,  
875019, Երևան, Մարշալ Բաղրամյանի պող., 24:**

**Տպագրանակ 1500՝**